«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՍԿ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

«Մեսրոպ Մաշտոց համալսարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՄՄՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմում-հայտի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ) և 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանն, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագետների առջև դրված էր երկու խնդիր՝

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից:

Սույն զեկույցն անդրադառնում է ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանն՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշերի ու չափորոշիչների, և գործընկերային գնահատմանը՝ ըստ ԵԲԿՏ ինտեգրվելու բուհի հավակնությունների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Մեսրոպ Մաշտոց համալսարանի (ՄՄՀ) համալսարանի փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

2005-2010 թթ. ՄՄՀ-ի ՄԿԾ -ները հավատարմագրվել են և կրթական ծրագրերին ու համալսարանին շնորհվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անժամկետ հավատարմագրեր 2022թ-ին ՄՄՀ-ն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում, որի համար բուհի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմն անցել է մի շարք վերապատրաստումներ ՈԱԱԿ-ում: Բուհում առաջին անգամ մշակվել է նաև ռազմավարական ծրագիր՝ կատարված SWOT վերլուծության հիման վրա: Փորձագիտական խումբը արձանագրեց, որ բուհում մի շարք կարևոր աշխատանքներ են իրականացվել որակի ապահովման մշակույթի ներդրման, ՄԿԾ-ների մասնագրերի մշակման, ուսումնառության վերջնարդյունքների մշակման, նոր կրթական ծրագրերի ներդման, կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ավելացման, հետազոտության, միջազգայնացման և արտաքին կապերի ստեղծման ուղղությամբ, ինչը հետագա զարգացման լավ հենք է ստեղծում:

ՄՄՀ-ի իսնստիտուցիոնալ հաատարմագրման ողջ գործընթացի ընթացքում փորձագիտական խումբը հաշվի է առել բոլոր հնարավոր սուբյկտիվ և օբյեկտիվ գործոնները, որոնք կարող էին ազդել ՄՄՀ-ի բնականոն և արդյունավետ գործունեության վրա, մասնավորապես 2020թ-ի կորոնավիրուսի համավարակը, հետագայում Արցախյան 44-օրյա պատերազմն իր աղետաբեր հետևանքներով՝ մարդկային կորուստներով, ինչպես նաև ստեղծված տնտեսական և ֆինանսական խնդիրներով:

Մեսրոպ Մաշտոց համալսարանը Արցախի հանրապետությունում գործող մասնավոր բուհ է, որն ունի մոտ 615 ուսանող, որոնք կրթություն են ստանում 6-րդ և 7-րդ կրթական մակարդակների ուսուցման առկա և հեռակա համակարգերում:

ՄՄՀ-ն իրականացնում է 10 առկա և հեռակա բակալավրական և 11 առկա և հեռակա մագիստրոսական ծրագրեր երկու ֆակուլտետներում՝ Հումանիտար և Տնտեսաիրավագիտական:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության մեջ ներկայացված ՄԿԾ-ների մասնագրերի մշակում՝ համապատասխան ուսումնառության վերջնարդյունքների ձևակերպմամբ և քարտեզագրումներով, ուսումնական պլանների վերանայում: Ուսումնական պլանների վերանայումը անհրաժեշտության դեպքում իրականացվում է տարեկան կտրվածքով՝ հիմնվելով ուսանողների շրջանում հարցումների, փորձուսուցման ավարտին անցկացվող կլոր սեղանների քննարկումների արդյունքների վրա:

Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է տարածել տվյալ ՄԿԾ-ների փորձը բուհում իրականացվող մյուս կրթական ծրագրերի մշակման ընթացքում: ՄՄՀ-ում դեռևս առկա չեն մագիստրոսական ծրագրերի ՄԿԾ-ներ, որտեղ ձևակերպված կլինեն ուսումնառության վերջնարդյունքները, ինչը հնարավորությունը կտա ապահովել բակալավրական և մագիստրոսական ծրագրերի փոխկապակցվածությունը և շարունակականությունը:

ՄԿԾ-ները և դրանց իրականացման մեխանիզմների դիտարկումը վեր է հանում մի շարք դրական կողմեր, ինչպես օրինակ՝ հետազոտական բաղադրիչի ներմուծումը, անգլերենի խորացված ուսուցումը մի քանի կրթական ծրագրերի շրջանակում, ֆակուլտատիվ դասընթացների տրամադրումը, տարբեր գիտակրթական կենտրոնների հետ համագործակցությունը և այլն: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները ընտրվում են տվյալ կրթական ծրագրի շնորհած մասնագիտությանը համահունչ և դրանց մեծ մասում առկա է հետազատական բաղադրիչ:

ՄՄՀ-ում մշակվել է «ՄՄՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգ», որտեղ սահմանված են ՊԴ կազմին ներկայացվող պահանջները: Թեև այդ պահանջները ձևակերպված չեն կոնկրետ կրթական ծրագրերի համար, ընդհանուր առմամբ, ամբիոնների դասախոսական կազմերի ցանկը ցույց է տալիս, որ նրանց որակավորումները համապատասխանում են տվյալ մասնագիտության կրթական ծրագրին: Այնուամենայնիվ, ՄՄՀ-ն ՊԴ կազմի կայունության պահպանման խնդիր ունի, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ այլ բուհերում աշխատանքի անցնելը, 44-օրյա պատերազմից հետո Արցախից մեկնելը և այլն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն փաստը, որ բուհը կարևորում է գիտական աստիճան ունեցող դասախոսներով ՊԴ կազմի համալրումը՝ առաջարկելով համեմատաբար բարձր աշխատավարձ: Դա անշուշտ կնպաստի նաև բուհի հետզոտական գործունեությանը: Ներկայումս ՊԴ կազմի գիտական կոչում ունեցող հաստիքային դասախոսների թիվը զիջում է համատեղությամբ աշխատող դասախոսների թվին, սակայն վերջին տարիներին այդ հարաբերակցությունը դրական առումով փոխվել է, քանի որ բուհի ղեկավարությունն այս առումով քայլեր է ձեռնարկել: Բուհը ՊԴ կազմի հետ կնքում է տարեկան պայմանագրեր: Թեև ըստ կանոնակարգի ՊԴ կազմը պետք է ընտրվի մրցույթային կամ ոչ մրցույթային կարգով, իրականում գործում է ոչ մրցույթային կարգը: Պայմանագիրը կնքվում է՝ հիմնվելով դասախոսի կատարած աշխատանքի վերլուծության արդյունքների վրա, կամ եթե նոր հաստիքի անհրաժեշտություն է ծագում:

Դրական փաստ է նաև ՊԴ կազմի որակի գնահատման համար մի շարք գործիքների կիրառումը, ինչպես օրինակ՝ ուսանողների շրջանում անանուն հարցումները, դասալսումները, բաց դասերը, դասախոսի ինքնավերլուծությունը և ամբիոնի վարիչի հաշվետվությունը:

ՄՄՀ-ում իրականացվում են ՊԴ կազմի վերապատրաստումներ, սակայն դրանք իրավիճակային են և կանոնակարգված չեն: Մյուս կողմից դրական փաստ է, որ ՊԴ կազմը հաճախ մասնակցում է վերապատրաստումների սեփական նախաձեռնությամբ: Դատելով անցկացված դասալսումներից և ուսանողների հետ հանդիպումներից՝ կարելի է եզրակացնել որ ներկայում ՄՄՀ-ի ՊԴ կազմի մի մասը՝ այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետները, մեթոդական վերապատրաստման կարիք ունեն, մասնավորապես իրենց դասավանդման գործընթացում ուսանողակենտրոն մեթոդների ներդրման առումով: Բուհն

ունի սահմանափակ նյութատեխնիկական ռեսուրսներ, ոչ բավարար ենթակառուցվածքներ բավարարելու առկա և հեռակա բաժիններում միաժամանակ իրականացնելու կրթական ծրագրերը: Բուհն ունի կահավորված լսարաններ, սակայն դրանց քանակը և նյութատեխնիկական հագեցվածությունը ևս բարելավման կարիք ունի:

Դատելով կրթական ծրագրերի իրականացման գործընթացներից և արդյունքներից՝ ուսումնական պլաններ, առարկայական նկարագրեր, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ, փորձուսուցման կազմակերպում, ավարտական աշխատանքների պաշտպանություն, ինչպես նաև այդ ծրագրերի իրականացումը ապահովող ՊԴ կազմի մասնագիտական որակավորումներից՝ կարելի է եզրակացնել, որ ՄՄՀ-ն շնորհում է արժանահավատ որակավորումներ, իսկ առկա խնդիրներն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

ՄՄՀ-ի 2019-2023 թթ. Ռազմավարական ծրագրում սահմանված են բուհի առաքելությունը, նպատակները և տեսլականը: Բուհը ձգտում է պատրաստել որակյալ մասնագետներ, առաջարկել արտաքին և ներքին շահակիցների կարիքները բավարարող, կրթական կատարելագործված տեխնոլոգիաներին և դասավանդման մեթոդներին հենված կիրառական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող մրցունակ կրթական ծրագրեր՝ համահունչ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին և որակավորումների ազգային շրջանակին, արագ արձագանքել պետության ու հասարակության կողմից առաջադրված խնդիրներին, ունենալ բավարար նյութատեխնիկական միջոցներ և ընթացակարգեր պարբերաբար բարելավման և կատարելագործման համար, ստեղծել գիտագործնական հարթակներ արցախյան գիտական մտքի արտահայտման համար՝ նպաստելով Արցախի Հանրապետության անկախության ճանաչմանը և պետության կայացմանն ու զարգացմանը: Հաշվի առնելով Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները և դրա արդյունքում ստեղծված ֆինանսական, անվտանգային և ժողովրդագրական իրավիճակը, կարելի է վերոնշյալ տեսլականը համարել որոշ չափով անիրատեսական և վերաձևակերպման կարիք ունեցող:

Ռազմավարական ծրագրում բուհի նպատակները սահմանվել են հակիրճ՝ մի քանի դրույթով և դրանց իրականացմանն ուղղված միջոցառումները ձևակերպված են Ռազմավարական ծրագրի ներդրման պլանում, որի մեջ սահմանված որոշ արդյունքներ չափելի չեն: Մարդկային ու ֆինանսական ռեսուրսների սահմանափակումներով պայմանավորված ռազմավարական նպատակների որոշ դրույթներ ևս կարող են անիրագործելի լինել նշված ժամանակահատվածի համար, հետևաբար պետք է վերաձևակերպվեն միջնաժամկետ առաջնահերթությունները: Հարկ է մշակել զարգացման մի քանի սցենարներ և դրանցում ներկայացնել նաև դրանց իրագործման ռիսկերի գնահատում: Բուհի բոլոր օղակների հաշվետվությունները պետք է հիմնված լինեն ՌԾ-ի իրականացման գնահատմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ համալսարանը փորձում է հնարավորիս իրականացնել ռազմավարական նպատակները՝ արձագանքելով պետության և հասարակության կարիքներին՝ մշակելով նոր ՄԿԾ-ներ, առաջարկելով լրացուցիչ դասընթացներ և կազմակերպելով միջազգային գիտաժողովներ:

Դրական է գնահատվում նաև այն, որ ՄՄՀ-ում մշակվել են մի շարք կանոնակարգեր և կարգեր՝ համակարգելու կրթական գործընթացը և տարբեր ստորաբաժանումների աշխատանքը:

Համալսարանի կառավարումն իրականացվում է կոլեգիալ հիմունքներով՝ Հիմնադիրների խորհրդի, Գիտական խորհրդի և Ռեկտորատի որոշումների միջոցով: Հիմնադիրների խորհուրդը կազմված է երկու, Ռեկտորատը՝ 9, իսկ Գիտական խորհուրդը՝ 30 անդամից: Գիտական խորհրդում և ֆակուլտետների խորհուրդներում ընդգրկված են ՊԴ կազմի և ուսանողների ներկայացուցիչներ:

Պայմանավորված ուսանողների թվաքանակի նվազմամբ և ֆինանսական հնարավորությունների սահմանափակությամբ ՄՄՀ-ում իրականացվել է կառուցվածքային օպտիմալացում՝ ֆակուլտետների միավորում, արտաքին կապերի գծով պրոռեկտորի պաշտոնի չեղարկում, մի քանի գիտական կենտրոնների միավորումը մեկ՝ Կովկասագիտություն կենտրոնի շրջանակում: Մյուս կողմից ստեղծվել է ՆՈԱԿ-ը՝ Ներքին որակի ապահովման կենտրոնը: Համալսարանն ունի սահմանափակ վարչական և ուսումնաօժանդակ կազմ, ինչը հանգեցնում է վարչական կազմի գերզբաղվածության. ստորաբաժանումները ունեն միայն ղեկավարներ, որոնք իրականացնում են բազմաթիվ գործառույթներ, այդ թվում նաև գիտամանկավարժական: Ոչ միայն ֆինասական միջոցների սղությունը, այլև աշխատանքի նման բաշխումը կարող է խոչընդոտել Ռազմավարական ծրագրի լիարժեք իրականացմանը: Ընդհանուր առմամբ, բուհի ղեկավարությունը փորձում է գտնել իրավիճակային լուծումներ, ինչը փաստում է, որ չկա հստակ ռազմավարական պլանավորում՝ ռիսկերի հաշվառմամբ: Վերջինս հույժ կարևոր է Արցախի համատեքստում, երբ իրավիճակը կարող է յուրաքանչյուր պահի փոխվել:

Բուհի ղեկավարությունը չի իրականացնում գործող ՄԿԾ-ների ֆինանսական շահավետության վերլուծություն, իսկ որոշ ՄԿԾ-ների մրցունակությունը բարձր չէ: Նման վերլուծությունը կարող է նպաստել բյուջեի արդյունավետ պլանավորմանը՝ մասնավորապես մրցունակ կրթական ծրագրերի զարգացման առումով:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ հաշվետու ժամանակահատվածում ՄՄՀ-ն որակի ապահովման ներքին մեխանիզմների ներդրման մեծ և կարևոր քայլեր է ձեռնարկել: Հիմնվել է ՆՈԱԿ-ը, որի կողմից մշակվել է որակի ներքին ապահովման համակարգի գործարկման մեթոդական հիմք հանդիսացող Որակի ապահովման ձեռնարկը: ՆՈԱ կենտրոնը հետևում է բուհի և ֆակուլտետների ռազմավարական ծրագրերի իրականացմանը և բոլոր ստորաբաժանումների հաշվետվողականության իրականացմանը: ՆՈԱԿ-ի ղեկավարը ակտիվորեն վերահսկել է ՄԿԾ-ների մասնագրերի, ուսումնառության վերջնարդյունքների, ուսումնական պլանների և առարկայական նկարագրերի մշակման գործընթացը, կազմակերպել ՊԴ կազմի և ուսանողների անանուն հարցումներ կրթական գործընթացի արդյանավետության և դրանից բավարարվածության վերաբերյալ, կազմակերպել ֆոկուս-խմբեր, վերլուծել փորձուսուցումների արդքունքներն ամփոփոխ հաշվետվությունները և ապահովել հետադարձ կապը ամբիոնների վարիչների և վարչական այլ աշխատողների հետ:

Որպես կարևոր դրական միտում կարելի է մատնանշել ՄՄՀ-ի ձգտումը արդյունավետորեն իրականացնելու ՊԻԳԲ շրջափուլը կրթական ծրագրերի առումով: Թեև

առաջին շրջափուլը դեռևս ավարտված չէ և հնարավոր չէ տալ վերջնական գնահատական, բայց գովելի է, որ բուհը որակի գնահատումը կատարում է պարբերաբար տարեկան կտրվածքով և փորձում անհրաժեշտ բարելավումներն իրականացնել ուսումնական ծրագրերում՝ առանց սպասելու մեկ շրջափուլի ավարտին:

Ինչևէ, որակի ապահովման քաղաքականությունը դեռևս ամբողջապես կապակցված չէ ռազմավարական կառավարման հետ և չի ընդգրկում ՄՄՀ-ի գործունեության բոլոր ուղղությունները, ինչպես օրինակ՝ գիտական հետազոտություն կամ համալսարանի ղեկավարում:

ՄՈՒՀ-ը ռեսուրսներ է հատկացնում ՈԱԱԿ-ի աշխատաժողովների և ՆՈԱԿ-ի կողմից կազմակերպվող միջոցառումների ժամանակ կադրերի վերապատրաստման համար: Համալսարանը տրամադրում է բոլոր անհրաժեշտ նյութական և տեխնիկական ռեսուրսները, որոնք կենտրոնը խնդրել է, ներառյալ ծրագրային ապահովումը դիմորդների, ուսանողների, անձնակազմի և շրջանավարտների հետ հարցումներ անցկացնելու համար: ՆՈԱԿ-ը գործիքներ է մշակել դասախոսներին, ուսանողներին , ՄԿԾ-ներին, հետազոտություններին վերաբերվող:

Սակայն դեռևս չկա վերլուծություն, թե որքանով են առանձին գործընթացները, մեխանիզմները, ընթացակարգերն ու գործիքները արդյունավետ: Անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել վարչական անձնակազմի ներկայացրած հաշվետվությունների համապատասխանությանը Ռազմավարական ծրագրի ներդրման պլանին և դրանցում վերլուծական բաղադրիչի առկայությանը:

Անհրաժեշտ է նաև որակի ապահովման գործընթացներում ավելի ակտիվորեն ներգրավել ՊԴ կազմին և ուսանողներին՝ չթողնելով ամբողջ բեռը ՆՈԱԿ-ի ղեկավարի և այլ վարչական պաշտոն զբաղեցողների վրա, որպեսզի որակի մշակույթը լիարժեք ձևավորվի և կայանա բուհում: Ներքին շահակիցների իրազեկվածության բարձրացումը համարվում է ամենամեծ մարտահրավերը որակի մշակույթի արդյունավետ զարգացման գործընթացում: Այս առումով կարիք կա նախաձեռնելու ներհամալսարանական քննարկում որակի ապահովման քաղաքականության, որակի ներքին ապահովման համակարգի ու դրա արդյունքների մասին:

ՄՄՀ-ում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործընթացների կանոնակարգվում են և ընդհանուր պետական իրավական փաստաթղթերով, և բուհի ներքին կանոնակարգերով: Այսպես՝ առաջին կուրս հեռակա ընդունված ուսանողին հնարավորություն է տրվում ազատ ունկնդրի կարգավիճակով հաճախել առկա դասերին և հաճախումների 80 տոկոսը ապահովելու դեպքում մասնակցել քննություններին և տեղափոխվել առկա բաժին:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման համար ՄՄՀ-ում անցկացվում են ուսանողական անանուն հարցումներ, ֆոկուս խմբեր, քննարկումներ: Ուսանողները իրենց խնդիրները կարողանում են բարձրաձայնել ուսանողական խորհրդի միջոցով, նրանք ընդգրկված են համալսարանի գիտխորհրդում և ֆակուլտետների խորհուրդներում: Իրենց անձնական խնդիրները կարող են բարձրաձայնել նաև ամբիոններում և դեկանատներում, քանի որ բուհը փոքր է, այս առումով ավելի մտերմիկ միջավայր է ստեղծում և ավելի ճկուն քաղաքականություն է վարում: Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական խորհրդի աշխատանքներին և կազմակերպած միջոցառումներին մասնակցություն չեն ունենում հիմնականում հեռակա բաժնի ուսանողները, ինչը պայմանավորված է այն փաստով, որ նրանք աշխատում են, և սոցիալական խնդիրների լուծումը նրանց համար առաջնահերթություն է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՄՄՀ-ն ուսանողներին տրամադրում է ֆակուլտատիվ և լրացուցիչ դասընթացների, խորհրդատվությունների

մասնակցելու հնարավորություն, փորձում է բարձրացնել հետազոտական աշխատանք իրականացնելու մոտիվացիան՝ խրախուսելով բուհում, ինչպես նաև Արցախի և ՀՀ այլ բուհերում կազմակերպված գիտաժողովներին նրանց մասնակցությունը: Շվեյցարիայի հարավկովկասյան հիմնադրամի օժանդակությամբ կազմակերպել է նաև նրանց արտագա փորձուսուցումը ՀՀ-ում, մասնավորապես ԵՊՀ և Հայ-ռուսական համալսարանում: ՄՄՀ-ի ուսանողները, սակայն, չունեն շարժունության այլ ծրագրերի մասնակցելու հնարավորություն՝ պայմանավորված Արցախի Հանրապետության կարգավիճակով, ինչպես նաև համալսարանի ֆինանսական հնարավորություններով:

Հարկ է նշել, որ հետազոտության խթանումը տարիներ շարունակ եղել է ՄՄՀ-ի գերակա նպատակներից մեկը: ՄՄՀ-ին հաջողվել է ապահովել միջազգային գիտաժողովների պարբերաբար կազմակերպումը բուհի, ինչպես նաև հիմնադրամների միջոցների ներգրավմամբ: Վերջին տարիներին բուհը նաև սահմանել է իր հետազոտական առաջնահերթությունը՝ Կովկասագիտությունը, ինչը ՄՄՀ-ի նման համալսարանի համար կարևոր է, քանի որ հնարավորություն է տալիս կենտրոնացնել գիտական ներուժը և սակավ միջոցները: Դրական է նաև այն փաստը, որ ՄՄՀ-ի բոլոր ամբիոնները ընտրել են իրենց գիտահետազոտական առաջնահերթությունները, ինչը դարձյալ օգնում է օպտիմալ օգտագործել սահմանափակ հնարավորությունները:

ՄՄՀ-ի ՊԴ կազմը ակտիվ է «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» պարբերականում գիտական հոդվածներ տպագրելու, բայց այդքան էլ ակտիվ չէ ՀՀ, ՌԴ և արտերկրի պարբերականներում տպագրելու առումով: Դա կարելի բացատրել նաև ՊԴ կազմի անգլերենի իմացության ցածր մակարդակով, և բուհն այդ ուղղությամբ աշխատանքներ ունի անելու: Ավելին, բուհում չեն գործում նաև գիտական աշխատանքների որակի գնահատման մեխանիզմներ: Փորձագիտական խումբը կարծում է, որ այստեղ որակի ապահովման մեխանիզմների ներդրման կարիք կա:

Փորձագիտական խումբը գտնում է, որ գիտական աշխատանքների որակի բարձրացումը կարող է մեծապես նպաստել բուհի միջազգայանացմանը: Բնական է, որ դա բուհի միջազգայնացման կարևոր, բայց ոչ միակ գրավականն է: Իր գործունեության տարիների ընթացքում ՄՄՀ-ն ձգտել է ստեղծել միջազգային կապեր արտերկրի բուհերի հետ, ինչին նպաստել են բուհում կազմակերպված միջազգային գիտաժողովները: Բացի հայաստանյան բուհերից, ՄՄՀ-ին հաջողվել է համագործակցության պայմանագրեր կնքել ՌԴ բուհերի, ինչպես նաև չճանաչված պետությունների բուհերի հետ: Այնուամենայնիվ, բուհը դեռևս չի կարողանում ապահովել ՊԴ կազմի և ուսանողների շարժունությունը, ինչը ևս միջազգայնացման կարևոր բաղադրիչ է: Թեև շարժունության սահմանափակությունը պայմանավորված է օբյեկտիվ գործոններով, հնարավոր է ապահովել ներքին շարժունություն, օրինակ ՀՀ-ում և Արցախում գործող բուհերի միջև, ինչի համար անհրաժեշտ է ծրագրերի համապատասխանեցում, այլ բուհերի ծրագրերի վերջնարդյունքների ընդունում և համապատասխան պայմանագրերի կնքում:

ՄՄՀ-ն քայլեր է ձեռնարկում արտաքին կապերի ստեղծման ուղղությամբ ևս: Գիտական և արտաքին կապերի գծով պրոռեկտորի պաշտոնի չեղարկումից հետո այդ գործառույթն իրականացնում է Կարիերայի կենտրոնի ղեկավարը: Բուհը պայմանագրեր է կնքում այլ կազմակերպությունների հետ փորձուսուցման անցկացման նպատակով: Բացի այդ, համաձայն պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ որոշ պայմանագրերի, տրամադրում է

լրացուցիչ դասընթացներ, օրինակ՝ աղրբեջաներենի ուսուցման և այլն: Այս համատեքստում հարկ է նշել, որ ՄՄՀ-ին անհրաժեշտ է մշակել միջազգայնացմանը և արտաքին կապերին վերաբերող առանձին քաղաքականություն, որը հնարավորություն կտա համակարգելու կատարվող աշխատանքները, որպեսզի դրանք չկրեն իրավիճակային բնույթ:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Ըստ շնորհվող որակավորումների մանրամասն նկարագրված բակալավրական ՄԿԾ-ներ:
2. Արցախի ռազմավարական կարիքներին համահունչ նոր մասնագիտությունների իրականացում:
3. Թիմային աշխատանք ուղղված բուհի առաքելության և նպատակների իրականացմանը
4. Մոտիվացված և բուհին նվիրված ՊԴ կազմ
5. Կապեր ԱՀ, ՀՀ և օտարերկրյա բուհերի հետ
6. Բուհի արտաքին կապերի անընդհատ զարգացում
7. Կովկասագիտության գիտական կենտրոնի առկայություն
8. Հետազոտական աշխատանքների խթանում
9. Հասարակությանը կարճաժամկետ ծրագրերի և այլ ծառայությունների մատուցում
10. Ներքին որակի ապահովման ներդրված համակարգ
11. Գործունեության թափանցիկություն կայքի և սոցցանցերի միջոցով:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Առաքելության, նպատակների և դրանց իրականացման համար առկա ռեսուրսների միջև անհամապատասխանություն
2. Իրավիճակային կառավարում, թույլ ռազմավարական կառավարում, ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի բացակայություն
3. Անբարենպաստ շենքային պայմաններ և սահմանափակ նյութատեխնիկական ռեսուրսներ:
4. Մագիստրոսական կրթական ծրագրերի մասնագրերի բացակայություն
5. Դասախոսների և ուսանողների օտար լեզուների ոչ բավարար իմացություն
6. Կառավարման մարմիններում և որակի ապահովման գործընթացներում հեռակա ուսուցման ուսանողների ներգրավվածության բացակայություն
7. Կայքում անգլալեզու տեղեկատվության բացակայություն:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Վերանայել բուհի տեսլականը, այն դարձնելով առավել չափելի և հասանելի: Դրա հիման վրա փոփոխություններ կատարել Ռազմավարական ծրագրում: Քանի որ ՌԾ-ի ավարտին մեկ տարի է մնում, կարելի է այդ փոփոխությունները կատարել գործառնական պլանում, իսկ նոր ՌԾ-ի մշակումը դնել ավելի իրատեսական հիմքերի վրա՝ հաշվի առնելով Արցախի Հանրապետության մարտահրավերներն ու վտանգները:
2. Բարելավել ՌԾ-ի ներդրման պլանի ձևաչափը, որում բացի նպատակներից, խնդիրներից, գործողությունների պատասխանատուներից, նշված կլինեն ակնկալվող վերջնարդյունքները և դրանց իրականացումը ստուգող քանակական և որակական ցուցիչները:

Կառավարումն ու վարչարարությունը

3. Յուրաքանչյուր տարվա համար ՌԾ-ի հիման վրա նպատակահարմար է մշակել գործառնական պլան ակնկալվող վերջնարդյունքներով և կատարողականի քանակական և որակական ցուցիչներով, ինչպես ամբողջ բուհի, այնպես էլ ստորաբաժանումների համար:
4. Ժամանակակից համաշխարհային և տարածաշրջանային զարգացումների համատեքստում նպատակահարմար է յուրաքանչյուր տարի վերագնահատել ռազմավարական ծրագիրն ու դրա իրականացման մարտավարությունը:
5. Իրականացնել ՄԿԾ-ների շահութաբերության գնահատում և ըստ այդմ կատարել բյուջեի ռազմավարական պլանավորում:
6. Ստորաբաժանումների հաշվետվություններն իրականացնել ըստ ԳԱՑ-երի:
7. Մշակել մշտադիտարկման պլան, որի արդյունքները ֆիքսված պարբերականությամբ պետք է ներկայացվեն շահակիցներին և կառավարման մարմիններին:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. Վերանայել կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքները և շրջանավարտի կոմպետենցիաները:
9. Կրճատել բակալավրիատի ուսումնական պլաններում առարկաների թվաքանակը, ինչը հնարավորություն կտա վերանայել կրեդիտների բաշխվածությունն ըստ դասընթացների, համապատասխանացնել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները վերջնարդյունքներին:
10. Հստակեցնել հանձնարարականների ծավալը ըստ կրեդիտի (ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամաքանակի): Դա կբերի կրեդիտիների արժանահավատության բարձրացման:
11. Հնարավորության դեպքում ընդլայնել կամընտրական դասընթացների ցանկը և վերանայել դրանց բովանդակությունը, որպեսզի դրանք միտված լինեն նախապատրաստելու փորձուսուցմանը և ապահովելու հավելյալ փոխանցելի հմտություններ և կոմպետենցիաներ:

12. Օգտվել առցանց հարթակների (օրինակ՝ Coursera) դասընթացների հնարավորություններից՝ համապատասխան ռեսուրսներ ներդնելով բաժանորդագրման համար:
13. Ընդլայնել փորձուսուցման բազաները ՄԿԾ-ների համար: Հնարավորության դեպքում փորձուսուցումը կազմակերպել նաև գյուղական դպրոցներում, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ծանոթանալ դրանց խնդիրներին և այնտեղ դասապրոցեսի կազմակերպման առանձնահատկություններին:

Ուսանողները

14. Բարելավել ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավման մեխանիզմները՝ նպաստելով վերլուծական մտքի զարգացմանը և հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքների քանակական և որակական աճին:
15. Բարելավել ՈՒԽ աշխատանքները առավել շատ ուսանողներ ներգրավելու (այդ թվում հեռակա ուսուցման ուսանողներ) և ուսանողների կարիքների բացահայտման աշխատանքներ իրականացնելու տեսանկյունից:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Մշակել ՊԴ կազմի վերապատրաստումների կարգ՝ համակարգելու աշխատանքները:
17. Կազմակերպել ՊԴ կազմի վերապատրաստում՝ դասավանդման և ուսումնառության արդի ուսանողակենտրոն մեթոդներ թեմայով:
18. Վերանայել դասավանդումից ուսանողների բավարարվածության հարցումների բովանդակությունը՝ տարանջատելով մասնագիտական և մանկավարժական բլոկների:
19. ՄԿԾ-երում սահմանել դասախոսներին ներկայացվող մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների պահանջներ:
20. Մեծ տեղ հատկացնել առցանց դասախոսությունների կազմակերպմանը ՀՀ-ից և արտերկրից մասնագետների ներգրավմամբ:

Հետազոտությունը և զարգացումը

21. Մշակել բուհի հետազոտական աշխատանքների զարգացման և ընդլայնման երկարաժամկետ հեռանկարային ծրագիր:
22. Մշակել իրականացված հետազոտությունների որակի գնահատման մեխանիզմներ և գործիքակազմ:
23. ՊԴ կազմի համար կազմակերպել անգլերենի դասընթացներ, որոնք կնպաստեն օտար լեզվով գիտական աշխատանքներ հրապարակելուն, հետևաբար նաև դրանց միջազգայնացմանը:
24. աշխատանքներ իրականացնել նոր դրամաշնորհներ ստանալու կամ նոր հիմնադրամների հետ համագործակցելու համար՝ պահպանելու միջազգային գիտաժողովների կազմակերպման շարունակականությունը:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

25. Ապահովել մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնասիրության վրա հիմնված կարիքների գնահատման և դրա հիման վրա ռեսուրսների կիրառելիության արդյունավետության գնահատման մեխանիզմները:

26. Ներդնել բուհի գործընթացների կառավարման ավտոմատացման համակարգեր, ինչը կնպաստի կառավարման և վարչարարության գործընթացի որակի բարելավմանը:
27. Ավելացնել արդի մասնագիտական գրականությունը՝ առաջնություն տալով ՄԿԾ-ում նշված հիմնական գրականության ցանկին:
28. Ապահովել ՀՀ և միջազգային տարբեր էլեկտրոնային գրադարանների հասանելիությունը ուսանողների և ՊԴ կազմի համար:
29. Հագեցնել լսարանները, լաբորատորիաները նորագույն տեխնոլոգիաներով:
30. Ձեռնարկել միջոցառումներ հատուկ կարիք ունեցող շահակիցների համար:

Հասարակական պատասխանատվությունը

31. Ուսումնասիրել հասարակությանը գիտելիքի փոխանցման տեղական և միջազգային փորձը: Շարունակել զարգացնել հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմները՝ նպաստելով բուհի գործունեության մասին տեղեկացվածության և դրա մրցունակության բարձրացմանը:
32. Ներգրավել բուհը տեղական և միջազգային կիրառական նշանակության այն ծրագրերում, որոնք ունեն հետազոտական բաղադրիչ:
33. Բարելավել հաշվետվողականության համակարգը՝ դարձնելով այն առավել վերլուծական:
34. Օգտագործել ուսանողների ներուժը՝ համալսարանի կայքէջում նյութերի անգլերեն թարգմանության համար:
35. Կառուցել իրավաբանական կլինիկա, որտեղ անվճար հիմունքներով ծառայություններ կմատուցվի հասարակությանը, ինչը կնպաստի նաև ապագայում փորձառու մասնագետներ պատրաստելու գործընթացին:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

36. Իրականացնել բենչմարքինգ միջազգային բուհերի քաղաքականությունների և ընթացակարգերի հետ:
37. Աշխատակազմի շրջանում անգլերեն լեզվի իմացության բարելավում; Վերապատրաստումների գործընթացն ավարտել լեզվի իմացության մակարդակի ատեստավորմամբ:
38. Շարունակել զարգացնել ՄՈՒՀ-ի կայքէջի անգլերեն և ռուսերեն բաժինները՝ հանրայնացնելով միջազգային կապերը և տրամադրելով մեջբերումներ իր աշխատանքի մասին գործընկերներից և հյուր խոսնակներից:
39. Բուհում միջազգային գործընթացների իրականացման համար ստորաբաժանման առկայությունը կնպաստի առավել համակարգված ու պլանավորված աշխատանքին, սահմանված նպատակների իրականացման համար:
40. ՀՀ և/կամ չճանաչված երկրների բուհերի հետ, հնարավորության սահմաններում, մշակել և իրականացնել համատեղ կրթական ծրագրեր: Ակտիվացնել ներքին շահակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին:
41. Ապահովել դրամաշնորհներ գրելու հմտություններ ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակազմի շրջանում: Դիմել նոր դրամաշնորհային ծրագրերի ներդրումներ իրականացնելու համար:
42. Հրավիրել Սփյուռքի հայտնի շրջանավարտներին որպես հրավիրված դասախոսներ, փորձագետներ:

Որակի ներքին ապահովման համակարգը

43. Շարունակել ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի շրջանակներում անձնակազմի զարգացումը:
44. Շարունակել օգտագործել այլ հաստատությունների հետ բենչամարքինգի գործիքը:
45. Ավելի ակտիվ ներգրավել ուսանողներին ՈԱ գործընթացներին, մասնակից դարձնել նրանց ՈԱ աշխատախմբի աշխատանքին:
46. Ստեղծել տվյալների բազա, որոնք հիմնված կլինեն վերանայված ՌԾ-ի ԳԱՑ-երի վրա և հնարավորություն կտան մշտադիտարկել ՌԾ կատարողականը և արդյունքները: Դրանք հատկապես կնպաստեն ՄԿԾ բարելավման վերաբերյալ անընդհատ տեղեկատվության հավաքագրմանը, բավարար հիմքեր կստեղծեն դրանց ներքին և արտաքին գնահատման համար:
47. Շարունակել խթանել համալսարանի ՈԱ քաղաքականությունը՝ համալսարանի կայքում հրապարակելով ՈԱ ձեռնարկը և բաժինների հաշվետվությունները:
48. Որակի ներքին ապահովման կենտրոնի (ՆՈԱԿ) աշխատանքը դարձնել ավելի տեսանելի արտաքին շահակիցների համար՝ կայքում ներկայացված ավելի շատ տեղեկություններով: Կարևոր է ցույց տալ ՈԱ-ի ազդեցությունը դասավանդման և ուսուցման վրա:
49. Հրապարակել ՈԱ հայտարարությունները համալսարանի կայքում՝ ցույց տալու ստորաբաժանման հստակ քաղաքականությունն ու ընթացակարգերը:

Լիլիթ Բաղալյան

Փորձագիտական խմբի ղեկավար

18 հուլիսի 2022 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Երբ գնահատում ենք, թե արդյոք համալսարանը կարող է ինտեգրվել ԵԲԿՏ-ին, կարևոր է հաշվի առնել և՛ արտաքին միջավայրը, որը դուրս է համալսարանի վերահսկողությունից, և՛ ներքին միջավայրն ու քաղաքականությունը, որը համալսարանը կարող է զարգացնել և վերահսկել: Ելնելով ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված ինքնավերլուծության զեկույցից և SWOT վերլուծություններից, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած քննարկումներից՝ մենք կարող ենք նշել արտաքին միջավայրից մի քանի խնդիրներ, որոնք բացասաբար են ազդում այս տեսանկյունից.

1. Արցախի Հանրապետության ճանաչված չլինելը;
2. Օրենսդրական փոփոխություններ Արցախի Հանրապետության կրթության ոլորտում;
3. Պատերազմի պատճառով օտարերկրյա ուսանողների թվի կրճատում:

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ համալսարանը նույնիսկ այս դժվարին պայմաններում ներառել է միջազգայնացումը որպես 2019-2023 թվականների ռազմավարական ծրագրի կարևոր մաս և փորձել է հետևել դրան: Մինչև 2020 թվականի պատերազմը ՄՈՒՀ-ը համագործակցել է ՀԿՇՀ-ի (Հարավային Կովկասի շվեյցարական հիմնադրամ) հետ և միասին իրականացրել 13 համատեղ նախագիծ, ներառյալ օտարերկրյա մասնագետների ներգրավումը կրթական ծրագրերի մշակման ընթացքում, մոդուլային ծրագրերի այլընտրանքային դասընթացները, ուսանողների և անձնակազմի միջազգային գործուղումները, միջազգային գիտաժողովների կազմակերպումը: ԼՂՀ-ում ԿԽՄԿ առաքելության հետ համագործակցության համաձայնագիրը ներառում էր անձնակազմի համար լեզվի ուսուցման դասընթացներ:

Համալսարանն արդյունավետ համագործակցություն է զարգացրել Ռուսաստանի և Հայաստանի տարբեր բուհերի հետ: ՄՈՒՀ-ի ռեկտորը «Եվրոպայի ռեկտորների ակումբի» անդամ է: Համալսարանը համագործակցության 8 պայմանագիր է կնքել տարբեր բուհերի և կազմակերպությունների հետ: Որոշ ծրագրերի դասավանդմանը մասնակցում են օտարերկրյա դասախոսներ, իսկ ՄՈՒՀ-ի դասախոսները դասավանդում են նաև այլ բուհերում: Կովկասագիտության կենտրոնի աշխատակիցները ՄՈՒՀ-ում կազմակերպել են միջազգային գիտաժողովներ, ինչպես նաև մասնակցել են տարբեր միջազգային գիտաժողովների: Համալսարանը նախատեսում է ևս մեկ միջազգային գիտաժողով 2023 թվականին:

Խնդիրներից մեկը, որին պետք է անդրադառնա համալսարանը, անձնակազմի և ուսանողների շրջանում անգլերենի իմացության մակարդակն է: Ներկայումս այն կազմում է ընդամենը 27%: Եթե համալսարանը ցանկանում է ինտեգրվել ԵԲԿՏ-ին, ապա պետք է բարձրացնի այդ մակարդակը: Այն նաև հնարավորություն կտա դասախոսներին օգտվել բաց աղբյուրներից անգլերենով: Նշենք, որ Կովկասագիտության բաժնի ուսանողները տիրապետում են 5 լեզուների, և գործատուները բարձր են գնահատում նրանց գիտելիքների մակարդակը:

Օտարերկրյա ուսանողների համար բոլոր փաստաթղթերը պատրաստվում են ռուսերենով և անգլերենով:

Համալսարանը միջազգայնորեն խթանելու համար այն պետք է վերամշակի կայքը և ներառի ավելի շատ տեսողական և համատեքստային տեղեկատվություն: Դասընթացների, նախագծերի, շարժունության մասին լրացուցիչ տեղեկություններ պետք է տրամադրվեն անգլերենով: Ուսանողների ներկայիս շարժունությունը բավականին սահմանափակ է, և համալսարանը պետք է դիտարկի առցանց շարժունությունը որպես տարբերակներից մեկը:

Համալսարանը մշակել և ներդրել է որակի ներքին ապահովման համակարգ, որը ԵԲԿՏ-ում ընդգրկվելու անհրաժեշտ մասն է: Դրա հիմքում է ՈՆԱԿ-ը, որը հիմնադրվել է 2018 թվականին: Այն մշակել է իր քաղաքականությունն ու ընթացակարգերը և հրապարակել ՈԱ ձեռնարկը 2020 թվականին: Կենտրոնն ուղարկել է անձնակազմին ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվածին վերապատրաստումներին, մշակել է իր սեփական զարգացման սեմինարները և աջակցել անձնակազմին ՄԿԾ-ների մշակման գործում: Նրանք նաև ներգրավում են ներքին և արտաքին շահակիցներին ՄԿԾ-ների գնահատման, մշակման և կատարելագործման մեջ:

Խորհրդատվություն

Ինչպես նշվեց դիտարկումներում, համալսարանը կարող է միայն ազդել ԵԲԿՏ-ում ընդգրկվելու իր հեռանկարների ներքին դիրքի և միջավայրի վրա: ՄՈՒՀ-ն ակտիվ մասնակցում է միջազգայնացմանը և ձգտում է զարգացնել ռազմավարական հարաբերությունները տարբեր բուհերի հետ: Փորձագիտական խումբը միջազգայնացման համար առաջարկում է.

1. Աշխատակազմի շրջանում անգլերենի իմացության բարելավում;
2. Շարունակել զարգացնել ՄՈՒՀ-ի կայքի անգլերեն և ռուսերեն բաժինները՝ հանրայնացնելով միջազգային կապերը և տրամադրելով մեջբերումներ իր աշխատանքի մասին գործընկերներից և հյուր խոսնակներից;
3. Իրականացնել բենչմարքինգ միջազգային քաղաքականությունների և ընթացակարգերի հետ:

Փորձագիտական խումբը նաև նշում է, որ համալսարանը մշակել և ներդրել է ՈՆԱ համակարգը, տրամադրում է ռեսուրսներ իր աշխատանքի և անձնակազմի զարգացման համար:
Որակի ապահովման վերաբերյալ փորձագիտական խումբն առաջարկում է.

1. Շարունակել ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի շրջանակներում անձնակազմի զարգացումը;
2. Շարունակել օգտագործել EDS-ի բենչամարքինգ այլ հաստատությունների հետ;
3. Շարունակել խթանել համալսարանի ՈԱ քաղաքականությունը՝ համալսարանի կայքում հրապարակելով ՈԱ ձեռնարկը և բաժինների հաշվետվությունները:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Մեսրոպ Մաշտոց համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից[1].

1. **Լիլիթ Բաղալյան՝** Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, Հայաստան:
2. **Ինևա Պոմորինա՝** Բաթ բիզնես դպրոցի դոցենտ (Բաթ Սպա համալսարան), տնտեսագիտության դոկտոր, Մեծ Բրիտանիա:
3. **Լիլիթ Զաքարյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստան:
4. **Մարիամ Գևորգյան՝** Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պետ, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, փիլիսոփայության դոկտոր, Հայաստան:
5. **Ալլա Սարգսյան՝** Գավառի պետական համալսարանի «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագրի մագիստրանտ, Հայաստան:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ***Անահիտ Ութմազյանը***

Թարգմանությունը կատարել է՝ ***Քրիստինե Օհանյանը***

Արձանագրությունները կազմել է՝ ***Եվենա Հարությունյանը***

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, համակարգողը և թարգմանիչը ստորագրել են գաղտնիության պարտավորագիր և շահերի բախման բացառման հայտարարագիր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Մեսրոպ Մաշտոց համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականները

ՈԱԱԿ-ի և ՄՄՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի ժամանակացույցը: Սակայն

COVID-19 համավարակով, պատերազմով և ռազմական դրությամբ պայմանավորված հավատարմագրման գործընթացը ընդհատվել է: 2021թ. սեպտեմբերի 14-ին Համալսարանը դիմել է գործընթացը վերսկսելու խնդրանքով: Արդյունքում վերանայվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի նոր ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում համալսարանը, ըստ Հավատարմագրման կարգով հաստատված ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության հայերեն և անգլերեն տարբերակները, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթները: Համալսարանի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ռեկտորի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:
Խմբում ներգրավված են եղել ներկայացուցիչներ բուհի վարչական, ուսումնական, պրոֆեսորադասախոսական համակազմից, ինչպես նաև՝ ուսանողներ և շրջանավարտներ: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև ինքնավերլուծությունն ու կից փաստաթղթերի փաթեթը և համալսարանի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը տրամադրվել են փորձագիտական խմբին:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ը փորձագետների հետ քննարկել են ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշներն ու չափորոշիչները, փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները, նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները, հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով ՄՄՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ սահմանված ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]:

Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և այլն:

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

Նախնական այց

2022 թվականի մայիսի 1-ին տեղի է ունեցել նախնական հանդիպում ՄՄՀ-ում: Հանդիպման ժամանակ համալսարանի հետ քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Նախնական այցի ընթացքում փորձագիտական խմբի անդամներն իրականացրել են նաև համալսարանի ռեսուրսների ու ենթակառուցվածքների դիտարկում: Միջազգային փորձագետը ռեսուրսները դիտարկել է ՈԱԱԿ-ի կողմից պատրաստված տեսանյութերի միջոցով:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցին նախորդել է փորձագիտական խմբի առցանց փակ հանդիպումը, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ.-ի մայիսի 2-ից 5-ն ընկած ժամանակահատվածում: Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը: Փորձագիտական այցին և քննարկումներին միջազգային փորձագետը միացել է առցանց տարբերակով: Կիրառվել է Zoom հարթակը:

Փորձագիտական այցը սկսվել է ՄՄՀ-ի ռեկտորի և ավարտվել ՄՄՀ-ի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Իրականացվել են այցի ժամանակացույցով նախատեսված բոլոր հանդիպումները և փաստաթղթերի ուսումնասիրությունը[3]: Այցի ընթացքում տեղի են ունեցել մասնագիտական հանդիպումներ ՄՄՀ-ի կողմից առաջադրված 3 կրթական ծրագրի շրջանակներում՝ «Կովկասագիտություն», «Իրավագիտություն» և «Անգլերեն լեզու և գրականություն»: Փորձագետներն՝ ըստ իրենց մասնագիտական ուղղվածության, զուգահեռ հանդիպումներ են ունեցել տվյալ կրթական ծրագրի պատասխանատուի, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ, ինչպես նաև այցելել են պրակտիկաների անցկացման վայրեր, իրականացրել դասալսումներ: Նախքան փորձագիտական այցը փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են առարկայական ծրագրերը, ուսանողներին տրվող հանձնարարականները՝ պարզելու, թե որքանով են հանձնարարականները միտված ծրագրով սահմանված վերջնարդյունքի ձեռքբերմանը:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված փորձագիտական խմբի ամփոփիչ հանդիպումների ժամանակ: Խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների

[3] Հավելված 3. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական գնահատումը կատարվել է՝ ըստ չափանիշների, գնահատման երկաստիճան սանդղակով՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրսբերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը ՈԱԱԿ-ի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք ու խորհրդատվություններ: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում:

Նախնական զեկույցը ներկայացվել է ՄՄՀ-ին 24.06.2022թ.-ին:

Մեսրոպ Մաշտոց Համալսարանը 2022թ. հուլիսի 2-ին հայտնել է, որ փորձագիտական զեկույցում ներկայացված փաստերի և դիտողությունների հետ լիովին հաձայն է, զեկույցի հիմնավորումների վերաբերյալ առարկություններ չունի:

Վերջնական փորձագիտական զեկույցը հաստատվել է փորձագետների կողմից և ներկայացվել է ուսումնական հաստատությանը 18.07.2022թ.:

Անահիտ Ութմազյան

Գործընթացի համակարգող

18 հուլիսի 2022 թ.

բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական գնահատումը կատարվել է՝ ըստ չափանիշների, գնահատման երկաստիճան սանդղակով՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը զեկույցի նախնական տարբերակը պատրաստել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում: Քննարկումներից հետո դուրսբերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը ՈԱԱԿ-ի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք ու խորհրդատվություններ: Փաստաթղթերը թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբին: Գործընկերային գնահատման կարծիքն ամբողջությամբ ներառվել է զեկույցի տեքստում:

Նախնական զեկույցը ներկայացվել է ՄՄՀ-ին 24.06.2022թ.-ին:

Մեսրոպ Մաշտոց Համալսարանը 2022թ. հուլիսի 2-ին հայտնել է, որ փորձագիտական զեկույցում ներկայացված փաստերի և դիտողությունների հետ լիովին հաձայն է, զեկույցի հիմնավորումների վերաբերյալ առարկություններ չունի:

Վերջնական փորձագիտական զեկույցը հաստատվել է փորձագետների կողմից և ներկայացվել է ուսումնական հաստատությանը 18.07.2022թ.:

Անահիտ Ութմազյան

Գործընթացի համակարգող

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. Մեսրոպ Մաշտոց Համալսարանը (ՄՄՀ) ԼՂՀ առաջին ոչ պետական բուհերից է, հիմնադրվել է 1996թ.: Համալսարանն առաջնորդվում է «Անել այն ամենը, ինչ կարող է օգուտ բերել երկրին» նշանաբանով: Համալսարանն իր մրցակցային առավելությունն է համարում ինքնավարությունը և շարժունակությունը, որը հնարավորություն է տվել արագ կողմնորոշվել և բացել այնպիսի մասնագիտություններ, որոնք պահանջված են աշխատաշուկայում: 2002 թ. ԼՂՀ-ում՝ Մեսրոպ Մաշտոց համալսարանում, բացվել են նոր մասնագիտություններ՝ «Տեղեկատվական համակարգեր տնտեսագիտության մեջ», «Կառավարում», «Ավտոմատացված համակարգի ծրագրային ապահովում»: Այնուհետև բացել է «Կովկասագիտություն» բաժինը, պատրաստվումն է բացել «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունները: 2005-2010 թթ. ՄՄՀ-ի ՄԿԾ -ները հավատարմագրվել են և կրթական ծրագրերին ու համալսարանին շնորհվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անժամկետ հավատարմագրեր

Կրթություն. Մեսրոպ Մաշտոց համալսարանը Արցախի Հանրապետությունն ունի մոտ 615 ուսանող, որոնք կրթություն են ստանում որակավորումների ազգային շրջանակի 6-րդ և 7-րդ կրթական մակարդակների ուսուցման առկա և հեռակա համակարգերում: ՄՄՀ-ն իրականացնում է 10 առկա և հեռակա բակալավրական և 11 առկա և հեռակա մագիստրոսական ծրագրեր երկու ֆակուլտետներում՝ Հումանիտար և Տնտեսաիրավագիտական: ՄՄՀ-ն պատրաստում է մասնագետներ տեղեկատվական տեխնոլոգիաների, կառավարման, իրավունքի, հումանիտար գիտությունների ոլորտներում: Մինչև 2018-2019 ուսումնական տարին ՄՄՀ-ն մշակված և հաստատված ՄԿԾ-ներ չի ունեցել: Այնուհետև իրականացվող բակալավրիական կրթական ծրագրերի համար ամբիոնները, համագործակցելով ՆՈԱԿ-ի հետ, մշակել են մասնագիտությունների ակնկալվող վերջնարդյունքները, որոնք համահունչ են համալսարանի որդեգրած առաքելությանը և համադրելի են ՈԱԾ-ի հետ: Բուհը կարևորում է մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ ունենալը, դաշտում առկա լավագույն մասնագետներին ներգրավելը և պահպանելը, ինչպես նաև սահուն սերնդափոխություն իրականացնելը: Կրթության որակի բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից հրավիրվում են բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

Հետազոտություն. ՄՄՀ-ն կարևորելով հետզոտության գործունը ՄՈՒՀ-ում ընդգրկել է այդ գաղափարը իր տեսլականի մեջ՝ ստեղծել գիտագործնական հարթակներ արցախյան ակադեմիական մտքի արտահայտման համար՝ նպաստելով Արցախի Հանրապետության անկախության ճանաչմանը: Այս պարագայում ՄՄՀ-ն նաև ձգտում է ձևավորել հետազոտությունների բնագավառում արտաքին շահառուների հետ համագործակցության հարթակներ՝ ի նպաստ պետության և տարածաշրջանի զարգացմանը: ՄՄՀ-ում գործում է Կովկասագիտության կենտրոնը, որն ունի իր զարգացման հայեցակարգը: Այն 3 հետազոտական

հարթակների միավորման արդյունքում է ստեղծվել: Որպես առանձին կարույց, բուհում գործում է նաև Ուսանողական գիտական ընկերությունը, որի գործունեությունը կանոնակարգված է: Որակյալ հետազոտություններ իրականացման համար ՄՈՒՀ-ը ձգտնում է հստակեցնել հիմնական գիտական ուղղությունները, որոնց իրականացումը նպաստում է գիտական գործունեության ծավալմանն ու զարգացմանը:

Միջազգայնացում. ՄՄՀ-ի ատրաքին կապերը և միջազգայնացումը բխում է համալսարանի առաքելությունից :Համալսարանի նպատակներից է աջակցել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ հաշվի առնելով արտաքին շահակիցների պահանջները և ապահովելով համապատասխան կարողություններով շրջանավարտներ: Համալսարանը կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմի և ներքին շահակիցների համատեղ գիտահետազոտական գործունեությունն՝ ընդգծելով տարածաշրջանի խնդիրների վերհանումը և դրանց լուծման ուղիները: Լինելով իր երկիրն ԱՊՀ-ում և արտասահմանում ներկայացնող ՄՈՒՀ՝ ստեղծում է գիտագործնական հարթակներ արցախյան գիտական մտքի արտահայտման համար և նպաստում է Արցախի Հանրապետության անկախության ճանաչմանը: ՄՄՀ-ում անգլերեն լեզվի խորացված ուսուցումը տրամադրվում է «Կառավարում», «Տեղեկատվական համակարգեր», «Ինֆորմատիկա /համակարգչային գիտություններ/», «Անգլերեն լեզու և գրականություն», «Կովկասագիտություն» ՄԿԾ-ի ուսանողներին: Ադրբեջաներենի խորացված ուսուցումը՝ «Կովկասագիտություն» ՄԿԾ-ի ուսանողներին: Ռուսաց լեզվին տիրապետում են համալսարանի ամբողջ ուսանողներն ու դասախոսները: Մագիստրատուրայի մասնագիտական անգլերենը դասավանդվում է ըստ կրթական մակարդակի:

Որակի ապահովում. ՄՈՒՀ-ում որակի ներքին ապահովման համակարգի ներդրման աշխատանքները սկսվել են 2018-2019 թթ. և այդ գործընթացների ապահովման միջոցառումները ընդգրկված են 2019-2023 թթ. Ռազմավարական ծրագրի ներդրման պլանի մեջ: Գործընթացը համակարգելու նպատակով ստեղծվել է Ներքին որակի ապահովման կենտրոն, որի առաքելությունն է նպաստել ՄՄՀ-ում որակի մշակույթի ձևավորմանը՝ հիմնվելով փոխադարձ վստահության և կայուն արժեհամակարգի վրա: ՆՈԱԿ-ն իր կարճատև գործունեության ընթացքում մշակել և ներդրել է ՈԱ մեխանիզմներ և գործիքակազմ: Համալսարանը ստեղծում է կրթական միջավայր, որը միտված է սովորողի ու դասավանդողի ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական գործունեության համալիր ձևավորմանը, ինչպես նաև նորարարության և ստեղծագործ մտքի խրախուսմանը: ՈԱ համակարգը հիմնված է երեք հիմնական սկզբունքների՝ ազնվության, անաչառության և իրազեկության վրա: ՈԱ համակարգ

Աղբյուր. վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 **ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:**

Մեսրոպ Մաշտոց համալսարանը հիմնադրվել է 1996թ.-ին: Առաջին ՄԿԾ-ները ինքնաբուխ (սպոնտան) են ընտրվել, սակայն ժամանակի ընթացքում բուհի ղեկավար կազմը սկսել է ուսումնասիրել աշխատաշուկան և ներդրել ավելի պահանջված մասնագիտություններ: Բուհը հավատարմագրվել է մի քանի մասնագիտություններ 2005-2008 թթ. գործող ընթացակարգով: ՄՄՀ-ն իր ծրագրերն իրականացնում է ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներին համապատասխան: Բուհն իրեն ներկայացնում է որպես ուսանողակենտրոն համալսարան:

Ներկայումս բուհն իր գործունեությունը ծավալում է 2013 թ. հաստատված Կանոնադրությամբ: Համալսարանը 2014-2018թթ. մշակել է զարգացման հայեցակարգ: Համալսարանի նոր տեսլականը ամբողջացվել է 2018 թ., արվել է SWOT վերլուծություն և բուհի ուժեղ կողմերի և հնարավորությունների հաշվառմամբ մշակվել է 2019-2023 թթ. ռազմավարական ծրագիրը (ՌԾ): Այն ներառում է բուհի նպատակներն ու առաքելությունը, ինչպես նաև տեսլականը: Բուհի նշանաբանն է՝ «Անել այն ամենը, ինչ կարող է օգուտ բերել երկրին»:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ SWOT վերլուծությունն արվել է խմբային մտագրոհով, որի ընթացքում վերհանվել են բուհի խնդիրները: Ռազմավարական ծրագրում բուհի տեսլականը սահմանված է 10 կետով, որոնց մի մասը անիրագործելի է դարձել Արցախի Հանրապետության կարգավիճակով պայմանավորված բուհի ֆինանսական հնարավորությունների նվազման պատճառով: ՌԾ-ում ներկայացված են նաև բուհի ռազմավարական նպատակներն ու առաջնահերթ ուղղությունները՝ կառավարում և համադրելիություն, կրթության գերազանցություն, հետազոտության գերազանցություն, ազգային և միջազգային հաղորդակցություն՝ իրենց ենթակետերով, որոնք սակայն տվյալ փաստաթղթում մանրամասն ներկայացված չեն: Դրանք ավելի մանրամասն ներկայացված են ռազմավարական ծրագրի իրագործումը ապահովելու համար մշակված «Մեսրոպ Մաշտոց համալսարանի 2019-2023թթ ներդրման պլան» փաստաթղթում, որով նախատեսված են միջոցառումներ, դրված են խնդիրները, նշված են իրագործման ժամանակահատվածը, կատարողների շրջանակը և արդյունքները:

Վերջին շրջանում համալսարանն իր նպատակները հստակեցրել է և ՄԿԾ-ներ է իրականացնում հայագիտության, մանկավարժության, հումանիտար,

հասարակատնտեսագիտական և SS ոլորտներում ելնելով տարածաշրջանի առանձնահատկություններից՝ բակալավրի և մագիստրոսի որակավորումներով:

Համալսարանը գիտակցում է իր դերն ու նշանակությունը Արցախի Հանրապետության համար և իր առաքելությունն է համարում գործունեության իրականացում երեք ուղղություններով՝ որակյալ կադրերի թողարկում, Արցախի համար կարևոր թեմաներով գիտահետազոտական գործունեության ծավալում, Արցախի Հանրապետության քաղաքակիրթ քաղաքացիների դաստիարակում: Ռազմավարական ծրագրեր են մշակել նաև բուհի ֆակուլտետներն ու ամբիոններ:

Մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմը բուհը հետևողականորեն իրագործել է իր առաքելությունը, պատերազմից հետո սկսել իր գործունեությունը 2020 թ. նոյեմբերի 24-ից: 2021 թ. անցումային տարի էր, որի ընթացքում բուհը փորձել է վերականգնել իր ներուժը և իրագործել առաքելությունը:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Առաքելությունը, նպատակները և խնդիրները որոշելիս բուհը՝ իր վրա վերցրած պարտավորությունները իրագործելու համար, հիմնականում հաշվի է առել ներքին շահակիցների ներուժը, արտաքին շահակիցների հետ քննարկումներով դուրս է բերել աշխատաշուկայի կարիքները: ՄԿԾ ռազմավարության իրականացման ընթացակարգի համաձայն բուհը պետք է արտաքին գործոնների վերլուծություն կատարի, պարզի յուրաքանչյուր մասնագիտության ուղղությամբ շուկայի կարիքները և գնահատի Արցախի մյուս բուհերի հետ կապված մրցակցային դաշտը: Սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ընթացքում, աշխատաշուկայի խորքային վերլուծություն չի իրականացվել, քանի որ, ըստ վարչական կազմի, Արցախը փոքր հանրապետություն է և աշխատաշուկայի կարիքները ակնհայտ են:

Մշակվող ՄԿԾ-ների հայեցակարգերը քննարկվում են ֆակուլտետների խորհրդում, բուհի ուսումնամեթոդական խորհրդում, հաստատվում գիտական խորհրդում: Քննարկումները հնարավորություն են տալիս վերհանել ներքին շահակիցների վերաբերմունքը: Ըստ հայեցակարգի Գիտխորհրդի դրական եզրակացության դեպքում ներքին շահակիցները ներգրավվում են ՄԿԾ մշակման գործընթացում: ՄԿԾ մշակումից հետո այն ներկայացվում է արտաքին փորձաքննության: Բուհում ընդունված ձև է գործատուների և այլ արտաքին շահակիցների հետ հանդիպումները կլոր սեղանների շուրջ, որոնց ընթացքում քննարկվում են կադրերի պատրաստման հետ կապված հարցեր, միասին փորձում գտնել ծագած խնդիրների լուծումները: Ներքին և արտաքին շահակիցների կարիքները բացահայտելու համար նրանց շրջանում պարբերաբար անցկացվում են հարցումներ:

Համալսարանի նպատակներից է «աջակցել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ հաշվի առնելով արտաքին շահակիցների պահանջները և ապահովելով համապատասխան կարողություններով շրջանավարտներ» (տես ՄՄՀ 2019-2023թթ Ռազմավարական ծրագիր): Համալսարանը կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմի և ներքին շահակիցների համատեղ գիտահետազոտական գործունեությունը՝ ընդգծելով տարածաշրջանի խնդիրների վերհանումը և դրանց լուծման ուղիները:

Բուհն իր ռազմավարությամբ պարտավորվել է արձագանքել պետության և հասարակության կողմից առաջադրված խնդիրներին և հանձնարարականներին: Փորձագիտական խմբին ներկայացվեցին որոշ փաստեր, որոնք հաստատեցին, որ բուհը իր

ուժերի ներածին չափով հավատարիմ է այդ պարտավորությանը: Օրինակ, այդպիսի փաստերից է «Կովկասագիտություն» ՄԿԾ-ի մշակումն ու ներդրումը, որի շրջանակում միայն այս բուհում են պատրաստվում տարածաշրջանագետներ, մասնավորապես՝ ադրբեջանագետներ, ինչի կարիքը Արցախի Հանրապետությունը միանշանակ ունի կամ «Սոցիալական աշխատանք» մագիստրոսական ՄԿԾ-ն, որի շրջանավարտների կարիքը հատկապես շատ է զգացվում հետպատերազմյա Արցախում: Բուհի կառավարիչները մշակել են մի փաստաթուղթ, որով փորձել են զուգադրել Արցախի Հանրապետության և ՄՄՀ-ի ռազմավարությունները:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Բուհում ներդրված է հաշվետվողականության մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս կառուցվածքային ստորաբաժանումներին հաշվետվություններ ներկայացնել ՌԾ-ի կատարողականի վերաբերյալ: Հաշվետվություններում արտացոլվում են գործունեության տարեկան արդյունքները, կատարված աշխատանքները: Դրանց հիման վրա ռեկտորը ծավալուն հաշվետվություն է ներկայացնում յուրաքանչյուր տարվա վերջում: ԻՎ համաձայն «Հաշվետվությունները տպագրվում են և առաքվում խորհրդի անդամներին, ներքին ու արտաքին շահակիցներին, ներկայացվում Համալսարանի պաշտոնական կայքում՝ ապահովելով հրապարակայնություն և թափանցիկություն»: Առաքելության և նպատակների գնահատման մեխանիզմեր են նաև հարցումների անցկացումը ներքին և արտաքին շահակիցների շրջանում, ուսանողների ձեռքբերած կրթական վերջնարդյունքների գնահատումն ամփոփիչ ատեստավորող հանձնաժողովների կողմից և բուհին համապատասխան կարծիքի տրամադրումը, փորձուսուցման կազմակերպումից հետո գործատուների հետ անցկացվող կլոր սեղան-քննարումները:

2020թ-ի 44-օրյա պատերազմից հետո Ռազմավարական ծրագրի նպատակների փոփոխություն, վերաձևակերպում դեռևս չի իրականացվել, թեպետ նախատեսվում է:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Ուսումնական հաստատությունը որպես Արցախի Հանրապետության բուհ պատկերացնում է իր դերն ու կարևորությունը հանրապետության համար, ձգտում լրացնել այն բացերը, որ կան հանրապետության մասնագիտական ոլորտում: Բուհը մասնագիտական ծրագրեր է իրականացնում ՈԱԾ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներում:

Համալսարանը մեծ չէ, ղեկավարությանը հաջողվել է ստեղծել աշխատակիցների համար հոգեբանական առումով հարմարավետ և առողջ մթնոլորտ, ինչը մեծապես նպաստում է նրանց համախմբմանը բուհի առաքելության և նպատակների իրագործման շուրջ: Փորձագիտական խումբը նկատեց, որ վարչական և ՊԴ կազմը նվիրված է բուհին և ջանքեր է ներդնում ՌԾ-ի նպատակներին հասնելու համար:

Փորձագիտական խումբը համոզվեց, որ համալսարանը անընդհատ զարգանում է, կարողանում ստեղծել մրցակցային առավելություններ Արցախի Հանրապետության մյուս բուհերի համեմատ, դրանով իսկ նաև կրթական միջավայրում ստեղծելով իր ուրույն տեղը: Բուհը տարաբնույթ ծառայություններ է մատուցում հանրապետության հասարակությանը, ինչը բարձրացնում է բուհի հեղինակությունը և ճանաչելիությունը: ՄՄՀ-ն ճկուն կերպով

արձագանքում է պետության և Արցախի հասարակության կարիքներին, այդ թվում ներդնելով Արցախի համար նորարարական մասնագիտական ծրագրեր («Կովկասագիտություն», «Սոցիալական աշխատանք» ՄԿԾ-ները) և կարճաժամկետ դասընթացներ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բուհի տեսլականը մի փոքր հավակնոտ է նույնիսկ մինչպատերազմյան Արցախի իրականության համար (հատկապես հետևյալ կետերում . 6-ում՝ պարբերաբար ուսումնասիրելով աշխարհի առաջատար հաստատությունների փորձը և օգտագործելով ձեռք բերած գիտելիքները՝ կդառնա կառավարման ժամանակակից մոդելները օգտագործող համալսարան՝, 8-ում՝ ունի բավարար նյութատեխնիկական միջոցներ և ընթացակարգեր պարբերաբար բարելավման և կատարելագործման համար՝, 9-ում՝ լինելով իր երկիրն ԱՊՀ-ում և արտասահմանում ներկայացնող ՄՈՒՀ՝ ստեղծում է գիտագործնական հարթակներ արցախյան ակադեմիական մտքի արտահայտման համար՝ նպաստելով Արցախի Հանրապետության անկախության ճանաչմանը՝): Պատերազմից հետո, երբ բուհը զրկվել է ֆինանսավորման կարևոր աղբյուրներից, տեսլականի հասանելիության հնարավորությունները մեծապես նվազել են: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ պատերազմից հետո անհրաժեշտ էր վերանայել Ռազմավարական ծրագիրը, դարձնել այն ավելի իրատեսական:

Փորձագիտական խմբի կարծիքով փոքր բուհի համար մեծ քանակությամբ մասնագիտությունների առկայությունը դժվարացնում է դրանց որակի ապահովումը: Բուհի ղեկավարության հետ այդ հարցի շուրջ քննարկումները ցույց տվեցին, որ կառավարիչները ընդունում են դա և համակարծիք են, ավելին մեծ թվով ՄԿԾ-ների բացումը բնորոշ է եղել բուհի գործունեության սկզբնական շրջանում, իսկ այժմ բուհը ավելի շատ է հետևում հանրապետության կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին:

Չնայած պատերազմից հետո արտերկրից եկող ֆինանսավորումը դադարեցվել է, սակայն ստեղծվել են ֆինանսների համալրման այլ հնարավորություններ, օրինակ՝ լրացուցիչ կրթական դասընթացների իրականացումը: Դրանց պահանջարկն ավելի մեծ է, քան այս պահին բուհը կարող է իրագործել, հետևապես այս ուղղությամբ բուհը ծավալվելու հնարավորություն ունի:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ բուհը մշակել է ՌԾ ներդրման պլան, սակայն բուհի կառավարիչների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքին, որ դրանում նշված արդյունքները որպես կանոն չափելի չեն, դրանց կատարողականը գնահատելու համար չկան հստակ և չափելի քանակական և որակական ցուցիչներ:

Անհրաժեշտ է նշել, որ բուհն առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար կիրառում է մի շարք գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս մշտադիտարկել ՌԾ-ի իրականացումը, սակայն դրանք բարելավման կարիք ունեն: Կարևոր է, որ բուհի ղեկավար կազմը նկատել է դրանց թույլ կողմերը և արտացոլել SWOT վերլուծության մեջ՝ նախատեսելով դրանց կատարելագործում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ *Հաշվի առնելով, որ Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարանի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են բուհի որդեգրած առաքելությանը, որը համապատասխանում է ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներին, առաքելությունն ու նպատակները արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, գործունեությունն ուղղված է Արցախի Հանրապետության կարիքների բավարարմանը, իսկ գնահատման մեխանիզմները առկա են և գտնվում են մշտապես*

*բարելավման վիճակում, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը **բավարարում է** չափանիշ 1-ի պահանջներին:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ *Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:*

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ՓԱՍՏԵՐ

2.1 **Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:**

Համալսարանի կառավարումն իրականացվում է կոլեգիալ հիմունքներով՝ Հիմնադիրների խորհրդի, Գիտական խորհրդի և Ռեկտորատի որոշումների միջոցով: 2013 թ.-ից բուհն իր գործունեությունը բարձրացրել է կանոնակարգման նոր մակարդակ: Հաստավել է նոր կանոնադրությունը: 2013 թ. հաստատվել են հետևյալ փաստաթղթերը՝ Գիտական խորհրդի, ամբիոնի, Կադրերի բաժնի, Ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության կանոնակարգերը, ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման, մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերը, ուսանողների փորձուսուցման կազմակերպման և անցկացման կանոնակարգը: 2014 թ. ստեղծվել է համալսարանում ուսանողի անձնական գործ վարելու կարգը: 2016 թ. մշակվել և ներդրվել են ռեկտորատի կանոնակարգը, էթիկայի հանձնաժողովի, Կարիերայի կենտրոնի, հաշվապահության, արխիվի, բուժկետի կանոնակարգերը, Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման, կուրսղեկի կանոնակարգերը, կուրսի ավագի գործառույթների ընթացակարգը, հեռակա ուսուցմամբ ընդունելության կարգը: Փոփոխություններ են կատարվել Մեսրոպ Մաշտոց համալսարանի մագիստրատուրայի ուսուցման կանոնակարգի, համալսարանի ուսուցման ձևերի կանոնակարգերում: 2017 թ. հաստատվել է ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգը, 2018 թ.՝ Ներքին որակի ապահովման կենտրոնի, Գիտական գրադարանի կանոնակարգերը, մշակվել են ներքին կարգապահական կանոնները: 2019թ. մշակվել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, գործավարության կարգը, ՈԱԱԿ-ի մոնիթորինգից հետո վերանայվել է «Ուսանողի գիտելիքի և կարողությունների գնահատման և բողոքների քննարկման ընթացակարգը, 2020 թ. մշակվել են ՊԴ կազմի գնահատման և հավելավճարի սահմանման, ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգերը, Որակի ապահովման ուղեցույցը:

Բուհն ունի նաև համալսարանի մասնագիտական կրթական ծրագրերի ռազմավարության իրականացման ընթացակարգ, Կովկասագիտության կենտրոնի, ֆակուլտետի կանոնակարգերը, հաստատված են Ուսումնական մասի կարգը, Կուրսային և

ավարտական աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության կանոնակարգը, Խորհրդատվության անցկացման ընթացակարգը: 2021 թ. մշակվել է «Документированная процедура. Подготовка учебного процесса высшего образования» փաստաթուղթը, որը ներկայացված է ռուսերեն: Փաստաթուղթը նկարագրում է մարդկային ռեսուրսների հաշվառման, ուսումնական տարվա համար նախատեսված բյուջեի կատարողականի, ՄԿԾ-ների, գրադարանային ֆոնդի վերանայման, լսարանային պատրաստվածության գործընթացները և հաշվետվողականությունը: Մեսրոպ Մաշտոց համալսարանում գործում է 2 ֆակուլտետ, որոնց կից գործում են 8 ամբիոններ և 2 գիտաուսումնական կենտրոններ:

Բուհն ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար որոշակի մարդկային ռեսուրսներ, սակայն վարչական անձնակազմի թվաքանակը սահմանափակ է և մի շարք գործառույթներով գերծանրաբեռնված: Նյութական և ֆինանսական ռեսուրսները խիստ սահմանափակ են, սակայն բուհը փորձում է հնարավորինս օգտագործել դրանք ռազմավարական նպատակների իրագործման համար:

ՄՄՀ ֆինանսական ռեսուրսներն առաջանում են ուսանողների վարձավճարներից, պետական ֆինանսավորումից և այլ աղբյուրներից: Պատերազմից հետո օբյեկտիվ պատճառներով ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունը ավելի է վատթարացել: Կառավարման մարմինների աշխատանքի պայմանները նորմալ վիճակում չեն՝ դեկանատների և ամբիոնների մակարդակով աշխատանքային պայմանները բարվոք չեն, թեպետ աշխատակիցները որևէ դժգոհություն այդպիսի պայմաններից չարտահայտեցին: Նշենք նաև, որ ֆինանսական ռեսուրսների կառավարումը հաճախ իրավիճակային է և եկամուտների բաշխումը միշտ չէ, որ նախապես պլանավորված է:

2.2 ՄՈՒՀ_ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՄՄՀ կառավարման համակարգն ունի որոշումների կայացման կանոնակարգված գործընթաց: ՊԴ կազմի և ուսանողության ներկայացուցիչները մասնակցում են Գիտական խորհուրդի, ռեկտորատի, ֆակուլտետների խորհրդի աշխատանքներին այդ մարմինների կանոնակարգերի համաձայն: Ուսանողները կազմում են որոշում կայացնող մարմինների անդամների առնվազն 25%-ը: Թեպետ ուսանողները ներկայացված են որոշում կայացնող մարմիններում, սակայն ինչպես պարզվեց ֆոկուս-խմբերի ընթացքում միշտ չէ, որ մասնակցության լրջությունը պատկերացնում են: Գիտխորհրդի արձանագրությունների ուսումնասիրությունը հնարավորություն չտվեց գտնել գիտխորհրդի անդամ ուսանողների ակտիվ մասնակցության օրինակներ:

Դասախոսները հնարավորություն ունեն բարձրաձայնել իրենց հուզող հարցերը ամբիոնների նիստերին, իսկ ուսանողները Ուսանողական խորհրդում: Բացի այդ ուսանողները կարող են բարձրաձայնել խնդիրները կուրսերի ավագների և կուրսղեկների միջոցով: Սակայն այդ գործընթացներին մասնակցում են առկա ուսուցման ձևով սովորող ուսանողները, հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողները, որոնց թվաքանակը բավականին մեծ է, որոշում կայացնող մարմինների աշխատանքին չեն մասնակցում: Նրանք չկան նաև Ուսխորհրդի կազմում: Ինչպես պարզ դարձավ փորձագետների Ուսխորհրդի հետ հանդիպումից դրա պատճառը հեռակա ուսուցմամբ ուսանողների աշխատելն է և բուհում որևէ ակտիվություն դրսևորելու հնարավորություն չունենալը:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՄՄՀ-ի ռազմավարությունը նախատեսված է 2019-2023 թթ. համար: ՌԾ-ն իրենից ներկայացնում է 6 էջանոց փաստաթուղթ, որի առաջին 4 էջերում ներկայացված են բուհի առաքելությունը, տեսլականը, արժեքները: 5-րդ էջում ներկայացված է SWOT վերլուծությունը: Առաջնահերթ ուղղություններն ու ռազմավարական նպատակները զբաղեցնում են ընդամենը մեկ էջ: Բուհի ՌԾ-ի հիման վրա ստորաբաժանումները մշակել են իրենց ռազմավարական ծրագրերը: Ստորաբաժանումները ունեն նաև տարեկան պլաններ:

ՆՈԱԿ-ի կողմից մշակվել են դասախոսի տարեկան ինքնավերլուծության, ամբիոնի վարիչի տարեկան հաշվետվության-վերլուծության, Ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվության-վերլուծության, ՄՄՀ միջոցառման վերլուծության ձևաթղթերը: Հաշվետվությունները արդյունքների գնահատման, տվյալների հավաքագրման մեխանիզմ են կիսամյակային և տարեկան կտրվածքով: Ռազմավարական ծրագրի ներդրման պլանում նշված են նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները, սակայն հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք չեն ներկայացվում ըստ ռազմավարական ծրագրի այդ տարում նախատեսված աշխատանքների իրականացման տվյալների: Ըստ ՌԾ նպատակների և դրանց իրականացմանը միտված միջոցառումների կատարողականի էր ներկայացված միայն ՄՄՀ պրոռեկտորի հաշվետվությունը: Հաշվետվություններում ներկայացված չեն ՌԾ ներդրման պլանով նախատեսված, սակայն չիրականացված միջոցառումները:

ԻՎ-ում նշված է, որ միջնաժամկետ պլանավորումն իրականացվում է բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ների իրականացման և մշտադիտարկման գործընթացներում: Սակայն մագիստրատուրայի համար դեռևս մշակված ՄԿԾ-ներ չկան: Կան միայն ուսումնական պլաններ: Բուհն ունի ՄԿԾ-ների մշտադիտարկման նաև այլ մեխանիզմներ՝ դասալսումներ ու բաց դասեր, դասախոսների ինքնավերլուծություններ և ուսանողների կողմից դասախոսների գնահատում, որոնք հնարավորություն են տալիս գնահատել ռազմավարական ծրագրի 4.2 կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԻՎ-ում նշվում է, որ «ՄՄՀ գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունն իրականացվում է հիմնականում ՄՈՒՀ-ի Ռազմավարական ծրագրերի մշակման ընթացքում և յուրաքանչյուր տարվա Ռազմավարական ծրագրի ներդրման պլանի ճշգրտման ժամանակ»:

Բուհի որոշումները կայացվում են ռեկտորատի և գիտխորհրդի, ֆակուլտետային խորհուրդների և ամբիոնների նիստերի ընթացքում: Ռեկտորատի և գիտխորհրդի նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց չտվեց, որ դրանց ընթացքում քննարկվում է բուհի վրա ազդող գործոնները: Որևէ ապացույց, որ բուհը լրջորեն վերլուծում է իր վրա ազդող գործոնները փորձագիտական խումբը չգտավ: Օրինակ, ՄԿԾ-ներում չկային աշխատաշուկայի վերլուծություններ: Թեպետ ԻՎ-ում նշվում էր, որ բենչմարքինգ է արվել, սակայն բենչմարքինգի որևէ վերլուծություն բուհում չկար: Իվ-ում նշված է, որ գործատուները բավարար չափով

ընդգրկված չեն կրթական գործընթացներում՝ և՛ գործատուների հետ հանդիպումները, և՛ ՄԿԾ կառավարման ուսումնասիրությունները հաստատեցին դա:

Արցախի Հանրապետության ներկա իրավիճակը շատ արագ է փոփոխվում, և բուհում իրականացվում է իրավիճակային կառավարում: Քանի որ հեռանկարային գործոնների հավաքագրումը բավարար չէ, Համալարանը չի կարողանում իրականացնել հնարավոր ռիսկերի բացահայտում և նվազեցում:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՄՄՀ-ն որակի ապահովման շրջափուլը ներդրել է 2019 թ.-ից: «ՄՄՀ որակի ներքին ապահովման ուղեցույց» փաթեթում, բուհի իրավական փաստաթղթերում ՊԻԳԲ շրջափուլի տրամաբանությունը դրված է, սակայն 2020 թ. սկսված պատերազմը և հետպատերազմյա իրողությունները թույլ չեն տվել գոնե մի ցիկլ ամբողջապես իրականացնել և դա անհնարին է դարձնում համակարգի արդյունավետության գնահատումը: Բուհն ունի ծրագրեր, որոնցով պլանավորում է իր գործունեությունը, իրականացման գնահատումը անելու համար մշակել են որոշ գործիքներ, կան բարելավման դեպքեր, որոնք հիմք են ստեղծում ասելու, որ ՊԻԳԲ շրջափուլը բուհի բնականոն աշխատանքի դեպքում կարող է աշխատել: Բուհը պլանավորել է ներդնել Որակի կառավարման համակարգ: Դրա համար մշակված են որոշ ընթացակարգեր և փաթեթներ:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ՄՄՀ-ում մշակվել է Մասնագիտական կրթական ծրագրերի ռազմավարության իրականացման ընթացակարգ, որը թեպետ դեռևս ամբողջապես ներդրված չէ, բայց լավ սկիզբ է լ ՄԿԾ իրականացման արդյունավետության գնահատման համար: Բուհը կիրառում է գնահատման հետևյալ մեխանիզմները՝ փորձուսուցման կազմակերպմանն ու անցկացմանն ուղղված միջոցառումներ՝ կլոր սեղան-կոնֆերանսներ, գործատուների հրավիրմամբ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների ՄՄՀ ՆՈԱԿ-ի կողմից մշակված հարցում-հաշվետվություններ, որտեղ ընդգրկված են հստակ հարցադրումները ՄԿԾ-ի որակի վերաբերյալ, ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվությունները, կարիերայի կենտրոնի կողմից կազմակերպվող գործատուների և շրջանավարտների հարցումները: Սակայն համակարգը դեռևս սկզբնավորման փուլում է, հետևաբար չկան նաև փաստերի հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող հստակ մեխանիզմներ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Թեպետ բուհը որոշակի աշխատանք է տանում ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հավաքագրման ուղղությամբ, սակայն դրա մասին հրապարակումները բացակայում են: Բուհն իր ԻՎ-ում հղում է անում կայքի և սոցցանցերի իր էջերի վրա, սակայն փորձագետների ուսումնասիրությունները ցույց տվեցին,

որ այդ ինֆորմացիան բացակայում է կամ սահմանափակ է: Այն ինչ զետեղված է կայքում ամենևին էլ բավարար չէ հրապարակումները գնահատելու համար, ավելին՝ այդպիսի մեխանիզմներ դեռևս մշակված չեն:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Փորձագիտական խումբը հաստատում է, որ բուհում կառավարման և վարչարարության արդյունավետության ապահովման համար մշակվել են մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր, սակայն դրանց մեծ մասը կիրարկման պատմություն դեռևս չունի, ուստի գնահատել դրանց արդյունավետությունը անհնար է:

Փորձագիտական խումբը համոզվեց, որ բուհն ունի նվիրված վարչական և մասնագիտական անձնակազմ, որը սակայն բավարար չէ բուհի բոլոր ռազմավարական նպատակների իրականացման համար: Փորձագիտական խումբը նկատեց, որ ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը և որակյալ կադրերի պակասը բերել են նրան, որ որոշ մարդիկ զբաղեցնում են միանգամից մի քանի պաշտոններ, ինչը հարցականի տակ է դնում այդ պաշտոններով նախատեսված բոլոր գործառույթների ամբողջական և որակով կատարումը: Թեև բուհը փորձում է փոխել որոշումների կայացման վերևից ներքև մոտեցումը, այս ուղղությամբ դեռևս շատ աշխատանք կա անելու, քանի որ, շատ պաշտոններում աշխատողները մրցույթով չեն ընտրվում: Բուհի նյութական և ֆինանսական ռեսուրսները նույնպես բավարար չեն լուծելու համար այն հավակնոտ խնդիրները, որ բուհը ռազմավարությամբ դրել է իր առջև: Մտահոգիչ է կրթական և հետազոտական նպատակների իրականացման համար նյութատեխնիկական և ուսումնամեթոդական ռեսուրսներով հագեցվածության աստիճանը:

Բուհի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և առկա ուսուցման ձևով սովորող ուսանողներին մասնակցել իրենց վերաբերվող որոշումների կայացմանը: Սակայն, հեռակայի ուսանողները ընդհանրապես ներառված չեն այդ համակարգում:

Փորձագիտական խումբը բուհի ղեկավարության ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ դրությունը Արցախում այնքան արագ է փոփոխվում, որ առանց ռիսկերի կառավարման հուսալի համակարգի ներդրման բուհի առաջընթացը ապահովել հնարավոր չէ: Բուհի կառավարման մարմինները կարողանում են իրականացնել իրավիճակային կառավարում, սակայն խնդիրներ կան ռազմավարական պլանավորման տեսանկյունից: Մշակված ռազմավարական պլանը ավելի շուտ նպատակների հռչակագիր է, քան հնարավոր ռիսկերի հաշվառմամբ մշակված լուրջ ծրագիր: Դրա ներդրման պլանը չի հստակեցնում հասանելիք արդյունքները, իսկ ԳԱՑ-երի բացակայությունը հնարավորություն չի տալիս ՆՈԱԿ-ին, որ այն արդյունավետ գնահատում իրականացնի, հավաքագրի հուսալի տվյալներ, որոնց վրա հիմնվելով կառավարման մարմինները կարող են բարելավման որոշումներ կայացնել:

ՄՄՀ-ի կառավարիչները նախատեսել են քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացնել որակի կառավարման սկզբունքով և դրա համար 2019 թ. մշակել են մի շարք փաստաթղթեր, սակայն 44-օրյա պատերազմը և դրա հետևանքով առաջացած խափանումները հնարավորություն չեն տվել փակել գոնե մեկ ցիկլ ներդրված մեխանիզմների արդյունավետությունը գնահատելու համար:

Բուհը ստեղծել է մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մի շարք մեխանիզմներ, սակայն այն դեռևս չի վերածվել կուռ և ամբողջական համակարգի:

Համալսարանում բացակայում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմները, կայքը լուրջ բարելավման կարիք ունի, սոցցանցերում տարածվող տեղեկատվությունը ավելի նպատակային դառնալու և գնահատման գործիքների ներդրման կարիք ունի:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ բուհում բացակայում է ռիսկերի կառավարման համակարգը, պլանավորման գործընթացները, մասնավորապես ռեսուրսների բաշխման առումով, արդյունավետ չեն իրականացվում, բուհը չի իրականացնում իր վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, այլ իրականացնում է իրավիճակային կառավարում, վարչական անձնակազմը խիստ ծանրաբեռնված է, քանի որ չկա համապատասխան ՈՒՀՕ անձնկազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ որոշ ռազմավարական նպատակների իրականացման համար կան վտանգներ, մյուս բոլոր չափանիշներում առկա թերությունները որպես կանոն բխում են կառավարման համակարգի թերություններից, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Մեսրոպ Մաշտոց համալսարանի երկու ֆակուլտետներում իրականացվում են 10 բակալավրական և 11 մագիստրոսական կրթական ծրագրեր առկա և հեռակա ուսուցման ձևերով:

Ներկայացված ՄԿԾ-ները («Անգլերեն լեզու և գրականություն», «Կովկասագիտություն», «Իրավագիտություն») համահունչ են ՄՄՀ-ի առաքելությանը՝ «իր կանոնադրությամբ և ԼՂՀ ԿԳՄՆ բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրերի իրականացման լիցենզիաների հիմնավորմամբ և ազգային որակավորումների շրջանակի մակարդակներին համապատասխան ՄՄՀ-ն ապահովում է բարձրագույն կրթություն՝ բակալավրի և մագիստրոսի որակավորումներով, հայագիտական, մանկավարժական, հումանիտար,

հասարակատնտեսագիտական և SS ոլորտներում» (տես ՄՄՀ 2019-2023թթ. Ռազմավարական ծրագիր):

ՄՄՀ-ի 2019-2023թթ. Ռազմավարական ծրագրի «Կրթության գերազանցություն» նպատակի ներքո որպես միջոցառումներ են ձևակերպված «Գործող կրթական ծրագրերի համար ՄԿԾ-ների ստեղծումը» և «դրանց մշտադիտարկումն ու բարելավումը»: 2019-2020 ուստարում իրականացվել է ինքնավերլուծության մեջ ներկայացված ՄԿԾ-ների մասնագրերի մշակումը: Ամբիոնների կողմից նշանակված ծրագրի պատասխանատուների կողմից իրականացվել է այլ բուհերի համապատասխան ծրագրերի հետ համեմատական վերլուծություն, սակայն կատարված բենչմարքինգը փաստաթղթավորված չէ: Ամբիոնների կողմից ձևակերպվել են ուսումնառության վերջնարդյունքներն ու շրջանավարտների կոմպետենցիաները, ընդ որում ՄԿԾ-ի մշակման քայլերը տարբեր հերթականությամբ են իրականացվել տարբեր ծրագրերի համար: ԻՎ-ում ներկայացված «Անգլերեն լեզու և գրականություն» ծրագրի շրջանակներում ձևակերպվել են ուսումնառության արդյունքները, այնուհետև մշակվել է ուսումնական պլանը, իսկ «Իրավագիտություն» ծրագրի շրջանակներում, որտեղ եղել է արդեն տարիներ գործող ուսումնական պլան, որը ամբիոնի ՊԴ կազմի կարծիքով բավականին արդյունավետորեն է իրականացվել, ուսումնառության վերջնարդյունքները ձևակերպել են՝ հիմնվելով առարկայական նկարագրերի վերջնարդյունքների վրա: «Կովկասագիտություն» ՄԿԾ-ն ներդնելիս բենչմարքինգ է արվել մի քանի բուհերի նմանատիպ ծրագրերի հետ և Արցախի խնդիրների հաշվառմամբ մշակվել են ՄԿԾ նպատակն ու խնդիրները և վերջնարդյունքները:

Փորձագիտական խմբի հետ հանդիպման ընթացքում ՄԿԾ-ների պատասխանատուները նշեցին, որ ուսումնառության վերջնարդյունքները քննարկվել են նաև գործատուների հետ կազմակերպված կլոր սեղանների ընթացքում: «Կովկասագիտություն» ՄԿԾ-ն ուղարկվել է արտաքին կարծիքի Հայ-ռուսական համալսարան:

Դիտարկված բոլոր ՄԿԾ-ների մասնագրերում առկա են մի շարք քարտեզագրումներ՝ ուսումնառության վերջնարդյունքների համադրումը ՈԱՇ-ի բնութագրիչների հետ, շրջանավարտի կոմպետենցիաների համադրումը ուսումնառության վերջնարդյունքների հետ, այնուհետև դասընթացների վերջնարդյունքների համադրումը կրթական ծրագրի վերջնարդյունքների և շրջանավարտի կոմպետենցիաների հետ համապատասխանաբար:

Փորձագիտական խմբի նախնական քննարկումները, այնուհետև կրթական ծրագրերի պատասխանատուների և ՊԴ կազմերի հետ հանդիպումները ցույց տվեցին, որ և ուսումնառության վերջնարդյունքների և շրջանավարտների կոմպետենցիաների դեպքում էլ ներկայացվել են ընդհանուր փոխանցելի, ընդհանուր մասնագիտական և գործնական մասնագիտական հմտություններ և կոմպետենցիաներ, որոնք հիմնականում համընկնում են, ինչը բնական է, քանի որ ուսումնառության վերջնարդյունքներում, ըստ ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների, պետք է ներառվեն նաև կոմպետենցիաները: Նման տարանջատումը ՄԿԾ-ներում հավելյալ բարդություն է ստեղծել դասընթացների առարկայական նկարագրերի մշակման համար, օրինակ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրում օտար լեզվի գործնական դասընթացների առարկայական նկարագրերում նշված չէ, որ դրանք նպաստում են հաղորդակցական հմտությունների ձևավորմանը, քանի որ վերջինս ընդգրկված չէ ընդհանուր ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներում, և առանձնացված է միայն շրջանավարտի կոմպետենցիաների շրջանակում: Նույն խնդիրները փորձագիտական խումբը տեսավ «Կովկասագիտության» ՄԿԾ-ում, որտեղ վերջնարդունքների Գ կետում (Ընդհանրական

(փոխանցելի) կարողություններ) և կոմպետենցիաների Գ կետում (Մասնագիտական կոմպետենցիաներ) կա, օրինակ, Գ6 կետեր, որոնք գրեթե անհամադրելի են:

Ինչ վերաբերում է կոնկրետ ծրագրերին, «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսումնառության արդյունքների շրջանակում նպատակահարմար կլիներ շեշտը դնել մանկավարժական և օտար լեզվի դասավանդման հմտությունների և կարողությունների վրա՝ հաշվի առնելով այն փաստը, որ շրջանավարտները ստանալու են մանկավարժի որակավորում: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ՄՄՀ-ում դեռևս մշակված չեն մագիստրոսական կրթական ծրագրերի մասնագրերը՝ ուսումնառության վերջնարդյունքներով, ինչը հնարավորություն կտար ավելի հստակ տարբերակել բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքները:

Ընդհանուր առմամբ, հիմնվելով փորձագիտական խմբի քննարկումների և փորձագիտական այցի ընթացքում ձեռք բերված փաստերի վրա, կարելի է եզրակացնել, որ մշակված ուսումնական պլաններն իրատեսական են և կարող են հաջողությամբ կիրարկվել: «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրում օպտիմալ ներկայացված են Մանկավարժության կառուցամասը, Անգլերեն լեզվի գործնական և տեսական դասընթացները: Գովելի է, որ ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցել անգլերենի ֆակուլտատիվ դասերի, որոնք անցկացվում են անգլերենի լեզվակրի կողմից: Ֆակուլտատիվ դասընթացները միտված են բարձրացնելու ուսանողների հաղորդակցական հմտությունները, քանի որ ՊԴ կազմի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների մի մասն առաջին կուրս ընդունվելիս անգլերենի իմացության ցածր մակարդակ է ցուցաբերում:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև ՄՄՀ-ի աշխատանքը փորձուսուցման բարելավման ուղղությամբ: Մշակվել են փորձուսուցման անցկացման կանոնակարգը, ուսանողների թղթապանակները 3-րդ կուրսի երկրորդ կիսամյակում պասիվ փորձուսուցման և 4-րդ կուրսի առաջին կիսամյակում ակտիվ փորձուսուցման համար, ինչպես նաև գնահատման կարգը: Բուհում կարևորում են փորձուսուցման արդյունքների ամփոփումը, այդ իսկ պատճառով ընտրել են գործատուների հետ համատեղ կլոր սեղաններ կազմակերպելու ֆորմատը: Քննարկումների արդյունքում կրթական ծրագրերում ավելացվել են փորձուսուցմանը հատկացվող ժամաքանակը և համապատասխան կրեդիտները: Մանկավարժական փորձուսուցումը արդյունավետորեն է կազմակերպվում դպրոցներում, որտեղ նրանք աշխատում են ուսուցիչների, մեթոդիստների և հոգեբանների հետ համատեղ: Անգամ պասիվ փորձուսուցման վերջում ուսանողները միջոցառումներ են կազմակերպում: Օրինակ՝ մանկապարտեզում անցկացված փորձուսումից հետո ուսանողներին առաջարկվում է նաև կարճաժամկետ աշխատանքային պայմանագիր:

ՄՄՀ-ի ՆՈԱԿ-ի կողմից տարբեր կրթական ծրագրերի փորձուսուցումների արդյունքների վերլուծությունը վեր է հանել մի շարք թերի կողմեր, ինչպես օրինակ՝ հանձնարարականների հստակությունը և նպատակահարմարությունը, գնահատման չափանիշները, և ամբիոնների կողմից քայլեր են ձեռնարկվում դրանք շտկելու և բարելավելու ուղղությամբ:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դիտարկված ՄԿԾ-ներում ներկայացված են դասավանդման և ուսումնառության մի շարք մեթոդներ, որոնք կիրառելի են կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները ձևավորելու համար և այդ մեթոդները արտացոլված են նաև առարկայական ծրագրերում: Փորձագիտական այցի ընթացքում ՊԴ կազմի հետ հանդիպումներում նրանք փաստեցին, որ առարկայական նկարագրերը հստակեցվել են կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների հետ դրանց համադրման շնորհիվ, իսկ ուսանողները նշեցին, որ դասընթացի սկզբում իրենց տրամադրվող առարկայական նկարագրերը հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացում ունենալ կատարվելիք աշխատանքների, հանձնարարականների, ինքնուրույն աշխատանքների և վերջնաժամկետների մասին: Այնուամենայնիվ, ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նրանց ավելի շատ հետաքրքրում են հանձնարարականների տեսակները և վերջնաժամկետները, քան տվյալ դասընթացի վերջնադյունքները:

Փորձագիտական այցի ընթացքում ուսանողների հետ կազմակերպված հանդիպումներից և դասալսումներից կարելի է եզրակացնել, որ թեև ՄԿԾ-ներում ներկայացված են բազմաթիվ դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մեթոդներ, որոնք արդյունավետորեն կիրառվում են /դերային խաղեր, բանավեճեր և այլն/, և մեծ տեղ է հատկացված նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքին, որոշ դասախոսներ դեռևս կիրառում են ավանդական մեթոդներ, ինչպես օրինակ՝ դասախոսության թելադրությունը կամ դասախոսության ոչ ինտերակտիվ ներկայացումը:

Որպես դրական փաստ պետք է արձանագրել «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի շրջանակում դասավանդման մեթոդների և տրված առաջադրանքների բազմազանությունը: Անգլերեն լեզվի գործնական դասընթացներում ներառված են Cambridge.com հարթակի հնարավորությունները, որտեղ ուսանողները հաղորդակցական հմտությունների զարգացմանը միտված առաջադրանքներ են կատարում Cambridge Unlock ուսումնական ձեռնարկներից: Առաջադրանքները ստուգվում են ավտոմատ՝ համակարգի կողմից, սակայն էսսեի դեպքում դասախոսը վերստուգում է իրականացնում, քանի որ հարթակը չի կարող վերհանել գրագողության դեպքերը: Եվս մեկ կարևոր արդյունավետ մոտեցում է «*Ազգային* արագացման հանրային *նախաձեռնության*» հետ համագործակցությունը, ըստ որի դասընթացներում ներառված առաջադրանքների միջոցով ուսանողները նպաստում են Հայ ազգային կորպուսի զարգացմանը: Այս համատեքստում ներդրվել է նաև «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացը, որի բովանդակությունը լավ մշակված է և կարող է նպաստել նաև ուսանողների հետազոտական հմտությունների զարգացմանը:

«Կովկասագիտություն» ՄԿԾ-ի շրջանակներում արված դասալսումները, ուսանողների և շրջանավարտների հետ անցկացված ֆոկուս խմբերի արդյունքները ցույց տվեցին, որ դասավանդման և ուսումնառության մեթոդները ուղղված են քննադատական մտածողության ձևավորմանը, ինչը հատկապես այդ մասնագիտության համար խիստ կարևոր է:

Նշենք միայն, որ որոշ առարկայական նկարագրերում մատնանշված են դասավանդման և ուսումնառության մեթոդներ, որոնց կիրառումը տվյալ դասընթացի նյութի շրջանակում այդքան էլ ընկալելի չէ, մասնավորապես, որ ներկայացված նկարագրերում չկար նյութի շաբաթական բաշխվածությունը, ինչը կօգներ հասկանալ տվյալ մեթոդի կիրառման անհրաժեշտությունը կամ արդյունավետությունը:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՄՄՀ-ում մշակվել և ներդրվել են «Ուսանողի գիտելիքի և կարողությունների գնահատման և բողոքների քննարկման ընթացակարգ», «Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման և գնահատման կարգեր» և «Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգ»:

Ուսումնական պլաններում բոլոր դասընթացների գնահատումն իրականացվում է հետևյալ բաղադրիչներով՝ հաճախում, ակտիվություն, ինքնուրույն աշխատանք, միջանկյալ քննություններ և ամփոփիչ քննություն: Դասընթացների մի մասը գնահատվում է որպես ստուգարք՝ առանց ամփոփիչ քննության: Գնահատման սանդղակները ներկայացված են դասընթացների առարկայական նկարագրերում: Նշենք, որ առարկայական նկարագրերում ներկայացված են գնահատման մի շարք մեթոդներ, որոնք, ինչպես և դասավանդման և ուսումնառության մեթոդների դեպքում, երբեմն հիմնավորված չեն, եթե հաշվի առնենք տվյալ դասընթացի նպատակը և ուսումնառության նյութը:

Ամփոփիչ քննությունները անցկացվում են բանավոր՝ նախօրոք տրված հարցաշարերի հիման վրա: Տեսական դասընթացների միջանկյալ քննությունները նույնպես անցկացվում են հարցաշարերի հիման վրա, ինչը փաստում է այն մասին, որ հիմնականում ստուգվում և գնահատվում է գիտելիքը: Ուսանողների հետազոտական հմտությունները գնահատվում են միայն ինքնուրույն աշխատանքների, կուրսային և ավարտական աշխատանքների շրջանակներում, սակայն դրանց մի մասում էլ բացակայում է վերլուծական մասը և ավարտվում է զուտ փաստերի արձանագրումով:

Ըստ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման և գնահատման կարգերի դրանց վերջնական գնահատականը ևս բազմագործոն է:

Փորձագիտական այցի ընթացում ներկայացվեցին կուրսային և ավարտական աշխատանքների նմուշներ: «Անգլերեն լեզու և գրականություն» բակալավրական կրթական ծրագրի 2020-21 ուստարվա ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանում էին տվյալ որակավորմանը՝ անգլերենի դասավանդման մեթոդաբանության շրջանակում էին, և զովելի է, որ դրանք իրականացվել էին դպրոցական դասագրքերի կամ դպրոցներում իրականացված հետազոտությունների հիման վրա:

«Կովկասագիտություն» ՄԿԾ-ի գնահատման մեթոդները հիմնականում արժանահավատ են և համապատասխանում են ակնկալվող վերջնարդյունքներին, սակայն ընդհանրական (փոխանցելի) կարողությունների դեպքում՝ ոչ ամբողջությամբ: Օրինակ, Ը 3-ի վերջնարդյունքներին ոչ բոլոր գնահատման մեթոդներն են համապատասխանում:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Ինքնավերլուծության մեջ ներկայացված ՄԿԾ-ների համար իրականացվել է այլ բուհերի նմանատիպ ծրագրերի հետ համեմատական վերլուծություն, որը, սակայն, փաստաթղթավորված չէ: Տվյալ ՄԿԾ-ները ամբողջությամբ չեն կրկնում այլ բուհերի ծրագրերը,

սակայն բովանդակային առումով մեծ տարբերություն չեն դրսևորում, ինչը հնարավորություն է տվել այլ բուհերից, օրինակ՝ ԱրՊՀ-ից, Գրիգոր Նարեկացի՝ համալսարանից, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանից, ՌԴ Դոնի Ռոստովի պետական տեխնիկական համալսարանից, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ից և մի շարք այլ բուհերից ուսանողների տեղափոխությունը ՄՄՀ մասնավորապես 2018 և 2019 թթ.-ին:

Շվեյցարիայի հարավկովկասյան հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում ՄՄՀ-ի 2018թ-ին «Կովկասագիտություն» կրթական ծրագրի 22 ուսանող 3-օրյա փորձուսուցում են անցել ԵՊՀ-ում և Հայ-ռուսական համալսարանում: և 2019թ-ին «Իրավագիտություն» և «Կառավարում» կրթական ծրագրերի ծրագրի ուսանողները արտագնա փորձուսուցում են անցել Հայ-ռուսական համալսարանի համապատասխան ծրագրերում: Իրավագիտության ուսանողները ևս ուղարկվել են Հայ-ռուսական համալսարան, մասնավորապես՝ կրիմինալիստիկայի լաբորատորիա:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄՄՀ-ի 2019-2023թթ ռազմավարական ծրագրում կարևորված է ՄԿԾ-ների պարբերական վերամշակման և լրամշակման խնդիրը, ինչն արտացոլված է նաև ֆակուլտետների և ամբիոնների ռազմավարական ծրագրերում:

2019 թ. ՄՄՀ-ի կողմից հաստատվել է ՄԿԾ-ների Ռազմավարության իրականացման ընթացակարգը, որտեղ հաստատված են նոր ՄԿԾ-ի մշակման և ներդրված ՄԿԾ-ների վերանայման ընթացակարգային քայլերը: ՄԿԾ-ների մշտադիտարկումն իրականացվում է ամբիոնների տարեկան վերլուծություն-հաշվետվությունների, փորձուսուցման գործատու-ղեկավարների կարծիքների, փորձուսուցման կլոր-սեղանների արդյուքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների, ուսանողների շրջանում կազմակերպված ֆոկուս խմբերում քննարկումների և հարցումների միջոցով:

Ներկայացված կրթական ծրագրերի ուսումնական պլանի իրականացումը սկսվել է 2019թ-ին, հետևաբար դեռ մի ամբողջ շրջափուլ չի անցել վերջնական գնահատում անցկացնելու համար, սակայն արդեն իսկ անցկացված ֆոկուս խմբերի քննարկումների, արտաքին կարծիքների, ամբիոնների ինքնավերլուծությունների հիման վրա վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք վերհանել էր նաև փորձագիտական խումբը՝ ՄԿԾ-ները քննարկելիս, ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում: Դրանք հիմնականում վերաբերում էին ուսումնական պլաններում դասընթացների չափազանց մեծ թվաքանակին, կրեդիտների բաշխման արժանահավատությանը, դրանցում ընդգրկված հանձնարարականների կատարման համար նախատեսված ժամանակին, և ընդհանուր առմամբ ուսանողների կիսամյակային ծանրաբեռնվածությանը: Օրինակ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» ՄԿԾ-ում ռուսերենին՝ որպես երկրորդ օտար լեզվին հատկացված կրեդիտները բաշխված են այնպես, որ 1 կրեդիտով դասընթացի շրջանակում ուսանողը պետք է իրականացնի երկու ինքնուրույն աշխատանք: Նշված խնդիրը բարձրաձայնվեց նաև ուսանողների հետ հանդիպման ընթացքում: Քննարկվել է նաև «Կովկասագիտություն» կրթական ծրագրի շրջանակում բացի չորս օտար լեզվի՝ աղրբեջաներեն, պարսկերեն, անգլերեն, ռուսերեն, ուսուցման նպատակահարմարությունը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ 2020-2021 ուստարվանից ներդրված Որակի կառավարման համակարգի շրջանակներում ՄՄՀ-ում կատարվում է նոր ուսումնական տարվա ՄԿԾ-ների վերանայում՝ վեր հանված խնդիրների քննարկման արդյուքների հիման վրա, և հաստատում: Ինչպես ցույց տվեց արդեն 2021թ-ին հաստատված ուսումնական պլանների ուսումնասիրությունը, արդեն իսկ կատարվել են որոշ փոփոխություններ:

Մշակվել են առարկայական նկարագրերի ձևանմուշներ, այդ թվում նաև փորձուսուցման համար: Փորձուսուցման նկարագրերը բավականին հստակ և մանրակրկիտ են ձևակերպված:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՄՀ-ում սկսվել է գործող կրթական ծրագրերի ՄԿԾ-ների մշակում և վերամշակում՝ մասնավորապես ուսումնառության վերջնարդյունքների սահմանմամբ և դասընթացների վերջնարդյունքների հետ դրանց քարտեզագրմամբ: Փորձագիտական խումբը նպատակահարմար է համարում ՄԿԾ-ներում ձևակերպված ուսումնառության վերջնարդյունքների և շրջանավարտի կոմպետենցիաների միավորում, քանի որ դրանք կրկնում են միմյանց և բարդացնում դասընթացների վերջնարդյունքների ձևակերպումը և քարտեզագրումը, բացի այդ ըստ ՀՀ ՈԱՇ 6-րդ մակարդակի բնութագրիչների կոմպետենցիաները կազմում են ուսումնառության վերջնարդյունքների մաս:

Փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա փոփոխված ՄԿԾ-ները կարող են լավ հիմք ծառայել ՄՄՀ-ում գործող մյուս ծրագրերի ՄԿԾ-ների մշակման համար: Հատկապես անհրաժեշտ է բակալավրական և մագիստրոսական ծրագրերի մշակումը դիտարկել որպես մեկ ամբողջություն, ինչը հնարավորություն կտա պահպանել շարունակականությունը, խուսափել կրկնություններից և հստակ տարանջատել ուսումնառության վերջնարդյունքները՝ մագիստրոսական ծրագրերում շեշտադրելով հետազոտական բաղադրիչը:

Դրական կարելի է գնահատել նաև հետազոտական բաղադրիչի ներդնումը կրթական ծրագրերում, որը իրականացվում է և դասընթացների շրջանակում ինքնուրույն աշխատանքերի միջոցով, և հատուկ մշակված դասընթացներով: Կրթական ծրագրերի նպատակին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան են ընտրվում նաև կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, թեև որոշ դեպքերում թերի է դրանց վերլուծական մասը: Հետազոտական հմտությունների զարգացումը կարևորելու մասին է փաստում նաև այն, որ «Կովկասագիտություն» կրթական ծրագրի շրջանակում ուսանողները հետազոտական թեմա են ընտրում առաջին կուրսում և աշխատում այդ թեմայի շուրջ ուսումնառության չորս տարիների ընթացքում:

Օտար լեզուների ուսուցման գործընթացում առցանց հարթակների հնարավորությունների ակտիվ օգտագործումը նույնպես գովելի նախաձեռնություն է: Անգլերենի լեզվակիր դասախոսի ներգրավմամբ դասընթացների կազմակերպումը ևս դրական փորձ է: Փորձագիտական խումբն առաջարկում է, որ այդ դասընթացների շահառուներ դառնան ոչ միայն «Անգլերեն լեզու և գրականություն» և «Թարգմանչական գործ», այլև մյուս կրթական ծրագրերի ուսանողները ևս, մասնավորապես, եթե հաշվի առնենք այն փաստը, որ ՄՄՀ-ն կարևորում է օտար լեզվի ուսուցումը, օրինակ՝ «Կովկասագիտություն» կրթական ծրագրով նախատեսված է անգլերեն լեզվի ուսուցում 1-4 կուրսերում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև հանձնարականների նկարագրությունը դասընթացների առարկայական նկարագերում, որը կնպաստի ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խմբի դիտարկումների համաձայն ՄՄՀ-ն դեռևս աշխատանքներ ունի իրականացնելու բոլոր դասընթացներում դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մեթոդների ներդրման ուղղությամբ: Դասալսումները կարող են վերհանել մեթոդական վերապատրաստման կարիք ունեցող դասախոսների շրջանակը, որոնց համար էլ կարող են կազմակերպվել դասընթացներ: Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության բացահայտման համար կարելի է իրականացնել նաև ուսանողների՝ ուսման առաջին և վերջին տարիների ձեռքբերումների համեմատական վերլուծություն:

Բարելավման աշխատանքներ պետք է իրականացվեն նաև մի շարք կրթական ծրագրերի, օրինակ «Կովկասագիտություն», «Իրավագիտություն», փորձուսուցման հանձնարարականների ուղղությամբ: Կամընտրական դասընթացների կառուցամասը ևս վերանայման կարիք ունի և՛ դասընթացների բովանդակության, և՛ դրանց նպատակի առումով:

Գովելի է, որ պարբերական բնույթ է կրում ՄԿԾ-ների մշտադիտարկումը դասալսումների, դասախոսների ինքնավերլուծությունների, ամբիոնի վարիչների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների, հարցումների, կլոր սեղանների և ֆոկուս խմբերի միջոցով և ուսումնական պլաններում փոփոխություններ են կատարվում յուրաքանչյուր տարվա վերջում՝ առանց սպասելու մեկ շրջափուլի ավարտին:

ՄԿԾ-ների բարելավումը Արցախի և ՀՀ բուհերի համապատասխան ծրագրերի հետ համեմատական վերլուծությունների՝ բենչմարքինգի միջոցով հնարավորություն կընձեռի ապահովել ՄՄՀ-ի ուսանողների ներքին շարժունությունը: ՄՄՀ-ն պետք է քայլեր ձեռնարկի կնքելու համապատասխան պայմանագրեր Արցախի և ՀՀ այլ բուհերի հետ, որտեղ ուսանողները կարող են կրեդիտներ հավաքել և փոխանցել:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՄՀ-ում սկսվել է ՄԿԾ-ների համապատասխանեցումը եվրոպական մոտեցումներին վերջնարդյունքահենության, կրեդիտների համակարգի տեսանկյունից, ՄԿԾ-ները պարբերաբար մշտադիտարկվում են մի շարք գործիքների կիրառմամբ և վերամշակվում են, մշակվել է գնահատման հստակ համակարգ, ներառյալ ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և փորձուսուցման, փորձ է արվել դասընթացներում ավելացնել դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մեթոդների կիրառումը, ինչպես նաև հետազոտական բաղադրիչը, ավարտական աշխատանքների և թեզերի թեմաներն ընտրվում են տվյալ որակավորման կրթական ծրագրի պահանջներին համապատասխան, շրջանավարտները պահանջված են աշխատաշուկայում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՄՀ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագիտական խումբը ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Մեսրոպ Մաշտոց համալսարանում բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերում դիմորդների ընտրությունն ու ընդունելությունը կատարվում է գործող կանոնակարգերի հիման վրա: Դիմորդների ընդունելությունը բակալավրիատի առկա ուսուցման համակարգ իրականացվում է Արցախի Հանրապետության Կառավարության 2021 թ . մայիսի 4-ի N 409-Ն որոշման դրույթների համաձայն: Դիմորդները Մեսրոպ Մաշտոց համալսարան են ընդունվում՝ մասնակցելով հանրապետական միասնական քննությունների:

Հեռակա ուսուցման համակարգով ընդունելությունը կազմակերպվում է համաձայն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին հաստատված «Մեսրոպ Մաշտոց համալսարանի հեռակա ուսուցմամբ ընդունելության» կարգի դրույթների: Գործընթացը կազմակերպվում է բուհում՝ ԱՀ ԿԳՄՍ նախարարի 2008 թվականի ապրիլի 25-ի N 57/Մ հրամանի համաձայն: Հավելենք նաև, որ քննությունների անցկացումը կազմակերպում է բուհի ներսում ձևավորված հանձնաժողովը, իսկ վերահսկողությունն իրականացվում է ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:

Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպվում է համաձայն ԿԳՄՍ նախարարի 2008 թվականի ապրիլի 25-ի N 53/Մ հրամանի համապատասխան դրույթների: Ընդունելության գործընթացը իրականացվում է 2 փուլով:

ՄՈՒՀ-ում գործում է նաև ազատ ունկնդրի ինստիտուտը: Հեռակա ուսուցման համակարգ ընդունվածները կարող են մասնակցել առկա համակարգի դասերին և 80% մասնակցություն ապահովելու դեպքում հնարավորություն են ստանում քննությունները հանձնելու և տեղափոխվելու առկա ուսուցման համակարգ:

Մասնագիտական կողմնորոշման և ուսանողների հավաքագրման նպատակով կազմակերպվում են շրջայցեր դեպի միջնակարգ և ավագ դպրոցներ, գովազդային արշավներ են իրականացվում հաստատության սոցիալական ցանցի հաշիվներում: Կայքում գործում է նաև դիմորդների բաժին երկլեզու հատվածը, որտեղ ներկայացվում է անհրաժեշտ տեղեկատվություն ընդունելության կանոնակարգերի, ժամկետների, պահանջվող փաստաթղթերի, առկա մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ:

2017 թվականից ի վեր Կարիերայի կենտրոնի կողմից անցկացվում է «Բաց դռների օր» միջոցառումը, որը ինչպես պարզ դարձավ նաև փորձագիտական այցի շրջանակներում ուսանողների հետ հանդիպման ժամանակ խթան է հանդիսացել բուհն ընտրելու գործում: Հավելենք նաև, որ համաձայն ՆՈԱԿ «Ուսանողների հավաքագրման հարցման վերլուծության և բարելավման քաղաքականության» հարցվածների 60%-ը տեղեկացել է բուհի մասին ուսանողներից, ևս 20%-ը աշխատակիցներից:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների կարիքների վերհանման քաղաքականության որոշ տարրեր: Մասնավորապես, ՄՈՒՀ-ում կրթական կարիքների վերհանումը տեղի է ունենում

հիմնականում պարբերաբար անցկացվող ուսանողական անանուն հարցումների արդյունքում՝ դասընթաց/դասավանդող և ընդհանուր բավարարվածության գնահատման ձևաչափերով: Ուսանողները ընդունված չափանիշներին համապատասխան ընդգրկված են նաև ՄՄՀ կառավարման մարմիններում՝ Գիտական խորհրդում, ֆակուլտետի խորհրդում և Ռեկտորատում:

2019 թվականից ի վեր ՄՈՒՀ-ում ՆՈԱԿ-ի նախաձեռնությամբ իրականացվում են ֆոկուս խմբային քննարկումներ, որոնք ամփոփվում և ներկայացվում են կառավարման մարմիններին:

ՄՄՀ ուսանողները, ուսանողական խորհրդի միջոցով և անհատապես, ունեն բուհի կառավարման մարմիններում ուսանողների կարիքները վերհանելու հնարավորություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ուսանողների կողմից վեր հանվող խնդիրները քննարկվում են և ստանում լուծումներ: Ուսանողները խնդիրների առաջացման դեպքում դրանք բարձրաձայնում են նաև համապատասխան ֆակուլտետային խորհուրդներում, դեկանների և ամբիոնների վարիչների հետ հանդիպումների ժամանակ, սակայն գործընթացը կանոնակարգված չէ:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ուսանողների ուսումնառության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ՄՈՒՀ-ը կարևորում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվությունների տրամադրման հնարավորությունների ստեղծումը: Խորհրդատվությունների կազմակերպումն իրականացվում է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն, որի շրջանակներում յուրաքանչյուր դասախոս շաբաթական առնվազն մեկ անգամ տրամադրում է խորհրդատվություն: Խորհրդատվական պարապմունքները իրականացվում են այն ուսանողների համար, որոնք դասը չյուրացնելու կամ բացակայելու պատճառով, կարիք ունեն լրացուցիչ աջակցության կամ որևէ թեմայի լրացուցիչ բացատրման: Խորհրդատվությունների ժամանակացույցն ուսանողներին հասանելի է դառնում ֆակուլտետային դասացուցակների կողքին վերջիններիս փակցնելու միջոցով:

Խորհրդատվական աշխատանքներից ուսանողների բավարարվածությունը գնահատվում է ուսանողական հարցումների միջոցով, այնուհանդերձ բացակայում են վերջիններիս իրականացման արդյունավետության գնահատման վերլուծություններ:

ՊԴԱ կազմի կողմից ուսանողներին խորհրդատվությունների տրամադրման նպատակով կիրառվում են նաև էլեկտրոնային փոստի տարբերակը և սոցիալական ցանցերում ստեղծված գործիքները:

ՄՄՀ-ում կազմակերպվում են նաև անգլերենի ֆակուլտատիվ պարապմունքներ անգլերեն լեզվակիր դասախոսի մասնակցությամբ, ինչը նպաստում է ուսանողների անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանը:

«Համակարգչային գործ» դասընթացի շրջանակում էլ, եթե ուսանողը ստանում է 17-ից բարձր գնահատական, նրան տրվում է վկայական:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Մեսրոպ Մաշտոց համալսարանում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով իրականացվող գործընթացները սահմանված են համապատասխան

կանոնակարգերով, ինչպես նաև նկարագրված են ՄՄՀ ուսանողի ուղեցույցում: 2019 թվականից գործում է կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումներին դիմելու ընթացակարգ, այնուամենայնիվ շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ անհրաժեշտություն առաջանալու դեպքում առանց խոչընդոտների կարող են դիմել վարչական անձնակազմի աշխատակիցներին, ստանալ համապատասխան օժանդակություն և ուղղորդում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ուսանողները իրենց էլեկտրոնային հասցեներին ստանում են ՄՄՀ ուսանողների ուղեցույցը, որտեղ ծանոթանում են իրենց իրավունքներին և պարտականություններին:

Համաձայն իրականացված հարցումների տվյալների ամփոփման, հարցման մասնակից ուսանողների ավելի քան 91 տոկոսը բավարարված է տրամադրվող ծառայություններից:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցման համար պատասխանատու է Կարիերայի կենտրոնը, որը գործունեություն է ծավալում համաձայն 2016 թվականի դեկտեմբերին հաստատված համապատասխան կանոնակարգի: ՄՄՀ-ում առկա է նաև շրջանավարտների աշխատանքի տեղավորման մոնիթորինգի համակարգի մասին կանոնակարգը, համաձայն որի տեղի է ունենում շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում՝ հիմնականում հեռախոսազրույցների միջոցով:

Կարիերայի կենտրոնի կողմից գործատուների շրջանում անցկացվում են հարցումներ, որոնց արդյունքները ներկայացվում են ամբիոնների վարիչներին: Սակայն, գործնականում գործատուների հարցումների հիման վրա իրականացված փոփոխություններ դեռևս տեղի չեն ունեցել:

ՄՄՀ Կարիերայի կենտրոնը միջնորդ օղակ է հանդիսանում բուհի արտաքին և ներքին շահակիցների միջև, նպաստում է վերջիններիս միջև համագործակցային հարաբերությունների հաստատմանը, մասնավորապես կազմակերպվում են կլոր-սեղան քննարկումներ, հանդիպումներ գործատուների հետ, որի շրջանակներում գործատուների կողմից ներկայացվում են աշխատաշուկայի տվյալ ժամանակահատվածին բնորոշ պահանջներն ու առանձնահատկությունները: Այդուհանդերձ կենտրոնի տրամադրած տեղեկատվության վերաբերյալ իրազեկվածությունը դեռևս ցածր է ուսանողների և շրջանավարտների շրջանում:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՄՈՒՀ-ում ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներին ներգրավումը հիմնականում տեղի է ունենում անհատական, կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի միջոցով:

ՄՄՀ-ում 2011 թվականից գործում է համալսարանական ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ), որը իր գործունեությունը ծավալում է համաձայն 2013 թվականի փետրվարին Գիտխորհրդում հաստատված կանոնակարգի: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՈՒԳԸ-ին անդամակցում էին թվով 12 ուսանողներ, որոնցից 3-ը Կովկասագիտություն կրթական ծրագրի ներկայացուցիչներ: Կառույցի կողմից կազմակերպվում էին կլոր-սեղան քննարկումներ, ներբուհական, ինչպես նաև միջազգային գիտաժողովներ, որոնց արդյունքները հետագայում տպագրվում էին ՄՈՒՀ-ի գիտական ժողովածուներում:

Որոշ աշխատանքներում առկա է հետազոտական բաղադրիչը, մասնավորապես Կովկասագիտության կենտրոնի աշխատանքներում, որը սակայն համատարած բնույթ չի կրում և հիմնականում հիմնված է անհատական նախաձեռնությունների վրա, բացակայում է ինստիտուցիոնալ մոտեցումը, ինչպես նաև չի տարածվում մնացած մասնագիտությունների վրա:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՄՈՒՀ-ում որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին հանդես է գալիս Ուսանողական խորհուրդը, որը հիմնվել է 2000 թվականին և գործունեություն է ծավալում համաձայն 2013 թվականի փետրվարին Գիտխորհրդում հաստատված կանոնակարգի դրույթների:

Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի շրջանակներում, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ուսանողներին էլեկտրոնային հասցեների միջոցով փոխանցում էին ուսանողի ուղեցույց ձեռնարկը, որի միջոցով վերջիններս տեղեկացվում էին իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Հիմնականում հարցեր և խնդիրներ առաջանալու դեպքում ուսանողները դիմում են վարչական անձնակազմին, ֆակուլտետային խորհրդին, ՈՒԽ-ին, ռեկտորատ:

ՈՒԽ անդամները համագործակցում են նաև բարեգործական և հասարակական կազմակերպությունների հետ:

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ նաև, որ առկա է համագործակցություն ֆակուլտետային խորհուրդների և համալսարանական խորհրդի միջև, միաժամանակ նկատենք նաև, որ ՈՒԽ կազմում ընդգրկված չէին հեռակա ուսուցման համակարգի ուսանողները:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատումը հիմնականում ապահովվում է ուսանողների կողմից դասախոսների, փորձուսուցման կազմակերպման ու անցկացման վերաբերյալ իրականացվող անանուն հարցումների միջոցով: ՆՈԱԿ կողմից կազմակերպվող հարցումների ժամանակ ուսանողները գնահատում են առարկաների դասավանդման և ուսումնառության որակը, ուսումնական հաստատության ռեսուրսային ապահովվածությունը, ենթակառուցվածքները: Որպես այդպիսին, ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման նպատակով իրականացվող հարցումների արդյունավետության գնահատում չի իրականացվում ՄՈՒՀ-ի կողմից:

Նկատենք նաև, որ Ներքին որակի ապահովման կենտրոնի կողմից պլանավորված որոշ աշխատանքներ ժամանակավորապես հետաձգվել են, պատերազմական իրավիճակի պայմաններում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսումնական հաստատության կողմից ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործընթացների կանոնակարգված իրականացումը ինչպես առկա բակալավրիատի ու մագիստրատուրայի, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգի շրջանակներում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ի կողմից ուսումնառությանը նպաստող միջավայրի ստեղծման համատեքստում կարևորություն է տրվում ուսանողների խնդիրների ու կարիքների վերհանման մեխանիզմների կիրառությանը: ՄՈՒՀ-ում առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականության որոշ տարբեր օրինակ ուսանողական անանուն հարցումները, կլոր-սեղան քննարկումները, որոնք հնավորություն են ստեղծում ուսանողների կարիքների վերհանման: Ուսանողական կազմի հետ հանդիպման շրջանակներում նշվեց նաև, որ վերջիններս ազատ են իրենց խնդիրները բարձրաձայնելու նաև համապատասխան ֆակուլտետների դեկանատներում ու ամբիոններում: Միևնույն ժամանակ կարևորվում է կրթական կարիքների վերհանումն ու դրանց արձագանքումը, որի արդյունավետ և նպատակային կազմակերպումը կնպաստի ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը և ուսումնական գործընթացի բարելավմանը:

Ուսումնառության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու տեսանկյունից ՄՄՀ ուսանողներին տրամադրվում են լրացուցիչ խորհրդատվական ծառայություններ, հավելենք նաև, որ գործընթացը տեղի է ունենում կանոնակարգված և նախապես հաստատված ժամանակացույցին համապատասխան: Խորհրդատվական աշխատանքներից ուսանողների բավարարվածությունը գնահատվում է ուսանողական հարցումների հիման վրա, այնուհանդերձ բացակայում են վերջիններիս իրականացման արդյունավետության գնահատման որակական վերլուծություններ:

ՄՈՒՀ-ում վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույց ամրագրված չէ, սակայն ուսանողները առանց խոչընդոտների համապատասխան օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով դիմում են ֆակուլտետների դեկաններին, ամբիոնի վարիչներին և այլ վարչական աշխատակիցների: Այս հանգամանքը ևս փաստում է ՄՄՀ-ի կողմից արդյունավետ ուսումնառություն կազմակերպելու համար գործադրվող ջանքերի մասին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև Կարիերայի կենտրոնի կողմից ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքները, մասնավորապես քայլեր են ձեռնարկվում ուսանող-գործատու համագործակցային հարաբերությունների զարգացման համատեքստում: Այցի շրջանակներում ուսանողները փաստեցին նաև Կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար կազմակերպվող կլոր-սեղան քննարկումների, գործատուների հետ հանդիպումների անցկացման մասին: Կարիերայի կենտրոնի կողմից աշխատանքների առավել համակարգվածությունը և մեծաթիվ գործատուների բազայի ստեղծումը կնպաստի գործատու-ՄՈՒՀ համագործակցության խորացմանը:

Փորձագիտական խումբն ընդհանուր առմամբ խնդրահարույց է դիտարկում ուսանողների ներգրավվածության աստիճանը հետազոտական աշխատանքներում: Ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների իրականացումը հիմնականում սահմանափակվում է անհատական, կուրսային աշխատանքների ներկայացմամբ, որոնք հետազոտական ու վերլուծական բաղադրիչ քիչ են պարունակում: Ուսումնառության շրջանակներում հետազոտական բաղադրիչը առավել ակնհայտ էր Կովկասագիտության դեպքում, որը սակայն չէր տարածվում մնացած մասնագիտությունների վրա: Այս մոտեցման

տարածումը կնպաստի բոլոր կրթական ծրագրերի համահունչ զարգացմանը և հետազոտական բաղադրիչի ներդրմանը բոլոր ծրագրերում:

ՄՈՒՀ-ի ուսանողների իրավունքների պաշտպանության, կրթական և այլ կարիքների վերհանման գործընթացներում ներգրավված են ՄՄՀ տարբեր ստորաբաժանումները, այդ թվում ուսանողական խորհուրդը: ՈՒԽ աշխատանքների առավել թիրախային և արդյունավետ իրականացմանը կնպաստի նաև վերջիններիս աշխատանքի գնահատման համար անցկացված հարցումների որակական վերլուծությունների ներկայացումը:
Կրթական, խորհրդատվական և այլ ծառայություններից ուսանողների բավարարվածության ու գնահատման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը հիմնականում տեղի է ունենում ուսանողական անանուն հարցումների շրջանակներում, ինչպես նաև դասախոսների կողմից ներկայացվող ինքնավերլուծությունների և ամբիոնների վարիչների՝ հաշվետվությունների միջոցով:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի ուսանողների հավաքագրման, ընդունելության հստակ մեխանիզմներ և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերում, գործում են ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ, հաստատության կողմից ուսանողների համար կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ, գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, ուսսանողները ներգրավված են նաև իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացում, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՄՄՀ-ն բավարարում է 4-րդ չափանիշի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը ՄՄՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

2016թ-ին ՄՄՀ-ում մշակվել և հաստատվել է «ՄՄՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակական կազմերի ձևավորման կանոնակարգ», որը ուժի մեջ է մտել 2020թ-ին: Ըստ կանոնակարգի սահմանվում են ՊԴ կազմի հետևյալ տարակարգերը՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ և պրոֆեսոր, որոնց ներկայացվող պահանջները ևս ներկայացված են տվյալ փաստաթղթում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ սույն կանոնակարգին կցված «Հիմնական, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու պարտադիր պայմաններ» հավելվածում չի հիշատակվում ասիստենտի տարակարգի մասին:

«Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակական կազմերի ձևավորման կանոնակարգ»-ի ընդհանուր դրույթների 1.4 կետում սահմանված է, որ ՊԴ կազմը ձևավորվում է մրցույթային և ոչ մրցույթային կարգով: Ըստ ՄՄՀ ինքնավերլուծության էլ «ՄՄՀ-ի ՊԴ կազմը ձևավորվում է ոչ մրցութային կարգով, իսկ անհրաժեշտության դեպքում մրցութային կարգով, աշխատանքային հարաբերությունները հաստատվում են պայմանագրային հիմունքներով» («ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծություն», էջ 55): Այնուամենայնիվ, փորձագիտական այցի պարզվեց, որ ՊԴ կազմի հետ պայմանագրեր կնքելու կամ վերակնքելու գործընթացը իրականացվում է յուրաքանչյուր տարվա վերջում: Հիմնվելով դասախոսների ինքնավերլուծությունների և ուսանողների շրջանում անցկացված հարցումների վրա, ամբիոնի վարիչը առաջարկում է վերակնքել պայմանագիրը տվյալ դասախոսի հետ կամ բավարար ժամաքանակի դեպքում հրավիրել և պայմանագիր կնքել համապատասխան որակավորում ունեցող նոր մասնագետի հետ, և ՊԴ կազմի տեղակալման մրցույթներ չեն հայտարարվում: Դեկանների և ամբիոնների վարիչների ընտրությունը նույնպես մրցույթային կարգով չի իրականացվում:

ՄՄՀ-ն որդեգրել է հիմնական ՊԴ կազմը ընդլայնելու քաղաքականություն, մասնավորապես բարձ աշխատավարձ առաջարկելով գիտական աստիճան և կոչում ունեցող մասնագետներին: Բուհը նաև մասնագետներ է հրավիրում ՀՀ և ՌԴ համալսարաններից՝ անցկացնելու մոդուլային դասախոսություններ: Ըստ ինքնավերլուծության տվյալների 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում ՄՄՀ-ում աշխատել է գիտական աստիճան ունեցող 34 դասախոս, մինչդեռ 2015-2016-ին՝ 23: 2021-22 ուստարում ՄՄՀ-ն ունի 34 հիմնական և 36 համատեղությամբ աշխատող դասախոս, որոնցից 1 պրոֆեսոր, 24 դոցենտ, 8 ավագ դասախոս, 28 ասիստենտ և 22 դասախոս: Նշենք նաև, որ ՊԴ կազմի 1/3-ի տարիքը 60 տարեկանից բարձր է:

2020թ-ին մշակվել և ներդրվել է ՊԴ կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգը, որը, ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, ցավոք չի գործարկվել 44-օրյա արցախյան պատերազմից հետո, որի հետևանքով ՄՄՀ-ում ֆինանսական խնդիրներ են ծագել: Այնուամենայնիվ, դասախոսների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ՊԴ կազմի որոշ անդամների գումարային խրախուսանքներ են տրվել հոբելյանների առթիվ, ստացել են նաև շնորհակալագրեր և պատվոգրեր:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

«ՄՄՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակական կազմերի ձևավորման կանոնակարգ»-ում սահմանված են ՊԴ կազմի յուրաքանչյուր տարակարգին ներկայացվող որակական չափանիշները:

ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ձևակերպված չեն կոնկրետ կրթական ծրագրերի համար: ՄԿԾ-ների մասնագրերում առկա չէ «Մարդկային և նյութական ռեսուրսային ապահովվածություն» հատվածը: Չնայած այս հանգամանքին, ՄՄՀ ամբիոնների ՊԴ կազմի ցուցակից ակնհայտ է, որ դասախոսներն ունեն մասնագիտությանը համապատասխան որակավորում, ինչպես նաև գիտական աստիճան և կոչում:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ՄՄՀ-ում իրականացվում է ՊԴ կազմի պարբերաբար գնահատում մի շարք գործիքների կիրառմամբ, որոնցից կարևոր են ուսանողների կողմից դասախոսների մասնագիտական և մանկավարժական որակների գնահատումը և դասախոսի ինքնավերլուծությունը, որն իրականացվում է հստակ ձևաչափով՝ ըստ ՆՈԱԿ ձեռնարկում տրված ձևաչափի և ՊԴ կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգի, որտեղ կարևորված են դասախոսի ուսումնամեթոդական աշխատանքը, գիտական գործունեությունը և հասարակական գործունեությունը:

Ուսանողների շրջանում անանուն առցանց հարցումներն անցկացվում են ՄՄՀ ՆՈԱԿ-ի կողմից, և արդյունքները փոխանցվում են համապատասխան ամբիոններին և հաշվի առնվում տվյալ դասախոսի հետ պայմանագիրը վերակնքելիս: ՆՈԱԿ-ի կողմից իրականացված վերջին հարցումները ցույց են տալիս, որ 6 բալային համակարգով ՄՄՀ-ի ՊԴ կազմը հիմնականում գնահատվել է 4-5 բալի սահմաններում, հազվադեպ նաև՝ 3-4: Այնուամենայնիվ տվյալները կարող էին տարբեր լինել, եթե գնահատումը իրականացվեր մասնագիտական և մանկավարժական որակների համար առանձին հարցաշարերով: Ինչպես նշեցին ուսանողները փորձագիտական հանդիպումների ընթացքում, իրենք ավելի բարձր կգնահատեին բոլոր դասախոսների մասնագիտական որակները, բայց ցածր կգնահատեին ոմանց մանկավարժական հմտությունները, այդ թվում նաև ուսանող-դասախոս հարաբերությունները կազմակերպելու նրանց հմտությունները:

ՊԴ կազմի գնահատման այլ գործիքներ են նաև դասալսումները և բաց դասերը: Դասալսումները ոչ միայն փորձի փոխանակմանն են նպաստում, այլև օգնում են վերհանել երիտասարդ մասնագետների խնդիրները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ նրանց կցել ավելի փորձառու դասախոսների՝ մենթորների: Մենթորների հետ աշխատանքի արդյունքները դարձյալ գնահատվում են պարբերական դասալսումներով: Փորձագիտական այցի ընթացքում ներկայացվեցին դասալսումների և բաց դասերի հաշվետվությունների օրինակներ, որտեղ մանրամասն նկարագրված էր դասի ամբողջ ընթացքը, նպատակը, կիրառված մեթոդները և վերհանված խնդիրները:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

ՄՄՀ ՆՈԱԿ-ի կողմից մշակվում է «Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների կարգը», ինչը ենթադրում է, որ բուհում դեռևս չի գործում ՊԴ կազմի վերապատրաստումների համակարգված մոտեցում:

ՊԴ կազմը մասնակցել է մի շարք վերապատրաստումների ՀՀ-ում և արտերկրում ՄՄՀ-ի, ինչպես նաև Շվեյցարիայի հարավկովկասյան հիմնադրամի աջակցությամբ: Մինչ 44-օրյա պատերազմը ՄՄՀ-ում անցկացվել են նաև ներքին վերապատրաստումներ, օրինակ՝ անգլերեն լեզվի, համակարգչային հմտությունների:

ՄՄՀ-ի ՊԴ և ուսումնաօժանդակ կազմը ակտիվորեն մասնակցում է ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին: ՊԴ կազմը մասնակցում է վերապատրաստումների

նաև սեփական նախաձեռնությամբ: Դասախոսները տեղեկացնում են իրենց գործընկերներին վերապատրաստման հնարավորությունների մասին իրենց ներքին մեսինջերի խմբում: Այս առումով առանձնապես ակտիվ է ՄՄՀ ՆՈԱԿ-ի ղեկավարը:

Ներկայումս ՄՄՀ Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսները վերապատրաստում են անցնում ԵՊՀ-ից հրավիրված դասախոսների մոտ, ովքեր դասավանդում են «Սոցիալական աշխատանք» մագիստրոսական ծրագրում:

Դասալսումները կարիքների վերհանման հիմնական գործիքն են: Ինչպես արդեն նշվել է 5.3 կետում, դրանց միջոցով վերահսկվում է երիտասարդ դասախոսների մասնագիտական աճը, ինչպես նաև վեր են հանվում նրանց վերապատրաստման կարիքները:

Փորձագիտական այցի շրջանակներում իրականացված դասալսումներից, ինչպես նաև ուսանողների հետ քննարկումներից պարզվեց, որ որոշ դասախոսներ, մասնավորապես տարբեր կազմակերպություններից հրավիրված մասնագետներ, որոնք չունեն մանկավարժական կրթություն, մեթոդաբանական վերապատրաստման կարիք ունեն, քանի որ ոչ միշտ է, որ կիրառում են դասավանդման և ուսումնառության ուսանողակենտրոն մեթոդներ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՄՄՀ-ի կարևոր նպատակներից է հիմնական ՊԴ կազմի համալրումը գիտական աստիճան և կոչում ունեցող մասնագետներով: Այդ մասին է վկայում նաև ՊԴ կազմի հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների հարաբերակցության դինամիկան 2015- 2022թթ-ի միջակայքում: Եթե 2015-2016 ուս.տարում բուհում աշխատել են 23 գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոս, որից միայն 7-ն են եղել հիմնական հաստիքային աշխատողներ, ապա 2021-2022 ուսումնական տարում 34 գիտական աստիճան և կոչում ունեցողներից 16-ը հիմնական հաստիքային աշխատողներ են:

Բուհը վարում է գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսներին բարձր աշխատավարձով շահագրգռելու քաղաքականություն, մշակվել է նաև ՊԴ կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգը, որը կիսով չափ է գործում: Իրականացվում է դասախոսների ուսումնամեթոդական աշխատանքի, գիտական գործունեության և հասարակական գործունեության գնահատում, սակայն, 44-օրյա պատերազմով պայմանավորված ֆինանսական հնարավորությունների սահմանափակությամբ, հավելավճարներ չեն տրամադրվում:

Փորձագիտական այցի շրջանակներում պարզ դարձավ, որ բուհը ոչ միշտ է կարողանում պահպանել համապատասխան ՊԴ կազմով ապահովվածության կայունությունը՝ պայմանավորված մի շարք գործոններով: Որոշ դասախոսներ հրավիրվում են այլ բուհերում աշխատելու: ՊԴ կազմի արտահոսք է եղել նաև 44-օրյա արցախյան պատերազմից հետո: Նման դեպքերում բուհը դիմում է կադրերի ռեզերվին, որը կազմված է այն մասնագետների ցուցակից, որոնք դիմել են ՄՄՀ աշխատանքի անցնելու համար, սակայն ժամաքանակի սղության պատճառով նրանց հետ պայմանագիր չի կնքվել: ՊԴ կազմի պակասը լրացնում են Արցախի և ՀՀ այլ բուհերից դասախոսներ կամ այլ կազմակերպություններից մասնագետներ հրավիրելով: Նշված մասնագետների միջոցով փորձ է արվում նաև ապահովել գործատու-բուհ կապը, քանի որ նրանք կարողանում են նաև ուսանողներին փոխանցել իրենց գործնական փորձը:

Մյուս կողմից, որոշ մասնագիտությունների պահանջարկի նվազման պատճառով ՄՄՀ-ն կանգնում է նաև ՊԴ կազմին համապատասխան ծանրաբեռնվածությամբ ապահովելու խնդրի առջև:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՄՀ-ում առկա չեն ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման հստակ ընթացակարգեր, սակայն կատարվում են մի շարք աշխատանքներ՝ ապահովելու վերապատրաստումներ և խթանելու նրանց գիտահետազոտական աշխատանքը:

Վերջին տարիներին վերապատրաստումներ են անցկացվել ՀՀ տարբեր բուհերից հրավիրված դասախոսների կողմից: Հաշվետու ժամանակահատվածում 14 դասախոս մասնակցել է վերապատրաստման և փորձի փոխանակման եվրոպական համագործակից բուհերում՝ հիմնականում Շվեցարիայի հարավկովկասյան հիմնադրամի աջակցությամբ:

ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեությունը խթանելու նպատակով կազմակերպվում են միջազգային գիտաժողովներ, սեմինարներ և կլոր սեղաններ: ՊԴ կազմի գիտահետազոտական աշխատանքները կարևորվում են նաև նրանց հետ պայմանագրի վերակնքման ժամանակ: Մշակվել է նաև ՊԴ կազմի գնահատման և հավելավճարի սահմանման կարգ, որտեղ մեծ տեղ է հատկացված գիտահետազոտական գործունեությանը:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

2019թ-ին ՄՄՀ-ում իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ՝ օպտիմալացումներ, մասնավորապես ֆակուլտետների և ամբիոնների միավորում՝ պայմանավորված ռեսուրսների վերաբաշխման և օպտիմալ տնօրինման անհրաժեշտությամբ: Կրճատվել է նաև Գիտական և արտաքին կապերի գծով պրոռեկտորի հաստիքը և նրա գործառույթները բաշխվել են այլ վարչական հաստիքների միջև՝ պրոռեկտոր, Կարիերայի կենտրոնի ղեկավար, Կովկասագիտության կենտրոնի ղեկավար:

ՄՄՀ-ում գործող կենտրոնները, ինչպիսիք են Կարիերայի կենտրոնը, ՆՈԱԿ-ը, Կովկասագիտության կենտրոնը չունեն ուսումնաօժանդակ կազմ և բոլոր գործառույթները իրականացնում են միայն այդ կենտրոնների ղեկավարները, կամ դրանք բաշխված են նաև դեկանների և ամբիոնների վարիչների միջև ևս:

Ըստ «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդական կազմերի ձևավորման կանոնակարգ»-ի ուսումնաօժանդակ կազմ են համարվում ամբիոնների ուսումնական կաբինետների վարիչները և գրադարանի աշխատակիցները:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ ՄՄՀ-ն վարում է իր ՊԴ կազմը գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսներով համալրելու քաղաքականություն: Համեմատաբար բարձր աշխատավարձը կարող է լավ մոտիվացիա լինել, սակայն ՄՄՀ-ն պետք է կիրարկի այլ մեխանիզմներ ևս, որպեսզի ապահովի նաև կոնկրետ մասնագիտությունների համար ՊԴ կազմի կայունությունը: ՊԴ կազմի կայունության պահպանման մեխանիզ կարող է լինել ոչ միայն տեղում կադրեր պատրաստելը, կամ Արցախի և ՀՀ այլ բուհերից դասախոսներ հրավիրելը, այլև ուսուցման առցանց հարթակների ավելի հաճախ օգտագործումը, այդ թվում նաև ՀՀ-ից կադրերի ներգրավմամբ:

«ՄՄՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ձևավորման կանոնակարգ»-ում սահմանված են ՊԴ կազմին ներկայացվող պահանջները, սակայն դա բավարար չէ կոնկրետ կրթական ծրագերի համար: Նպատակահարմար կլինի առանձին ՄԿԾ-ների մասնագրերում հավելյալ ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների հատվածը: Կրթական ծրագրերի վերջնարդյունքներից բխող ՊԴ կազմի մասնագիտական կարողությունների ամրագրումը հնարավորություն կտա, որ դասախոսների ընտրության ու գնահատման գործընթացները իրականացվեն՝ հիմքում ունենալով նշված վերջնարդյունքները: Դա նաև համապատասխան հիմք կտրամադրի դասախոսների՝ մրցույթային կարգով ընդունելության համար, ինչպես ամրագրված է վերոնշյալ կանոնակարգում:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն հանգամանքը, որ ՄՄՀ-ում առկա է դասավանդողների գնահատման ուսանողական հարցումների համակարգը՝ հաշվի առնելով այն պրակտիկան, որ հարցումների արդյունքները կիրառվում են դասախոսների աշխատանքային պայմանագրերի վերակնքման ընթացքում: Հարցումների ժամանակ նպատակահարմար կլինի հարցաշարը հստակ տարանջատել ըստ դասախոսի մասնագիտական գիտելիքի և մանկավարժական-մեթոդական հմտությունների և կարողունակությունների, ինչը կարող է ծառայել նաև որպես վերապատրաստումների կարիքները վերհանող գործիք:

Դասալսումների իրականացումը կարևոր նշանակություն ունի դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման գործում: Դրական հանգամանք համարելով այն, որ դասալսումները փաստաթղթավորված են, նշենք, որ առկա չէր վերհանված խնդիրների վերլուծություն և ամփոփում, ինչպես նաև դրանց շտկման համար անհրաժեշտ միջոցառումների համակարգված կազմակերպում: Այս համատեքստում փորձագիտական խումբը դրական է գնահատում սկսնակ դասախոսների համար մենթորների նշանակումը, ինչպես նաև դասախոսների ինքնագնահատման համակարգի ներդնումը:

Դրական գնահատելով այն փաստը, որ ՊԴ կազմի վերապատրաստումների հարցը դասվում է ՄՄՀ առաջնահերթությունների շարքին, նշենք, որ անհրաժեշտ է դասախոսների պարբերական և համակարգված վերապատրաստումների կարգ, որտեղ կենտրոնական պետք է լինեն օտար լեզվին, տեղեկատվական տեխնոլոգիաներին և արդի ուսանողակենտրոն մեթոդներին տիրապետելու հմտությունները: Անհրաժեշտ է նաև ուշադրության կենտրոնում պահել ՊԴ կազմը երիտասարդ մասնագետներով համալրելու խնդիրը:

ՄՄՀ-ն ունի սահմանափակ ուսումնաօժանդակ կազմ, ինչը կարող է որոշ հանգամանքներում ազդել կրթության կազմակերպման վրա: Առկա չեն նաև վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի գործունեության որակի գնահատման մեխանիմներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Հաշվի առնելով, որ ՄՄՀ-ի ամբիոնները համալրված են կրթական ծրագրերի համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով, որոնք պատրաստ են անընդհատ վերապատրաստվել և բարելավել իրենց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, դասավանդում են ոլորտի պրակտիկ ներկայացուցիչներ, ուսանողները բավարարված են դասախոսական կազմի բարձր որակներով, և նկատված թերությունները կապված են հետպատերազմյա իրավիճակի հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՄՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով և բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագիտական խումբը ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՄՄՀ-ի 2019-2023թթ. ռազմավարական ծրագրում «Հետազոտության գերազանցությունը» սահմանված է որպես ՄՈՒՀ-ի գործունեության գերակա ուղղություններից մեկը, ինչն արտացոլված է նաև տեսլականում՝ «ստեղծել գիտագործնական հարթակ՝ արցախյան ակադեմիական մտքի զարգացման համար»: Այս համատեքստում ՄՄՀ-ն առանձնահատուկ կարևորում է միջազգային գիտաժողովների կազմակերպումը, այդ թվում նաև «ուսանողական գիտաժողովների, ուսանողների շրջանում հետազոտությունների իրականացնելու մոտիվացիա խթանումը մենթորների աջակցությամբ, ինչպես նաև ՊԴ կազմի հետ համատեղ գիտական աշխատանքների միջոցով» (ՄՄՀ 2019-2022թթ ՌԾ ներդրման պլան):

2015թ-ից ի վեր ՄՄՀ-ն հստակեցրել է գիտահետազոտական ոլորտում իր հետաքրքրությունը՝ գերակա ուղղություն ճանաչելով Կովկասագիտությունը: 2015թ-ին բացվել է Կովկասագիտության կենտրոնը, որտեղ միավորվել են ՄՄՀ-ում գործող երեք տարբեր կենտրոններ, ինչը փաստում է աշխատանքները համակարգելու ՄՈՒՀ-ի նպատակաուղղված գործունեության մասին: Հետագայում ներդրվել է «Կովկասագիտություն» ՄԿԾ-ն, որը, մի կողմից ապահովել է ուսանողների կայուն հոսք, մյուս կողմից նոր մասնագետներ պատրաստելու հնարավորություն, որոնք կշարունակեն գիտահետազոտական աշխատանքները տվյալ ոլորտում: Նշենք, որ 2016-2021թթ. կազմակերպված յոթ միջազգային գիտաժողովներից հինգը նախաձեռնել է Կովկասագիտության կենտրոնը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց նաև, որ ՈՒԳ-ում առանձնապես ակտիվ են «Կովկասագիտություն» կրթական ծրագրի ուսանողները, ինչին հնարավոր է նպաստում է նաև այն փաստը, որ տվյալ

կրթական ծրագրի շրջանակում հենց առաջին կուրսում ուսանողներին հետազոտական թեմաներ են տրվում, որոնց վրա նրանք շարունակաբար աշխատում են ամբողջ ուսումնառության ընթացքում:

Գովելի է նաև այն փաստը, որ որոշ կրթական ծրագրերում ներդրվել է «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացը: Հետազոտական բաղադրիչ է ներառվել նաև տարբեր դասընթացներում՝ ինքնուրույն աշխատանքների ձևաչափով:

Գնահատելի է նաև այն փաստը, որ, չնայած սահմանափակ ֆինանսական ռեսուրսներին ՄՄՀ-ն բյուջեով գումար է հատկացնում նաև գիտական աշխատանքների տպագրության և միջազգային գիտաժողովների կազմակերպման համար: Մինչ 44-օրյա պատերազմը բուհին հաջողվել է ֆինանսական խնդիրները լուծել միջազգային հիմնադրամների աջակցությամբ:

Թեև ՄՄՀ-ն չունի իր հետազոտական առանձնահատկությունները հստակ ձևակերպող քաղաքականություն կամ գիտահետազոտական ոլորտին առնչվող առանձին ռազմավարություն, բացի ՄՄՀ-ի Ռազմավարական ծրագրում և դրա ներդրման պլանում ներառված մի քանի ընդհանուր տիպի դրույթներից և միջոցառումներից, ակնհայտ է, որ ՄՄՀ-ն ընտրել է իր հետազոտական առաջնահերթությունը՝ Կովկասագիտությունը: Կովկասագիտության կենտրոնն ունի իր կանոնակարգը և զարգացման հայեցակարգը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ ՄՄՀ-ն պետք է ուշադրության կենտրոնում պահի նաև գիտահետազոտական այլ ուղղությունները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն իրականացնել նաև բուհում գործող այլ կրթական ծրագրերը:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՄՄՀ-ի 2019-2023թթ ՌԾ-ն ներկայացնում է հետազոտության ոլորտի երկարաժամկետ պլանավորման ռազմավարությունը, որի իրականացման ուղղությամբ մշակված է ներդրման պլան: Ըստ Ռազմավարական ծրագրի ներդրման պլանի, կարևորվում են միջազգային գիտաժողովների կազմակերպումը, ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության խթանումը, գիտական աշխատանքների հրապարակայնացումը և ուսանողների հետազոտական աշխատանքների խթանումը: Նշված առաջնահերթությունները սահմանված են նաև ամբիոնների ռազմավարական ծրագրերում: Բնական է, որ յուրաքանչյուր ամբիոն ունի իր գիտական առաջնահերթությունները: Պատմության ամբիոնը զբաղվում է Արցախի գյուղերի պատմության արձանագրմամբ, ամբիոնին կից գործող Կովկասագիտության կենտրոնն ունի իր զարգացման տեսլականը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնը՝ բարբառագիտությամբ, օտար լեզուների ամբիոնը համագործակցում է Ազգային արագացման նախաձեռնության հետ և և իրականացնում է լեզուների թվայնացման և արհեստական բանականության կարևոր գործիքների և բաղադրիչների մշակման աշխատանքներ, որին մասնակցում են ամբիոնի դասախոսներն ու ուսանողները:

Ամենամյա գիտաժողովների կազմակերպումը բուհը դիտարկում է որպես կարճաժամկետ ծրագիր: Նշենք, որ գիտաժողովները կազմակերպվում են նաև այլ բուհերի հետ համատեղ՝ միջազգային հիմնադրամների օժանդակությամբ: Գիտաժողովների նյութերի ժողովածուները տպագրվում են և փոխանցվում մի շարք գրադարանների և կենտրոնների:

Դրանք հասանելի են նաև ՄՄՀ գործընկեր հանդիսացող Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման նախագիծ՝ Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում՝ էլեկտրոնային տարբերակով: Դրական փաստ է նաև այն, որ ՄՄՀ-ի ուսանողները և դասախոսները մասնակցում են նաև ՀՀ համալսարաններում կազմակերպված գիտաժողովներին:

Պետք է նշել, որ ՄՄՀ-ն հաջողությամբ օգտվել է միջազգային հիմնադրամների օժանդակությունից մինչև 2020թ-ի արցախյան պատերազմը: Ներկայումս միջազգային գիտաժողովների կազմակերպման շարունակականությունը պահպանելու համար բուհը ստիպված կլինի դիմել այլ հիմնադրամների կամ դրամաշնորհային ծրագրերի:

Գիտահետազոտական զարգացման մաս է կազմում նաև 2006 թվականից համալսարանում հրատարակվող «Գիտական տեղեկագիր» հանդեսը, որը 2007թ. վերանվանվել է «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» (գիտական հոդվածների ժողովածու): Այն լույս է տեսնում Մեսրոպ Մաշտոց Համալսարանի և Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդների որոշմամբ և ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ընդգրկվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:

ՄՄՀ-ն հետազոտական աշխատանքները խթանելու կարևոր գործոն է համարում ուսանողական գիտական հարթակի ստեղծումը: Թեև բուհում գործում է ՈՒԳԸ, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այն դեռևս չի կարող ապահովել ուսանողների բազմակողմանի ընդգրկումը բուհի գիտական գործունեությանը: Այս առումով պետք է նշել, որ ուսանողների հետազոտական գործունեության խթանման համար խոչընդոտ է նաև ուսանողների սոցիալական խնդիրները. շատ ուսանողներ ստիպված են համատեղել կրթությունը աշխատանքի հետ, ինչը բնականաբար բացասական է անդրադառնում և նրանց կրթության որակի և հետազոտական աշխատանքով զբաղվելու հնարավորությունների վար:

Չնայած իրականացված տարրաբնույթ աշխատանքների, ընդհանուր առմամբ, բուհի գիտահետազոտական գործունեությունը ավելի համակարգված կլիներ, եթե մշակվեր գիտահետազոտական աշխատանքների ռազմավարություն, որտեղ հստակ կտարանջատվեին կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՄՄՀ-ում մշակվել են մի շարք կարգեր և կանոնակարգեր զարգացնելու հետազոտության իրականացումը, մասնավորապես՝ «Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգ», «ՊԴ կազմի գնահատման և խրախուսման կարգ», որտեղ մեծ տեղ է հատկացված գիտահետազոտական գործունեությանը: Գիտահետազոտական գործունեությունը նաև կարևորվում է դասախոսների ինքնավերլուծության ձևաչափում: Հետազոտական աշխատանքների մոտիվացիայի բարձրացման նպատակով ՄՄՀ-ում գործում է աշխատավարձերի տարբերակված կարգ: Բուհը նաև խրախուսում է ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեությունը՝ տպագրելով նրանց գիտական հոդվածները կամ ուսումնամեթոդական ձեռնարկները, դասագրքերը:

Ընդհանուր առմամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ մշակված կարգերը բավարար չեն «Հետազոտության գերազանցություն» ռազմավարական նպատակի լիարժեք և արդյունավետ իրականացման համար և ՄՄՀ-ն պետք է մշակի ավելի համապարփակ հետազոտության ռազմավարական ծրագիր և մի շարք այլ կանոնակարգեր՝ ավելի համակարգված աշխատանքների իրականացնելու, միջամբիոնային կապերը բարելավելու և միջգիտակարգային հետազոտությունները խթանելու ուղղությամբ:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՄՄՀ-ի համար հետազոտության միջազգայնացման հիմնական գործիքը տարիներ շարունակ եղել է միջազգային գիտաժողովների կազմակերպումը: Գովելի է բուհի համագործակցությունը այլ չճանաչված պետությունների բուհերի և գիտնականների հետ: ՄՄՀ-ն համագործակցում է նաև ՀՀ և Ռուսաստանի մի շարք բուհերի և կենտրոնների հետ («Կովկասի աշխարհ» միջազգային հետազոտությունների կենտրոն, (ՌԴ, Դոնի Ռոստով) «Փորձագիտական աջակցության կենտրոն» (Հարավային Օսիա), Կովկասի ինստիտուտ (Երևան)):

ՄՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը բավականին ակտիվ է համալսարանում կազմակերպված գիտաժողովներին մասնակցելու և համալսարանի պարբերականում հոդվածներ հրատարակելու առումով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ միջազգային պարբերականներում համալսարանի դասախոսների գիտական աշխատանքների հրապարակումների թիվը սահմանափակ է: Հաշվետու ժամանակահատվածում ՌԴ և արտասահմանյան պարբերականներում տպագրվել է 12 հոդված, ՀՀ-ում և Արցախում տպագրվող պարբերականներում՝ 22 հոդված, իսկ «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» պարբերականում՝ 58:

Նշենք նաև, որ ՄՄՀ-ում չկան տվյալներ միջազգային պարբերականներում տպագրված գիտական աշխատությունների մեջբերումների ցուցանիշի մասին: 2018թ-ին ՄՄՀ-ն համատեղ հոդվածների ժողովածու է հրատարակել Центр системных региональных исследований и прогнозирования ИППК ЮФУ и ИСПИ РАН-ի հետ, որը երկրորդ նման ժողովածուն է: Առաջինը տպագրվել է 2013թ-ին:

Գովելի է նաև ուսանողների մասնակցությունը ոչ միայն ՄՄՀ-ում, այլև ՀՀ-ի բուհերում կազմակերպված միջազգային և ներբուհական գիտաժողովներին:

Ներկայումս Կովկասագիտության կենտրոնը համագործակցում է Մշակութային ժառանգության պահպանության գործակալության հետ՝ տպագրելու 4 հատորյա մատենաշար՝ նվիրված Արցախի վտանգված մշակութային ժառանգությանը:

Պետք է նշել, որ թեև ՄՄՀ-ն ունի պայմանագրեր և համաձայնագրեր ՀՀ և արտասահմանյան մի շարք համալսարանների հետ, դրանք չեն իրականացվում մի շարք սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոններից ելնելով: Բուհի ՊԴ կազմը ակտիվ չէ այլ բուհերի, այդ թվում նաև արտասահմանյան, գիտնականների հետ համատեղ հետազոտական աշխատանքներ իրականացնելու առումով: Նշենք նաև, որ ՊԴ կազմի միայն 27%-ն է տիրապետում օտար լեզվի՝ անգլերենին: Ավելին, ՄՄՀ-ում առկա չեն գիտական աշխատանքների որակի գնահատման մեխանիզմներ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՄՄՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներից է դիտարկվում դասընթացներում ուսանողների կողմից ինքնուրույն/անհատական աշխատանքի կատարումը, որը ենթադրում է վերլուծական աշխատանք: Այնուամենայնիվ, ինքնուրույն աշխատանքների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ չկան: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հետազոտական և վերլուծական մասը քիչ է ներկայացված ինքնուրույն աշխատանքներում, այդ թվում նաև կուրսային աշխատանքներում: Արժե նշել անգլերեն լեզվի գործնական դասընթացներում ընդգրկված ինքնուրույն աշխատանքի մասին, որի շրջանակում ուսանողները աշխատում են հայ ազգային կորպուսի բարելավման վրա: Որոշ ՄԿԾ-ներում ներդրվել է նաև «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացը:

ՄՄՀ-ում խրախուսվում է նաև հետազոտական աշխատանքի շարունակականության պահպանումը: Այսպես, ուսանողները որպես ավարտական աշխատանք են շարունակում իրենց կուրսային աշխատանքի թեման: «Կովկասագիտություն» կրթական ծրագրի շրջանակում ուսանողները հետազոտական թեմա են ընտրում առաջին կուրսից: Հետազոտական բաղադրիչ է ներառված նաև այս կրթական ծրագրի փորձուսուցման շրջանակում. փորձուսուցման վերջում ուսանողները հանդես են գալիս զեկույցով:

Որպես դրական փաստ կարելի է արձանագրել միջազգային գիտաժողովի մասնակից գիտնականների կողմից դասախոսությունների կազմակերպումը ՄՄՀ-ի ուսանողների համար:

Փորձագիտական այցի շրջանակում պարզ դարձավ նաև, որ ՊԴ կազմը բավականին ակտիվ է դասագրքեր և ձեռնարկներ կազմելու հարցում: Օրինակ՝ «Կովկասագիտություն» մասնագիտության բոլոր կուրսերի համար կազմվել է աղրբեջաներենի դասագրքեր, որոնք հաջողությամբ կիրառվում են դասավանդման գործընթացում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՄՀ-ն գիտահետազոտական ուղղության զարգացումը դասում է առաջնահերթությունների շարքին և իր գործունեության ողջ ընթացքում ձգտել է խթանել այն՝ ներգրավելով հիմնադրամների և դրամաշնորհների հնարավորությունները:

Գովելի է նաև ՄՄՀ-ի կողմից Կովկասագիտության՝ որպես հետազոտական գերակա ուղղության կանխորոշումը, ինչը կարևոր է փոքր և ֆինանսական սահմանափակ հնարավորություններ ունեցող բուհի համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև այն փաստը, որ ՄՄՀ-ի մյուս ամբիոնները ևս փորձում են սահմանել իրենց գիտական հետաքրքրությունների շրջանակը:

Մյուս կողմից, փորձագիտական խումբը թերի է համարում գիտահետազոտական ոլորտին առնչվող ռազմավարությունը: Հետազոտության հստակ ռազմավարության սահմանումը, համապատասխան կարգերի, մասնավորապես գիտական աշխատանքների որակի ապահովման մեխանիզմներին առնչվող կարգերի մշակումը կնպաստի ոլորտի զարգացմանը և բարձրորակ հետազոտական արտադրանքի ստեղծմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի ներդնումը, դասընթացների մեծ մասում ինքնուրույն աշխատանքի բաղադրիչի առկայությունը, կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների համապատասխանությունը կրթական ծրագրի պահանջներին և ուսումնառության վերջնարդյունքներին: Այս ամենը կարող է նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքներ իրականացնելու, քննական և վերլուծական մտածողության հմտությունների զարգացմանը, նաև խթանել ուսանողների որոշակի շրջանակի հետաքրքրությունը գիտության և գիտահետազոտական աշխատանքների հանդեպ:

Փորձագիտական այցի շրջանակում կայացած հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՄՀ-ի ՈՒԳԸ-ում ներգրաված են այդպիսի ուսանողներ, ովքեր մեծ ոգևորությամբ մասնակցում են գիտաժողովների: ՄՄՀ-ի կողմից համապատասխան ուղղորդման և նպաստավոր պայմաններ, օրինակ՝ օտար լեզվի դասընթացներ, ապահովելու դեպքում հնարավոր է ստեղծել երիտասարդ գիտնականների թիմ, որը կարող է զբաղվել Արցախի հիմնախնդիրների հետազոտությամբ և հետագայում նաև միջազգայնացմամբ:

Դրական կարելի է գնահատել նաև պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը խթանելու ձգտումը, որն արտահայտվում է համեմատաբար բարձր աշխատավարձի վճարմամբ: Գիտահետազոտական աշխատանքը նաև նրանց հետ աշխատանքային պայմանագրերը վերակնքերու կարևոր նախապայման է:

Բնական է, որ գիտահետազոտական ոլորտի զարգացումը դեռևս չի հասել համապատասխան մակարդակի, որտեղ հաշվի կառնվեն ոչ միայն քանակական տվյալները, այլև ավելի մեծ ուշադրության կարժանանա գիտական աշխատանքների որակը և դրանց կարևորությունը Արցախի հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև դրանց միջազգայնացման առումով: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել գիտական աշխատանքների որակի գնահատման ցուցիչներ:

ՄՄՀ-ն աշխատանքներ ունի անելու նաև հետազոտության ֆինանսավորման նոր աղբյուրներ գտնելու ուղղությամբ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Հաշվի առնելով, որ ՄՄՀ-ն նախանշել է իր հետազոտության գերակա ուղղությունը և հետևողականորեն զարգացնում է այն, փորձում է մշակել և ներդնել ՊԴ կազմի գիտահետազոտական աշխատանքները խրախուսելու մեխանիզմներ, կարևորվում է հետազոտական բաղադրիչի ներդրումը դասընթացներում, կարևորում է նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների համապատասխանությունը կրթական ծրագրերով շնորհվող որակավորումներին՝ փորձագիտական խումբը համարում է, որ ՄՄՀ-ն բավարարում է չափանիշ 6-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է բավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՄՄՀ-ն ունի մեկ մասնաշենք: Ըստ ինքնավերլուծության, առկա է նոր ուսումնական շենքի նախագիծ: Սակայն, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ աշխատանքները հետաձգվում են՝ ֆինանսական ռեսուրսներով պայմանավորված: Բուհն ունի մոտ 615 ուսանող, որոնց ուսումնառությունը կազմակերպվում է 12 լսարաններում: Լսարանների սահմանափակ թվի պատճառով համալսարանը աշխատում է երկու հերթով առկա ուսուցման համակարգում, իսկ հեռական ուսուցման համակարգի դասերը կազմակերպվում են փորձուսուցումների շրջանում:

Ուսանողների ուսումնառության և հետազոտական գործառույթներին է ծառայում ընթերցասրահ/գրադարանը, հագեցած գրականությամբ, WiFi կապը, ինչպես նաև համակարգչային լսարանը, դահլիճը և այլն: Սակայն, ընթերցասրահը և գրադարանն առանձնացված չեն: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրադարանը նոր գրականությամբ համալրելու համար պարբերաբար ցանկ է ներկայացվում, սակայն ցանկը կազմելիս հաշվի չեն առնում ՄԿԾ-ում նշված հիմնական գրականությունը՝ անհրաժեշտ մասնագիտական գրքերն ապահովելու համար: Ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, գրադարաններում մասնագիտական գրականություն առկա է, ՄՄՀ-ն օգտվում է նաև Արցախի պետական համալսարանի գրադարանի, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի գրադարանի ընձեռած հնարավորություններից: Ուսանողներին հասանելի են նաև գրականության որոշ էլեկտրոնային ռեսուրսներ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել նաև, որ ՄՈՒՀ-ի գրադարանը չի համագործակցում միջազգային գրադարանների հետ, ինչպես նաև բաժանորդագրված չէ որևէ տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանի, ինչը պայմանավորված է երկրում տիրող իրավիճակով: Նշենք նաև, որ գրադարանում չեն իրականացվում թվայնացման աշխատանքներ:

Ուսանողների գործնական կարողությունները զարգացնելու համար հիմնվել է կրիմինալիստիկայի լսարան: ՄՈՒՀ-ն ունի երկու համակարգչային լսարան դասընթացների և քննությունների կազմակերպման համար, սակայն համակարգիչների բազան նույնպես համալրման և թարմացման կարիք ունի:

Համալսարանում բացակայում է մարզադահլիճը, օգտվում են համալսարանին մոտ գտնվող 8-րդ դպրոցի մարզադահլիճից, այս ուղղությամբ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում առաջիկայում մարզադահլիճ ունենալու համար:

Առկա է բուժկետ, որը համալրված է առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքներով, առկա է հիվանդների գրանցման մատյան:

Հիմնվելով անցկացված հարցումների և փորձագիտական այցի ընթացքում հանդիպումների արդյունքների վրա՝ կարելի է փաստել, որ ուսումնառության համար տրամադրվող ռեսուրսները սուղ են և ինչ-որ չափով խանգարում են կրթական վերջնարդյունքների ձևավորմանը:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ինքնավերլուծության համաձայն, Համալսարանի ծախսերը պլանավորվում են՝ ելնելով կարիքներից և ֆինանսական հնարավորություններից, 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն: ՄՈՒՀ-ի ֆինանսական եկամուտների մեծ մասը կազմվում են վարձավճարներից, ինչպես նաև այլ եկամուտներից, օրինակ՝ պետության օժանդակություն, լրացուցիչ դասընթացներ, սակայն կան դրամաշնորհային համագործակցություններ, որոնք այլևս չեն շարունակվում, պայմանավորված երկրում տիրող պատերազմական իրավիճակով: ԱՀ Կառավարության որոշման համաձայն՝ ՄՄՀ-ի ուսանողների 2020-2021 ուստարվա ուսումնական վարձավճարները փոխանցվել է կառավարության կողմից: Սակայն, կառավարության կողմից փոխհատուցվող գումարը նվազել է 50 միլիոն ՀՀ դրամի չափով:

Ֆինանսական ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում աշխատավարձերի ֆոնդին: Սակայն, ՄՈՒՀ-ը փորձում է գտնել ֆինանսական այլ աղբյուրներ ռեսուրսների բարելավման համար: Պլանավորվող նոր մասնաշենքը զգալիորեն կբարելավեր ռեսուրսների և ուսումնական պրոցեսը կազմակերպելու մակարդակը, սակայն պարզ չէ, թե գործընթացը երբ կիրականացվի:

Անհրաժեշտ միջոցների և սարքավորումների ձեռքբերման կամ թարմացման անհրաժեշտությունը հիմնականում ամրագրվում է ստորաբաժանումների կողմից ներկայացվող պահանջագրերով:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ըստ ինքնավերլուծության, ֆինանսական գործունեության համար հիմք են հանդիսանում Մաշտոցի համալսարանի կանոնադրությունը, Հաշվապահական հաշվառման մասին օրենքը, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ֆինանսների կառավարման քաղաքանությունը: Բյուջեի ընդունումն ու կատարումը վերահսկվում է հիմնադիրների խորհրդի կողմից:

Մաշտոցի համալսարանում փաստացի գործում է ֆինանսական միջոցների բաշխման որոշակի մեխանիզմ համաձայն որի, յուրաքանչյուր տարի կազմվում են հաջորդ տարվա բյուջեի նախահաշիվը: Համալսարանի բյուջեի ընթացիկ ֆինանսական կառավարումն իրականացնում է ռեկտորը: Բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացվում է հաշվետվությունների միջոցով:

Բուհում ձևավորված չեն բյուջեի պլանավորման մեխանիզմներն՝ ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների: Յուրաքանչյուր տարվա վերջում ամբիոնների կողմից ներկայացվում են ուսումնական տարվա համար անհրաժեշտ ռեսուրսները՝ ՊԴ անձնակազմի բեռնվածությունը, անհրաժեշտ գրականության ցանկ և այլ ռեսուրսներ՝ ըստ Բարձրագույն կրթության ուսումնական գործընթացի նախապատրաստման փաստաթղթավորված ընթացակարգի, սակայն առկա չէ կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Համալսարանի ծախսերը պլանավորվում են՝ հիմնվելով առաջնահերթ կարիքների ու ֆինանսական կարողությունների վրա: Համալսարանի բյուջեն հիմնականում ձևավորվում է ուսանողների վճարներից ձևավորվող բազային ֆինանսական միջոցներից, ինչը

փորձագիտական խմբի կարծիքով ստեղծում է բուհի համար որոշակի կախվածություն ուսանողների թվից և ուսման վարձավճարներից:

Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվեց, որ բուհն ընդունում է բյուջեի ֆինանսական աղբյուրների ընդլայնման կարևորությունը: Այդ նպատակով քայլեր են ձեռնարկվում ապահովելու դիմորդների հոսքի կայուն աճը, ինչպես նաև այլընտրանքային աղբյուրների ավելացումը, օրինակ՝ լրացուցիչ դասընթացների կազմակերպումը: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ռիսկերի վեր հանումը և կառավարումն իրավիճակային բնույթ է կրում:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ՄՄՀ-ում իրականացվում են բազմաթիվ հարցումներ, որոնց ընթացքում վեր են հանվում նաև կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության խնդիրները, արդյունքները ներկայացվում են կառավարման մարմիններին՝ լուծում ստանալու համար: Սակայն բուհում թերի է ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետության գնահատումը և ռիսկերի պլանավարումն ու կառավարումը:

Լսարանային ֆոնդի բաշխումն ու պլանավորումն իրականացվում են ֆակուլտետների կողմից ուսումնական տարվա սկզբին՝ ելնելով յուրաքանչյուր մասնագիտությամբ սովորող ուսանողների թվից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լսարանային ֆոնդը բավարար չէ, համալսարանն աշխատում է երկու հերթով, որոշ դեպքերում դասապրոցեսն ընթանում է նաև վարչական անձնակազմի աշխատասենյակներում:

Վարչական անձնակազմը ևս չունի առանձին աշխատասենյակներ, և երկու կամ երեք վարչական պաշտոն զբաղեցնող անձինք աշխատում են մեկ սենյակում: Բուհում չկան ամբիոններին հատկացված աշխատասենյակներ, դրանք տեղակայված են համապատասխան դեկանատում: Ամբիոնների վարիչները ստիպված են օգտվել մեկ համակարգչից: Վերոնշյալը կարող է բացասաբար ազդել ամբիոնների աշխատանքի և ընդհանուր կրթական գործընթացի վրա:

ՄՄՀ-ում առկա է երկու համակարգչային լսարան, կրիմինալիստիկայի կաբինետ, օտար լեզվի լսարան, որտեղ առկա է մասնագիտական գրականություն: Կիրառվում են նաև պրոյեկտորներ: Այնուամենայնիվ, փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ռեսուրսների սղությունը կարող է խոչընդոտել ուսումնական գործընթացի պլանավորման և արդյունավետ իրականացման համար:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Համալսարանում գործում են որոշակի գործիքներ, որոնք ուղղված են տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների կառավարմանը: Դրան են ծառայում մասնավորապես՝ mmu.am կայքէջը, սոցիալական ցանցերում ունեցած հաշիվները, որոնց միջոցով շահակիցները տեղեկացվում են իրականացվող ուսումնական, վարչական, հետազոտական և այլ տեսակի գործընթացների մասին:

Ըստ ինքնավերլուծության, համալսարանում տեղեկատվության տարածմանն ու շահակիցների իրազեկվածության բարձրացմանն էապես նպաստում է կայքէջի միջոցով տեղեկատվության տարածումը: Կայքէջում տեղադրվում է հաշվետվությունների, ընդունելության, ֆակուլտետների, ընթացիկ նորությունների, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

Միևնույն ժամանակ, փորձագիտական այցի ընթացքում փաստվեց, որ ուսումնական հաստատության վարչական որոշումների և հրամանների կատարման գործընթացը չի կարելի համարել կանոնակարգված, աշխատակիցները հանդիպումների մասին տեղեկանում են messenger-ում ստեղծված խմբի, և ոչ կայքէջի միջոցով:

COVID-19 համավարակի պայմաններում ՄՄՀ-ին հաջողվել է ապահովել անխափան աշխատանքն առցանց ուսուցման պայմաններում:

ՄՄՀ-ում հաստատված է առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգը, սակայն դիմումներն ընդունվում են միայն թղթային տարբերակով: Բուհում չի գործում ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ:

7.6 ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Փորձագիտական այցի շրջանակներում փաստվեց, որ համալսարանի տարածքի անվտանգությունն ապահովելու և վերահսկելու համար ներգրավված են նաև անվտանգության աշխատակիցներ/պահակներ: Փորձագիտական այցից և ինքնավերլուծությունից պարզ դարձավ, որ ներկայումս ՄՈՒՀ-ը չի կարողանում ապահովել հատուկ կարիք ունեցող ուսանողների պահանջները: Հատուկ կարիք ունեցողների համար չկան թեքահարթակներ, ինչպես նաև ստեղծված չեն այլ հավելյալ պայմաններ: Սակայն, փորձում են հատուկ կարիք ունեցող ուսանողների դասընթացները կազմակերպել հնարավորինս համարավետ լսարանում /տեղի առումով/: Ուսումնական հաստատությունը չունի հանրակացարան: Համալսարանում առկա է բուժկետ: Բուժկետի ծառայություններից ազատորեն կարողանում են օգտվել ինչպես աշխատակիցները, այնպես էլ ուսանողները: Բուժկետում աշխատում է բուժքույր, ով տեղում ցույց է տալիս առաջին օգնություն:

Ըստ ինքնավերլուծության բուհը չունի կենտրոնացված սննդի կազմակերպման համակարգ: ՆՈԱԿ-ի կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ ուսանողների համար բուֆետն անհրաժեշտություն է: Ստեղծվել է սուրճից և քաղցրավենիքից օգտվելու հնարավորություն:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ՆՈԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվում են հարցումներ ռեսուրսներից բավարավածության գնահատման նպատակով: Փորձագիտական այցի ընթացքում փաստվեց, որ համալսարանի կողմից անցկացվող հարցումներում ընդգրկված են որոշակի հարցեր, որոնք վերաբերում են կրթական ծրագրերի համապատասխան անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, մասնագիտական գրականությամբ և ուսումնամեթոդական այլ նյութերով

բավարարվածությանը, բայց ոչ դրանց կիրառելիությանն ու արդյունավետության գնահատմանը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Փորձագիտական խումբը դրական է համարում բարենպաստ ուսումնական միջավայր և մթնոլորտ ստեղծելու ՄՄՀ-ի ջանքերը: Այնուամենայնիվ, լսարանային ֆոնդի, մասնագիտական գրականության, ինչպես նաև անհրաժեշտ այլ ռեսուրսների, այդ թվում նաև վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմին հատկացված աշխատասենյակների սակավությունը կարող է խոչընդոտել կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Առկա են ֆինանսական ռեսուրսների բաշխման որոշ ընթացակարգեր, սակայն սահմանված չեն ռեսուրսների բաշխման առաջնահերթությունները կամ դրանց որոշման սկզբունքները: Հարկ ենք համարում նշել, որ համալսարանի ծախսերը պլանավորվում են հիմնվելով կարիքների և ֆինանսական կարողությունների վրա: Թերի են բյուջեի պլանավորման մեխանիզմներն, ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների: Նմանատիպ խնդիրները կարող են վտանգել ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների համաչափ զարգացմանը:

Մաշտոցի համալսարանում տեղեկատվության արտաքին և ներքին շրջանառության գործընթացները հիմնված են որոշակի սկզբունքների՝ հասանելիության, թափանցիկության, հարմարավետության վրա: Այնուամենայնիվ, առկա չէ ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կանոնակարգված համակարգ:

Ուսումնական հաստատությունը գործարկում է անվտանգության ապահովման համար բավարար միջոցառումներ, սակայն ընդհանուր առմամբ անվտանգության, առողջապահական ծառայությունները և հատուկ կարիք ունեցող շահակիցների համար նախատեսված պայմանները դեռևս բարելավման կարիք ունեն:

Բուհում անցկացված հարցումների տվյալները փաստում են, որ ուսանողների և ՊԴ անձնակազմի մեծ մասը բավարարված չէ բուհի նյութատեխնիկական ապահովվածությամբ: Փորձագիտական այցի ընթացքում կազմակերպված հանդիպումների ընթացքում է ՄՄՀ-ի ռեսուրսները մատնանշվում էին որպես հիմնական խնդիր, որ առաջնային լուծման կարիք ունի: Բուհում դեռևս չեն իրականացվում ռեսուրսների գնահատում կոնկրետ կրթական ծրագրի իրականացման արդյունավետության տեսանկյունից:

Փորձագիտական խումբն առաջարկում է իրականացնել ռեսուրսների թարմացումների պլանավորում, ինչը թույլ կտա գնահատել անհրաժեշտ ֆինանսական ծախսերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Հաշվի առնելով, որ ՄՄՀ-ի առկա ռեսուրսները՝ մասնավորապես լսարանային ֆոնդը և դրա նյութատեխնիկական հագեցվածությունը, մի շարք ենթակառուցվածքների՝ մարզասրահ, բուֆետ և այլն բացակայությունը խոչընդոտում են ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը դեռևս չունի անհրաժեշտ ռեսուրսներ, սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար: Փորձագիտական խումբը համարում է, որ ՄՄՀ-ը չի բավարարում չափանիշ 7-ի պահանջներին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Փորձագիտական խումբը ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է անբավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Համաձայն ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության, համալսարանում հաշվետվողականության գործընթացը կարգավորելու համար ՆՈԱԿ-ի կողմից մշակված Որակի ապահովման ուղեցույցում ներկայացված են ստորաբաժանումների հաշվետվությունների ձևանմուշները, ինչպես նաև սահմանված են տվյալ հաշվետվությունների ներկայացման ժամկետները: Բուհում հաշվետվողականությունը համակարգված է և իրականացվում է ստորակարգային սկզբունքով՝ դասախոսի ինքնավերլուծություն, ամբիոնի վարիչի հաշվետվություն, ինքնավերլուծություն, ֆակուլտետի դեկանի հաշվետվություն, պրոռեկտորի տարեկան հաշվետվություն, ռեկտորի տարեկան հաշվետվություն: Գիտական խորհուրդի տարեկան աշխատանքային պլանում սահմանված են բուհի մնացյալ ստորաբաժանումների հաշվետվության ժամկետները: Տարվա գործունեությունը ներկայացնող հաշվետվությունում ներառվում է նաև ֆինանսական հաշվետվությունը, որը մշակվում է հաշվապահության կողմից:

Համալսարանում առկա է հաշվետվողականության մշակույթ: Այդուհանդերձ հաշվետվությունները գերազանցապես նկարագրողական են, փաստեր արձանագրող և չեն արտացոլում զարգացման ռազմավարական ծրագրի նպատակները և դրանց ներդրման պլանի միջոցառումները:

Հաշվետվությունները տեղադրված են ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում՝ շահակիցների համար:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Բուհն ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունն ապահովում է համալսարանի պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, տարբեր սոցիալական ցանցերի և կապի այլ միջոցներով: Համալսարանի կայքէջում զետեղվում են դիմորդի և ուսանողի ուղեցույցները, տեղադրված է տեղեկատվություն բուհի մասին, նրա մասնագիտությունների և շնորհվող որակավորումների մասին: Կայքէջում հրապարակվում է համալսարանում տեղի ունեցող հանրային նշանակության միջոցառումների և իրադարձությունների մասին տեղեկատվություն:

Համալսարանի կայքէջում և ֆեյսբուքյան էջում առկա է նորությունների, հայտարարությունների, միջոցառումների և այլ ընթացիկ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչն ապահովում է բուհի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և թափանցիկությունը: Ֆեյսբուքյան էջում պարբերաբար ներկայացվում են բուհի առօրյայի մասին տեղեկատվություն, լուսաբանվում են միջոցառումները: Առանձին ուշադրություն է դարձվել արցախյան 44-օրյա պատերազմին համալսարանի ուսանողների և շրջանավարտների մասնակցությանը, բուհի դասախոսների և ուսանողների ցուցաբերած նյութական ու բարոյական աջակցության դեպքերին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ

բուհի ղեկավարությունն օպերատիվ կերպով արձագանքում է նաև սոցցանցերում և անհատապես բարձրացված խնդիրներին և անում հնարավորինս՝ դրանք լուծելու համար:

Կայքէջի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմորդների համար տրամադրվող տեղեկատվության մեջ ներկայացված չէ առաջարկվող կրթական ծրագրերի բովանդակությունը:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակայնության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի ակտիվ ներգրավումը ռազմավարական ծրագրի կարևորագույն խնդիրներից է: Այս համատեքստում ՄՄՀ-ն կարևորում է հանրային ծառայությունների մատուցումը՝ մասնավորապես լրացուցիչ դասընթացների միջոցով: Ներկայումս, բուհը պայմանագրեր ունի Կարմիչ Խաչի և մի շարք այլ կազմակերպությունների հետ՝ կազմակերպելու դասընթացներ նրանց աշխատակիցների համար:

Ըստ ինքնավերլուծության, հետադարձ կապի մեխանիզմներ են կայքէջը, ֆեյսբուքյան և այլ սոցցանցային էջերը, շահակիցների հետ իրականացվող հարցումները, և այլն: Հետադարձ կապի կարևոր մեխանիզմ է մասնավորապես փորձուսուցումից հետո գործատուների մասնակցությամբ կլոր սեղանների անցկացումը, ինչը հնարավորություն է տալիս վերհանել խնդիրները և բարելավել կրթական ծրագրերը:

Հարկ ենք համարում նշել, որ 2021թ.-ից համալսարանի գործունեության մասին հասարակության իրազեկությունը բարձրացնելու նպատակով, ՄՈՒՀ-ի ղեկավարությունը հրավիրում է մամլո-առլիսներ:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ՄՄՀ-ն իր առաքելության շրջանակում կարևորում է Արցախի հասարակական կյանքից ու անցուդարձից անմասն չմնալը և բոլոր հնարավոր միջոցներով պետության խնդիրների լուծման աջակցելը: Բուհը փորձում է արձագանքել Արցախի մարտահրավերներին իրենց հնարավորությունների շրջանակում:

Համալսարանը կարևորում է հասարակության կրթական, գիտական և մշակութային մակարդակի բարձրացումը: Իրականացվում են կարճաժամկետ դասընթացներ, արտաքին և ներքին շահակիցների կողմից:

Ըստ ինքնավերլուծության, բուհում իրականացվում են միջոցառումներ, ինչպիսիք են՝ ֆակուլտետների և ամբիոնների կողմից կազմակերպվող քննարկումներ, կլոր սեղաններ, ՈՒԽ մշակութային, հայրենասիրական միջոցառումներ: Գնահատելի է ՈՒԽ մասնակցությունը համապետական միջոցառումներին:

Փորձագիտական խումբն արձանագրել է, որ տեղեկատվություն չկա, թե, օրինակ, որքանով են դիպլոմային աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի արդյունքները ներկայացվում գործարար ոլորտի ներկայացուցիչներին և թե որքանով են դրանք կիրառվում տվյալ ոլորտի կոնկրետ խնդիրների լուծման համար: Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել, որ

Կովկասագիտության կենտրոնը ձեռնամուխ է եղել Արցախի վտանգված մշակութային ժառանգության մասին մատենաշարի տպագրությանը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ բուհում առկա է հաշվետվողականության սահմանված և հստակ համակարգ, որը կրում է պարբերական բնույթ: Դրական է գնահատվում ռեկտորի, ստորաբաժանումների և ֆակուլտետների կողմից ներկայացվող հաշվետվությունները: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ աշխատանքի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով վերլուծական մոտեցման ներդրումը կնպաստի խնդիրների բացահայտմանը, չիրականացված աշխատանքների պատճառների վերլուծությանը և շարունակական բարելավման մշակույթի ներդրմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի ձգտումը՝ իր գործունեությունը հասանելի դարձնել հասարակությանը: Կարևոր է այն հանգամանքը, որ համալսարանում առկա են հետադարձ կապի բազմազան գործիքներ, ինչպիսիք են՝ հարցումներ, սեմինար-քննարկումներ, կլոր սեղաններ, կայքէջ, սոցցանցային հարթակներ, և այլն: Որակի ապահովման ենթակառուցվածքը կարող է վերհանել հասարակության հետ կապերի, հաղորդակցման համակարգի խնդիրները, մինչդեռ բուն համակարգի գործառնումը, վերհանված խնդիրների լուծումը այլ հաստիքի պատասխանատվության ներքո պետք է լինի: Հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետության, և առհասարակ, հասարակության հետ կապերի համակարգի համակողմանի վերլուծությունը թույլ կտա վերհանել առկա հնարավոր խնդիրները և դրանց պատճառները՝ թիրախավորելով բարեփոխման հնարավոր ուղիները: Արտաքին շահակիցների, մասնավորապես գործատուների և շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման համար խիստ անհրաժեշտ է ակտիվացնել բուհում գործող կարիերայի կենտրոնի գործունեությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է բուհի ջանքերը գիտելիքի փոխանցման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Իրականացվող վերապատրաստումները, այցելությունները փորձուսուցման և այլ շրջանակներում, նպաստում են հասարակության շրջանում համալսարանի գործունեության մասին տեղեկացվածության բարձրացմանը, ինչպես նաև ՄՄՀ-ի կողմից ստեղծված արժեքների փոխանացմանը հասարակության լայն շերտերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Հաշվի առնելով, որ ՄՄՀ-ում առկա է հաշվետվողականության փորձ, ինչը կարողանում է նպաստել բուհի գործունեության խնդիրների վերհանմանը, բուհը գիտակցում է վերլուծական մոտեցմամբ հաշվետվությունների ներդրման անհրաժեշտությունը, առկա է կայքէջ, ֆեյսբուքյան էջ, որոնք բավականին ակտիվ գործում են և լուսաբանում ներքին գործընթացները, բուհը հանրությանը մատուցում է լրացուցիչ ծառայություններ, փորձագիտական խումբը համարում է, որ ՄՄՀ-ը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Փորձագիտական խումբը ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՄՄՀ-ը կարևորում է կրթության միջազգայնացումը և փորձի փոխանակումը, ինչը հստակ արտացոլված է 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, համաձայն որի համալսարանի առաքելության կարևոր բաղադրիչ է օտար լեզուներով ուսումնական ծրագրերի և դասընթացների համատեղ մշակումը, ուսանողների և ՊԴ անձնակազմի շարժունության ապահովումը, ՄՄՀ-ի ներդրումը տարածաշրջանի և Արցախի զարգացման գործում: Թեև ՄՄՀ-ը չունի արտաքին կապերի զարգացմանը և միջազգայնացմանը վերաբերող մշակված քաղաքականություն, իր հիմնադրման օրվանից համալսարանը ձգտել է արտաքին կապերի համակողմանի զարգացմանը և իր գործունեության միջազգայնացմանը՝ վերջին տարիներին նաև արտաքին ֆինանսական աղբյուրների ներգրավմամբ:

Համագործակցելով SSCF (Swiss South Caucasus Foundation) հիմնադրամի հետ իրականացվել են 13 համատեղ ծրագրեր, ներառյալ օտարերկրյա մասնագետների ներգրավումը կրթական ծրագրերի մշակման ընթացքում, մոդուլային ծրագրերի այլընտրանքային դասընթացները, ուսանողների և անձնակազմի միջազգային գործուղումները, միջազգային գիտաժողովների կազմակերպումը: ԼՂՀ-ում ԿԽՄԿ առաքելության հետ համագործակցության համաձայնագիրը ներառում էր անձնակազմի համար լեզվի ուսուցման դասընթացներ: Առկա են պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության օրինակներ, սակայն դրանց թիվը նվազել է պատերազմի ընթացքում, ինչպես նաև Արցախում Շվեյցարիայի հարավկովկասյան հիմնադրամի գործունեության դադարեցմամբ:

Յուրաքանչյուր տարի իրականացվում են միջազգային գիտաժողովներ, տեղային և արտասահմանյան բուհերի հետ համագործակցության արդյունքում: Մասնավորապես՝ Կովկասագիտության կենտրոնի գործունեության շրջանակներում կազմակերպվել են միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցել են գիտնականներ Հայաստանի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Աբխազիայից, Հարավային Օսեթիայից: Կովկասագիտության կենտրոնի աշխատակիցները ՄՈՒՀ-ում կազմակերպել են միջազգային գիտաժողովներ, ինչպես նաև մասնակցել են տարբեր միջազգային գիտաժողովների: Կովկասագիտության կենտրոնի գիտաշխատողները մասնակցել են միջազգային գիտաժողովների և կլոր սեղանների: Միջազգային գիտաժողովներին մասնակցող արտերկրի և ՀՀ-ի գիտնականները դասախոսություններ են կարդում ՄՄՀ-ի ուսանողների համար:

ՄՄՀ-ն միջազգայնացման զարգացման համար համագործակցում է չճանաչված պետությունների ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակման նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանը մշտապես զարգացնում է իր կապերը Արցախի և ՀՀ տարբեր կազմակերպությունների, կրթական հաստատությունների հետ, որի արդյունքում ուսանողները հնարավորություն են ստանում անցնել փորձուսուցում ՀՀ բուհերում: Դասախոսների փորձի փոխանակում է տեղի ունենում, ՀՀ ուսումնական

հաստատությունների մասնագետներ դասախոսություններով հանդես են գալիս Մեսրոպ Մաշտոց համալսարանում: Օրինակ՝ իրավագիտության ամբիոնի ՊԴ անձնակազմը մասնակցել է տարբեր միջազգային սեմինարների: Փորձ է արվում օգտագործել Սփյուռքի ներուժն ակտիվացնելու դասախոսների և ուսանողների շարժունությունը:

Ըստ ՄՄՀ ինքնավերլուծության, բուհի դիպլոմները ճանաչվում են ԱՊՀ-ում և այլ երկրներում: Համալսարանի շրջանավարտներն աշխատում են ԱՊՀ երկրներում, Դուբայում, Չինաստանում, եվրոպական երկրներում, Իրաքում, ԱՄՆ-ում:

ՄՄՀ-ը պայմանագրեր է կնքում Արցախում գործող կազմակերպությունների հետ՝ մատուցելու լրացուցիչ ծառայություններ: Օրինակ՝ ԿԽՄՔ ԼՂՀ առաքելության գրասենյակի հետ կնքվել են համագործակցության պայմանագրեր անձնակազմի հետ լեզուների ուսուցման դասընթացներ իրականացնելու համար: ՄՄՀ-ը նաև շարունակաբար համագործակցում է Արցախի Հանրապետության դպրոցների հետ՝ մասնագիտական կողմնորոշման, ուսանողների և աշակերտների համար համատեղ ինտելեկտուալ, մշակութային միջոցառումների կազմակերպման և այլ ուղղություններով:

Բուհում կանոնակարգող փաստաթղթերի, ուսումնական, տեղեկատվական փաթեթների որոշ մասը ներկայացված է երկլեզու՝ հայերեն և անգլերեն, բուհի պաշտոնական կայքէջում:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Ըստ ՄՄՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության, մինչև 2020թ. նոյեմբեր Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը համակարգում էր Գիտական և արտաքին գծով պրոռեկտորը, այնուհետև, տվյալ պաշտոնի չեղարկումից հետո, գործառույթները բաշխվել են Կարիերայի կենտրոնի և Կովկասագիտության կենտրոնի ղեկավարների միջև, իսկ աշխատանքների վերահսկողությունը իրականացվում է ՄՄՀ-ի պրոռեկտորի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային գիտաժողովներ հաջողությամբ կազմակերպվել է Կովկասագիտության կենտրոնի կողմից: Կարիերայի կենտրոնի գործառույթների շրջանակում է արտաքին կապերի ստեղծում, մասնավորապես Արցախի տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Բուհում իրականացվել է միջազգայնացմանը և արտաքին կապերի զարգացմանն ուղղված ծախսեր՝ կապված պայմանագրերի կնքման, տարբեր միջազգային համալսարաններ այցեր կատարելու, պարբերաբար միջազգային գիտաժողովներ կազմակերպելու և այլնի հետ:

Համալսարանի արտաքին կապերով զբաղվող աշխատակիցներն ապահովում են գործընթացի սահուն ընթացքը:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Ըստ ՄՄՀ ինքնավերլուծության, ՄՄՀ-ն բաց է համագործակցության համար: Համալսարանի ռեկտորը «The Club of the Rectors of Europe»-ի անդամ է: Միջազգային գիտաժողովների արդյունքում պամանագրեր են կնքվել այլ բուհերի հետ: Համալսարանը կնքել է համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր մի շարք տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ: Միջազգային գիտաժողովների կազմակերպումը

հնարավորություն է ընձեռում ոչ միայն ներկայացնել Արցախը ՀՀ և արտերկրից ժամանած դասախոսներին և ուսանողներին, այլև օգնել համալսարանի ուսանողներին և դասախոսներին բարելավել իրենց օտար լեզվի իմացությունը և կապեր հաստատել արտասահմանցի գործընկերների և ուսանողների հետ՝ հետագայում համագործակցության ակնկալիքով:

ՄՄՀ հրավիրվում են արտերկրից և ՀՀ-ից դասախոսներ, որոնք հանդես են գալիս դասախոսություններով, կազմակերպում սեմինարներ՝ առցանց կամ առկա: Առկա են դեպքեր, երբ բուհի դասախոսներն են այցելել այլ բուհեր:

Տեղական կազմակերպությունների հետ՝ դպրոցներ, քոլեջներ, բուհեր, ԱՀ պետական կառավարման մարմիններ, բանկեր, համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է փորձուսուցման կազմակերպմամբ և այդ կազմակերպություններից դասախոսների հրավիրմամբ: Համագործակցությունը չի ընդգրկում գիտահետազոտական ոլորտը:

Համաձայն ՄՄՀ ինքնավերլուծության, բուհի կառավարչական անձնակազմը վերապատրաստվել է Մեծ Բրիտանիայում, Դուբայում՝ համագործելով Contract Global Conferences Ltd-ի հետ: Դասախոսների վերապատրաստումն արտերկրի տարբեր բուհերում իրականացվել է հեռավար՝ COVID-19 համավարակով պայմանավորված: Առկա են դասախոսների կողմից ուսուցման որակի բարձրացման նպատակով միջազգային փորձի ուսումնասիրություններ, սակայն այդ դեպքերը քիչ են:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ կնքված պայմանագրերը գործում են: Համալսարանը համագործակցության 8 պայմանագիր է կնքել տարբեր բուհերի և կազմակերպությունների հետ: Որոշ ծրագրերի դասավանդմանը մասնակցում են օտարերկրյա դասախոսներ, իսկ ՄՈՒՀ-ի դասախոսները դասավանդում են նաև այլ բուհերում: Համալսարանն իրականացնում է տարբեր գիտահետազոտական և կրթական ծրագրեր՝ համագործակցելով այլ միջազգային համալսարանների հետ: Համալսարանը ծրագրում է ևս մեկ միջազգային գիտաժողով 2023թ.-ին:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՄՈՒՀ-ի ղեկավար և ՊԴ անձնակազմը գիտակցում է օտար լեզվի իմացության կարևորությունը կրթության որակի բարձրացման, գիտահետազոտական գործունեության միջազգայնացման համար: Միջազգային համագործակցային ծրագրերում ներգրավվածության ընդլայնման նպատակով համալսարանը ձգտում է ապահովել ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի օտար լեզուների իմացության բավարար մակարդակ: Համալսարանում մինչև պատերազմական իրավիճակն իրականացվել է անգլերեն լեզվի խորացված ուսուցում, այժմ պլանավորվում է շարունակել ՊԴ անձնակազմի օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումները:

Ըստ հարցումների, դասախոսական անձնակազմի 27.5% տիրապետում է օտար լեզվի: Ռուսաց լեզվի տիրապետում են համալսարանի բոլոր ուսանողները և դասախոսները: Մագիստրատուրայի մասնագիտական անգլերենը դասավանդվում է ըստ կրթական մակարդակի: Ըստ ինքնավերլուծության, ՄՄՀ-ում անգլերեն լեզվի խորացված ուսուցումը տրամադրվում է «Կառավարում», «Տեղեկատվական համակարգեր», «Ինֆորմատիկա /համակարգչային գիտություններ/», «Անգլերեն լեզու և գրականություն», «Կովկասագիտություն» ՄԿԾ-ի ուսանողներին: Ադրբեջաներենի խորացված ուսուցումը՝ «Կովկասագիտություն» ՄԿԾ-ի ուսանողներին: Այսպիսով, համալսարանի ուսանողներն ու

անձնակազմը ակտիվ զբաղվում են օտար լեզուների ուսումնասիրությամբ, ընդ որում Կովկասագիտության բաժնի ուսանողներին առաջարկվում է մինչև 5 լեզու:

ՄՄՀ-ում սովորող օտարերկրյա ուսանողների համար բոլոր փաստաթղթերը ձևակերպվում են ռուսերեն և անգլերեն լեզուներով: Արտերկրյա ուսանողները հիմնականում Թուրքմենստանից են:

Գործատուները բարձր են գնահատում ուսանողների և շրջանավարտների օտար լեզուների իմացության մակարդակը, իսկ պատերազմի ընթացքում ուսանողներից շատերն աշխատում էին որպես թարգմանիչներ բանակի համար:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՄՄՀ-ը ձեռնարկում է մի շարք աշխատանքներ խթանելու արտաքին կապերը և միջազգայնացման աշխատանքները, որոնք հիմք կստեղծեն առաջիկա զարգացման համար: Հիմնվելով տվյալ ոլորտում իր գործառույթներն ուղղորդող ՌԾ համապատասխան նպատակների վրա, ծավալում է հետևողական գործունեություն միտված միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը, նույնիսկ երկրում տիրող պատերազմական իրավիճակում:

Բուհում միջազգային գործընթացների իրականացման համար առանձին ստորաբաժանում առկա չէ, սակայն դրա առկայությունը կնպաստեր առավել համակարգված և պլանավորված աշխատանքին, սահմանված նպատակների իրականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի կողմից վերջին 3 տարում իրականացված միջազգայնացման զարգացումը, նաև հաշվի է առնում համալսարանի քաղաքական և տնտեսական միջավայրը և կարծում է, որ համալսարանը փորձում է լավագույնս զարգացնել հետագա միջազգային համագործակցությունը: Համալսարանը զարգացնում է համագործակցությունը ՀՀ և չճանաչված պետությունների, ինչպես նաև ՌԴ բուհերի հետ: Կնքվել են համագործակցային պայմանագրեր օտարերկրյա գործընկերների հետ: Կատարված աշխատանքները նպաստում են արտաքին կապերի ուժեղացմանը: Մինչ պատերազմը և COVID-19-ի պատճառով առաջացած սահմանափակումները համալսարանում սովորում էին ուսանողներ արտերկրից: Արտերկրյա ուսանողները հիմնականում Թուրքմենստանից են, պատերազմի հետևանքով արտերկրյա ուսանողների թիվը կարող է նվազել: Համալսարանը պետք է իր կայքէջում առաջարկի իր կրթական ծրագրերի մասին ավելի շատ տեղեկատվություն անգլերեն և ռուսերեն լեզուներով: Նպատակահարմար կլինի ունենալ համալսարանի կայքէջում ռուսերեն և անգլերեն լեզուներով ավելի շատ տեղեկատվություն: Համալսարանը պետք է նաև ուսումնասիրի անձնակազմի և ուսանողների առցանց միջազգային շարժունության ծրագրերը: Հետևաբար, ՄՄՀ-ը պետք է շարունակի միջոցներ ձեռնարկել ֆինանսական աղբյուրներ ներգրավելու ուղղությամբ՝ ապահովելու ուսանողների շարժունությունը:

Բուհի ուսանողները և անձնակազմը տիրապետում են ռուսերեն լեզվի բարձր մակարդակի, բայց ոչ այնքան լավ անգլերենի, և պետք է էլ ավելի բարելավել անգլերենի իրենց գիտելիքն ու մասնագիտական հաղորդակցման հմտությունները, ինչը հնարավորություն կտա օգտվել նաև անգլալեզու մասնագիտական գրականությունից:: Ուսումնական հաստատությունը կարևորում է օտար լեզվի իմացությունը և հնարավորություն է ստեղծում ուսանողների և դասավանդողների լրացուցիչ ուսուցմանը և կատարելագործմանը: Սույն գործընթացի շարունակությունը կարող է շոշափելի ազդեցություն ունենալ համատեղ կրթական

և գիտական ծրագրերի վրա, կնպաստի արտասահմանյան լավ փորձի ուսումնասիրմանը և տեղայնացմանը, շարժունությանը և միջազգայնացման բարելավմանը:

Փորձագիտական խումբը կարծում է, որ համալսարանը կարող է շարունակել դիմել միջազգային դրամաշնորհների, քանի որ դա կակտիվացնի ինչպես ուսանողների, այնպես էլ անձնակազմի շարժունությունը և հետագայում լրացուցիչ կապեր և հնարավոր գործընկերներ կապահովի: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև առցանց շարժունությունը: Ուսանողները կարող են մասնակցել գործընկեր համալսարանների կողմից կազմակերպվող առցանց դասընթացներին, շարունակել տեղեկանալ առկա անվճար դասընթացների մասին, օգտվել համացանցում առկա բաց կրթական հասանելի ռեսուրսներից:

Օտարերկրյա համալսարանների համար գրավիչ լինելու նպատակով լավ կլինի բարելավվի հետազոտության որակը: Սփյուռքի հայտնի շրջանավարտներին որպես հրավիրված դասախոսներ, փորձագետներ, հրավիրելը խիստ անհրաժեշտ է:

Հարկ ենք համարում նշել, որ Արցախի հանրապետության չճանաչված լինելու և բուհի սուղ ֆինանսական միջոցների պատճառով վերը թվարկված գործողությունների իրականացումը բավականին բարդ է:

Փորձագիտական խումբն առաջարկում է ավելի սերտ կապեր հաստատել տեղական այլ բուհերի հետ, կազմակերպել ուսանողների և անձնակազմի համատեղ միջոցառումներ, խաղեր, վիկտորինաներ և գիտաժողովներ: Շարունակել համագործակցությունը արտաքին շահակիցների հետ և նրանց ներգրավել բուհի հետագա զարգացումներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Հաշվի առնելով, որ համալսարանը նման բարդ պայմաններում, ունենալով սահմանափակ ֆինանսական հնարավորություններ՝ ակտիվ գործունեություն է ծավալել իր առաքելության միջազգայնացման բաղադրիչի շարունակական զարգացման և համակարգման համար, կնքել է գործող մի շարք պայմանագրեր տեղական և միջազգային կառույցների հետ, պարբերաբար կազմակերպում է միջազգային գիտաժողովներ, կարևորում է ուսանողների և դասախոսների անգլերեն լեզվի մակարդակի բարձրացումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՄՀ-ը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Փորձագիտական խումբը ՄՄՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է բավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Բուհն ունի ՈԱ քաղաքականություն ու ընթացակարգեր, որոնք ներկայացված են ՈԱ ձեռնարկում: ՈԱ ձեռնարկը որակի ներքին ապահովման համակարգի գործարկման մեթոդական հիմք է: ՈԱ համակարգը սկսել է ներդրվել բուհում 2019 թ.-ից: Մինչ այդ, 2018 թ. ստեղծվել էր ՆՈԱ կենտրոնը և մշակվել դրա կանոնակարգը: ՄՈՒՀ-ի ՈԱ ձեռնարկը

հրապարակվել է 2020 թվականին: ՈԱ-ն հիմնված է համալսարանի հաստատված սկզբունքների, քաղաքականության և ռազմավարական նպատակների ու խնդիրների վրա:

Ըստ ՈԱ ձեռնարկի ՈԱ համակարգի ներդրման նպատակներն են՝ ապահովել բուհի կրթության համադրելիությունը եվրոպական և տեղական չափանիշներին, նպաստել ՈԱ մշակույթի ձևավորմանը, աջակցել ինքնաուսուցանվող համայնքի ձևավորմանը: ՈԱ համակարգի նպատակները համապատասխանում են բուհի առաքելությանը և ռազմավարական պլանին:

ՈԱ կենտրոնը իր առջև խնդիր է դրել կիրառելով ՈԱ գործիքներն անընդհատ տվյալներ հավաքագրել, որոնք վերլուծություն անելու, բուհի ըստ ՌԾ-ի զարգացման ուղիներն ապահովելու հնարավորություն կտան: Կենտրոնն անմիջականորեն ենթարկվում է ռեկտորին: ՈԱ կենտրոնը հետևում է բուհի և ֆակուլտետների ռազմավարական ծրագրերի իրականացմանը և բոլոր ստորաբաժանումների հաշվետվողականության իրականացմանը: ՈԱ ձեռնարկում ներկայացված են ՈԱ սկզբունքները: Ձեռնարկում սահմանված են ՆՈԱ 5 մակարդակներ (հայցորդի, ամբիոնի, ֆակուլտետների, մեթոդական խորհրդի և գիտական ներուժի: Յուրաքանչյուր մակարդակի համար մշակվել են ՈԱ գործիքներ, որոնք պետք է տվյալներ հավաքեն այդ մակարդակի համար: ՈԱ գործիքներից են նաև շահակիցների հարցումները, որոնք արվում են SURVIO և SurveyMonkey, Google Forms առցանց հարթակներում: Ձեռնարկում ներկայացված են նաև այլ գործիքներ՝ դասախոսի ինքնավերլուծության, ամբիոնի վարիչի և դեկանի հաշվետվության ձևաչափերը և այլն:

ՆՈԱԿ-ը ներգրավված է ՄԿԾ-ների մշակման և վերանայման մեջ: ՈԱ ձեռնարկում ներկայացված են ՄԿԾ ռազմավարության իրականացման ընթացակարգը, կրթության որակի հետադարձ կապի համակարգը՝ դրա քարտեզով, բուհի ՌԾ-ն և դրա ներդրման պլանը:

ՈԱ գործընթացների ծավալմանը բուհում մեծապես նպաստել են այն խորհրդատվությունները, որոնք ներդրման ընթացքում ապահովել է ՀՀ ՈԱԱԿ-ը: Դրանց մասնակցել են դասախոսներ ու վարչական աշխատողներ:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՈԱ կենտրոնն ունի մեկ վճարովի հաստիք: Կենտրոնը որպես այդպիսին առանձնացված չէ առանձին աշխատասենյակում, սակայն ապահովված է անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով:

2019 թ. ապրիլի 11-ի հրամանով ձևավորվել է ՆՈԱԿ-ի աշխատախումբը, որի մեջ ներառված են համապատասխան ստորաբաժանումների մասնագետներ: ՈԱ կենտրոնին բուհի սուղ միջոցներից բյուջե է հատկացվում: ՈԱ կենտրոնի ղեկավարի հավաստմամբ դեռևս իրագործվում է ծրագիր մինիմումը, որի համար մարդկային և ֆինանսական ռեսուրսների պակաս չկա: Պլանավորված է հետագայում ֆակուլտետներում ՈԱ պատասխանատուների վճարովի հաստիքներ հիմնել:

2018-2019 թթ. բյուջեի կատարողականում սահմանված էին ֆինանսական միջոցներ՝ ՈԱ գծով տարաբնույթ վերապատրաստումներին բուհի աշխատակիցների մասնակցության

համար: 2020 թ. բյուջեի կատարողականի մեջ, հասկանալի պատճառով, այս միջոցառումների հոդվածները չեն իրականացվել և տեղափոխվել են 2021-2022 ուստարվա կատարողականի մեջ:

ՄՈՒՀ-ը ռեսուրսներ է հատկացնում ՈԱԱԿ-ի աշխատաժողովների և ՈՆԱԿ-ի կողմից կազմակերպվող միջոցառումների ժամանակ կադրերի վերապատրաստման համար: Որակի ապահովման հետ կապված հիմնական աշխատանքներն իրականացնում է կենտրոնի ղեկավարը՝ ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակազմի այլ անդամների հետ միասին: Համալսարանը տրամադրում է բոլոր անհրաժեշտ նյութական և տեխնիկական ռեսուրսները, որոնք կենտրոնը խնդրել է, ներառյալ ծրագրային ապահովումը դիմորդների, ուսանողների, անձնակազմի և շրջանավարտների հետ հարցումներ անցկացնելու համար: Այսպես, SURVIO և SurveyMonkey առցանց հարթակներում համալսարանի անձնական էջերը (accounts) ֆինանսավորվում են բյուջեի հոդվածով:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Համալսարանը ներառում է ներքին և արտաքին շահակիցներին ՈԱ գործընթացում: Օրինակ՝ ուսանողները ներգրավված են ոչ միայն կանոնավոր հարցումներում կիսամյակների ընթացքում, այլև տարեվերջին. նրանք մասնակցում են գործատուների և շրջանավարտների հետ կլոր սեղան-քննարկումներին, ինչպես նաև մասնակցում Ուսանողական խորհրդի և համալսարանի խորհրդի աշխատանքներին: Աշխատակազմը գործատուների հետ միասին նույնպես ներգրավված է հարցումներում և կլոր սեղան-քննարկումներում:

ՊԴ և ՈԻՕ կազմերի ներգրավվածությունը արտահայտվում է՝

- ՄԿԾ մշակման և վերանայման գործընթացում,
- ներգրավմամբ աշխատանքային խմբերում և հանձնաժողովներում, մասնակցությամբ ինքնավերլուծության գործընթացում,
- ՈԱ տարբեր գործիքների կիրառմամբ,
- Հատկապես ակտիվ է աշխատում ՆՈԱԿ-ի աշխատախումբը: Փորձագիտական խմբի հանդիպումները ցույց տվեցին, որ խմբի ներսում կա աշխատանքի բաժանում:

Շահակիցների ներգրավվածությունը երևաց նաև ԻՎ խմբի հետ փորձագետների հանդիպման ընթացքում, որը ցույց տվեց գործընթացի իրապես մասնակցային լինելը:

Ավելի քիչ են ներգրավված գործատուները: Նրանք մասնակցում են փորձուսուցումից հետո կլոր սեղանների քննարկումներին: Գործատուները նաև ընդգրկվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում: Նրանց կարծիքները միշտ ողջունելի են, բայց նրանք բավականին դժկամությամբ են արձագանքում հետագա գործնական քայլերին: Կարելի է առաջարկել պաշտոնական մակարդակի բերել իրենց հարաբերությունները ներքին և արտաքին շահակիցների հետ: Նշվեց գործատուների մասնակցությունը ծրագրերի վերանայումներին, բայց դա պետք է դառնա կանոն, ոչ թե անհատական դեպք: ՊԴ կազմը ներգրավված է դասալսումների մեջ և պարբերաբար հաճախում է միմյանց դասախոսություններին:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Մինչև 2019 թվականը ՈԱ համակարգը լիարժեք զարգացած չէր, բոլոր գնահատումները եղել են բանավոր և նկարագրական բնույթի: 2020 թվականին ՈԱ ձեռնարկի մշակման շնորհիվ աշխատանքը դարձավ ավելի լավ կազմակերպված և ավելի կարևոր: Թեպետ ՈԱ համակարգը ներդրվել է տակավին վերջերս, սակայն հասցրել է որոշ գործիքներ վերանայել: ՈԱ կենտրոնը պլանավորում էր հասնել ավելի մեծ արդյունքների, սակայն 44-օրյա պատերազմի պատճառով աշխատանքների մի մասը չի արվել: Օրինակ, հաշվետվությունները նկարագրողականից դարձել են մի փոքր ավելի վերլուծական: Վերլուծական բաղադրիչը ավելացնելու նպատակով ՆՈԱԿ-ի կողմից մշակվել են համապատասխան ձևաթղթեր: Մշակվել են ՄԿԾ մասնագրերի ձևաչափերը: Սակայն ուսումնական գործընթացի բնականոն իրականացման մոտ կես տարվա ընդհատումը հնարավորություն չի տվել ամբողջությամբ կիրառել բոլոր գործիքները:

Չնայած դրան, փորձագիտական խումբը հնարավորություն ունեցավ ծանոթանալ հաշվետվողականության մեխանիզմին և համեմատել 2 տարվա հաշվետվությունները (2019/2020 և 2020/2021 ուս. տարիների համար): Արված փոփոխությունները բարելավման միտում ունեին, նկարագրականից դարձել էին ավելի վերլուծական:

ՈԱ կենտրոնի կողմից ներդրվել է ՄԿԾ մշակման նոր ձևաչափ, որի համաձայն ՄԿԾ-ները վերանայվել են: Վերամշակվել են ՄԿԾ-ների առարկայական նկարագրերը:

ՆՈԱԿ աշխատախմբի առաջարկով վերանայվել է գնահատման սանդղակը՝ բարձրացվել է ինքնուրույն աշխատանքի բաժնեմասը, ստեղծվել է ինքնուրույն առաջադրանքների քարտեզ:

ՆՈԱԿ աշխատախմբի փորձուսուցման արդյունավետության քննարկման արդյունքում վերանայվել է հաշվետվողականության և փորձուսուցման գնահատման ձևաչափը:

ՈԱ գործընթացների բարելավման համար ուսումնասիրվել է մի շարք համալսարանների փորձը: ՄՈՒՀ-ն օգտագործում է չափորոշիչներ սեփական ծրագրերի մշակման ժամանակ:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հավատարմագրման գործընթացներին ՄՈՒՀ-ը մասնակցում է 2005 թ.-ից: 2005-2010 թթ. հավատարմագրել են բուհի 11 ծրագրերը: 2011 թ. ԱրՀ-ում ներդրվել է հավատարմագրման նոր կարգ: 2019թ. ՈԱ նոր համակարգի ներդրմամբ բուհում սկսվել է նոր գործիքների ստեղծման գործընթաց, որի նպատակներից է եղել նաև արտաքին գնահատման համար հիմքեր ստեղծելը:

ՈԱ ձեռնարկում նախատեսված գործիքակազմը շատ մեծ է, բայց քանի որ համակարգը նոր է ներդրվել, այս պահի դրությամբ հավաքագրվում են միայն հետևյալ տվյալները՝

- *Ուսանողների վերաբերյալ՝*

1. Ուսանողների շարժ,
2. Առաջադիմության ցուցանիշներ,
3. Ռեսուրսներից և դասախոսական կազմից ուսանողների բավարարվածություն,
4. Ուսանողների փորձուսուցման գնահատում:

- *ՊԴ կազմի վերաբերյալ՝*

5. Դասախոսների ԻՎ,
6. Դասախոսի պորտֆոլիո,
7. Դասալսումների կազմակերպում և քննարկում,
8. Ուսանողների կողմից դասախոսի գնահատում,
9. Ամբիոնների վարիչների գնահատում,
10. Ռեսուրսներից անձնակազմի բավարարվածության վերհանում:

- *ՄԿԾ-ների վերաբերյալ՝*

11. Ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունների տվյալների հիման վրա ՄԿԾ-ների գնահատում,
12. Փորձուսուցման ավարտից հետո կլոր սեղանների շուրջ ուսանողների, գործատուների, դասախոսների և ՈԱ կենտրոնի ղեկավարի քննարկում,
13. Դասալսումների միջոցով ՄԿԾ իրականացման մոնիթորինգ,
14. Շրջանավարտի աշխատանքի տեղավորման տվյալներ (հավաքագրվում են 2020թ.-ից):

- *Հետազոտության վերաբերյալ՝*

15. ՈԱԱԿ-ի հարցաշարի հիման վրա դուրս բերված տվյալներով (դասախոսների համար և ուսանողների):

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Որակի ներքին ապահովման համակարգը ապահովում է հաստատությունում գործընթացների թափանցիկությունը՝ ներքին և արտաքին շահակիցներին տրամադրելով դրանց որակի վերաբերյալ վավեր և արդի տեղեկատվություն: ՆՈԱԿ-ի կողմից մշակված ՈԱ ձեռնարկը ապահովում է հաստատությունում գործընթացների թափանցիկությունը՝ օգտագործելով համապատասխան տվյալները և քննադատական ինքնավերլուծությունները:

Բուհի գործունեության թափանցիկության համար հիմք են ստորաբաժանումների կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանք հասանելի են ներքին շահակիցներին համալսարանի ներքին ցանցում, իսկ դրանց հիման վրա արված ռետկորի տարեվերջյան հաշվետվությունը ներկայացվում է բուհի կայքում և հասանելի դառնում նաև արտաքին շահակիցներին:

Բուհի մասին տեղեկատվություն է տրվում նաև ԶԼՄ-ների միջոցով: Հատկապես ակտիվ է գործում Կովկասագիտության կենտրոնը, որը ԶԼՄ-ների և էլեկտրոնային թերթերի միջոցով տեղեկություններ է տալիս բուհի հետազոտությունների վերաբերյալ:

Դրա հետ մեկտեղ փորձագիտական խումբը արձանագրեց, որ բուհի կայքում որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը լիարժեք չի ներկայացված և բարելավման կարիք ունի:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՄՀ կարևորելով որակի ապահովման գործընթացները հիմնել է ՈԱ կենտրոն և հաստիք տրամադրել բուհի սուղ միջոցներից: ՆՈԱԿ-ի աշխատախմբի վրա են դրված նաև այլ

վարչական պարտականություններ: 2019/2020 ուս.տարվա ընթացքում մշակվել են ՈԱ քաղաքականությունն ու ընթացակարգերը: Մշակվել է ՈԱ ձեռնարկը: ՈԱ կենտրոնը անմիջականորեն ենթարկվում է ռեկտորին: ՈԱ կենտրոնը կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի համար ունի ֆինանսական և նյութատեխնիկական անհրաժեշտ միջոցներ: Բուհը հակված է ստեղծել ՈԱ ցանցային համակարգ:

Ստորաբաժանումները ներկայացնում են իրենց վերլուծությունները, ինչին հաջորդում է ներքին գնահատումը ՆՈԱԿ-ի կողմից՝ օգտագործելով համապատասխան գործիքները: Այս ամենը հետագայում արտացոլվում է ՆՈԱԿ-ի և ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ:

ՈԱ կենտրոնի կողմից մշակված գործիքները հեշտացնում են շատ գործընթացների գնահատումը արտաքին փորձագետների համար, բարձրացնում կատարվող աշխատանքի տեսանելիությունը: ՈԱ կենտրոնը, կիրառելով այդ գործիքներ, հավաքագրում է մի շարք տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու ուսումնական գործընթացը և ՄԿԾ-ները տարբեր տեսանկյուններից: Ժամանակի ընթացքում ՈԱ կենտրոնի կողմից պլանավորված տվյալների հավաքագրումը կարող է բավականին նյութ տրամադրել ուսումնական գործընթացի և ՄԿԾ կառավարման վերաբերյալ, սակայն գործարկման ժամանակը կարճ է եղել և տվյալների բազա դեռ չի ստեղծվել: Օրինակ, չկան ՄԿԾ-ներում ներդրված կրեդիտի արժանահավատության ստուգման գործիքներ, այդ ուղղությամբ որևէ աշխատանք փորձագիտական խումբը չնկատեց: Սակայն ՈԱ կենտրոնը դիտարկել է ուսանողներին տրվող հանձնարարականներին ներկայացված ժամանակը և հասկացել, որ այն արժանահավատ չէ, ելքը տեսել են դրանց կրճատման և միջառարկայական հանձնարարականներ ձևավորելու մեջ:

ՈԱ կենտրոնը վարում է թափանցիկ աշխատառճ որդեգրելու քաղաքականություն: Փորձագիտական այցի ընթացքում փորձագետները համոզվեցին, որ այն չի թաքցնում բուհի թերությունները, ընդհակառակը, ոչ միայն պատրաստ է բաց քննարկել և բարձրաձայնել թույլ կողմերը, այլև փորձում է Արցախի Հանրապետության ներկայիս բարդ պայմաններում լուծում գտնել դրանց համար:

ՈԱ համակարգի աստիճանական ներդրմանն ուղղված հետևողական աշխատանքի շնորհիվ բուհի մի շարք գործընթացներում փորձագիտական խումբը նկատեց բարելավման միտումներ (ՄԿԾ փաթեթների ստեղծում, աշխատաշուկայի կարիքների հաշվառմամբ ՄԿԾ բարելավում, կարիքների վերհանում և կառավարման մարմիններին դրանց ներկայացում, փորձուսուցման ծրագրերի ստեղծում և արդյունավետության գնահատման մեխանիզմի ներդնում): ՆՈԱԿ-ը դարձել է բուհի մենեջմենթի կարևոր մաս, ինչը նպաստելու է բուհի կառավարման համակարգի բարելավմանը: ՈԱ կենտրոնը որդեգրել է ՊԻԳԲ շրջափուլը բոլոր գործընթացներում տարածելու և որակի կառավարման համակարգի ներդրման մոտեցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Հաշվի առնելով, որ ՄՄՀ-ում մշակվել է որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, ՈԱ համակարգն ունի որոշակի ռեսուրսներ իր առջև դրված խնդիրներն իրագործելու համար, ՈԱ կառույցը ներգրավում է ներքին և արտաքին շահակիցների ՈԱ գործընթացներում, մեծապես ապահովում է գործունեության թափանցիկությունը ներքին և որոշ չափով՝ արտաքին շահակիցների համար, վերանայվել են ՈԱ մի շարք մեխանիզմներ և գործիքներ և ՈԱ համակարգը նպաստում է ՄՄՀ բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՄՀ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Բուհի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատվում է բավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Լիլիթ Բաղալյան
Փորձագիտական խմբի ղեկավար
18 հուլիսի 2022 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Լիլիթ Բաղալյան՝ 1992-1997 թթ. սովորել է Երևանի պետական լեզվաբանական համալսարան /նախկին՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտ/ Ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետում: 2008 թ.-ի սեպտեմբերին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն /«Անգլերենի «ավերման» բայերի բառակազմական հնարավորությունները՝ հայերենի զուգադրությամբ» թեմայով/ և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1997-2019 թթ. աշխատել է Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Անգլերենի ամբիոնիում որպես դոցենտ: 2019 թ. դեկտեմբերից աշխատում է Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնում որպես ամբիոնի վարիչ: Անցել է ՈԱԱԿ վերապատրաստումները: ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբում փորձագիտական այցեր է կատարել հանրապետության մի շարք բուհեր:

Ինա Պոմորինա՝ 1999թ.-ին ավարտել է Լենինգրադի Ֆինանսների և տնտեսագիտության ինստիտուտի և ԱՆգլիայի Արևմուտքի համալսարանի մագիստրատուրան: 1984 թ.-ին ստացել է տնտեսագիտության ոլորտում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1976-1995 թթ .ին դասախոսել է Լենինգրադի Ֆինանսների և տնտեսագիտության համալսարանում, 2000-2013 թթ.-ին՝ Բրիստոլի համալսարանի հետազոտող, այնուհետև՝ ավագ հետազոտող է եղել, 2013 թ.-ից դասախոսում է Մեծ Բրիտանիայի Բաթ Սպա համալսարանում: Անդամակցում է մի շարք միջազգային գործակալությունների և ասոցիացիաների, մի շարք գիտական հոդվածների և հետազոտությունների հեղինակ և համահեղինակ է:

Լիլիթ Զաքարյան: 1988 թ.-ին ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը, ստանալով պատմության և սովետական իրավունքի ուսուցչի դիպլոմավորված մասնագետի որակավորում: 1989- 1992թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1993 թ.-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2008 թ.-ին՝ պատմություն մասնագիտության դոցենտի գիտական կոչում: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է Հայաստանում քաղաքական համակարգի փոխակերպմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, քաղաքականության գենդերային տեսանկյուններին վերաբերվող թեմաները: Դասավանդել է Հյուսիսային համալսարանում, Խ.Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական համալսարանում, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում: Հյուսիսային համալսարանում եղել է Իրավաբանության և լրագրության դեպարտամենտի դեկան, Լրագրության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, Ուսումնական վարչության պետ, Որակի ապահովման վարչության պետ: Հյուսիսային համալսարանում 2009-

2010 թթ. մասնակցել է ՌԱԱԿ-ի կազմակերպած ծրագրային փորձնական հավատարմագրման աշխատանքներին, 2012-2013 թթ.՝ ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրմանը: 2015-2020թթ. աշխատել է ՌԱԱԿ-ում որպես Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետ: 2021թ. մինչ այժմ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրենն է:

Մարիամ Գևորգյան՝ 2013թ.-ին ընդունվել է Ֆրանսիայի Բուրգունդիայի համալսարանի /Laboratoire Interdisciplinaire Carnot de Bourgogne, ICB uB/ և ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի համաղեկավարությամբ ասպիրանտուրա, Boursière Gouvernement Français, thèse cotutelle internationale: 2016թ.-ին ՀՀ-ում ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու գիտական աստիճան, ապա Ֆրանսիայում ստացել է ֆիզիկայի ոլորտում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 2013թ.-ից ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետազոտող է: 2015-2016թթ. Ֆրանսիայի Բուրգունդիայի համալսարանում դասախոսական աշխատանք մագիստրոսների հետ: 2017-2018թթ. Երևանի պետական համալսարանի տեսաբան ֆիզիկ: 2017թ.-ից Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի պետ: 2018թ.-ից ՌԱԱԿ փորձագետ: 2020թ.-ից դասախոսում է անգլերեն լեզվով ֆիզիկա Հայաստանում Ֆրանսիական համալսարանում և Երևանի Գլաձոր համալասրանում: 2012թ.-ից Օպտիկայի և ֆոտոնիկայի միջազգային կազմակերպության SPIE, 2013թ.-ից ՀՀ ԳԱԱ ՖՀԻ ինտեգրումը Եվրոպական հետազոտությանը IPERA միության անդամ է: Մի շարք գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է: Ունի տպագրված 3 գիրք, միջազգային դրամաշնորհային ծրագրեր:

Ալլա Սարգսյան՝ Գավառի պետական համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսներ բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի է: Հեղինակել է 6 հոդված: 2019-2020 թթ. «ՀՀ լավագույն ուսանող» մրցույթում հասարակագիտության ոլորտում զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը: 2020թ.-ին մասնակցել է ՌԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանողփորձագետների պատրաստման դասընթացին: Որպես ուսանող-փորձագետ ընդգրկվել է ՌԱԱԿ-ի փորձագիտական խմբերում և մասնակցել հավատարմագրման գործընթացներին

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

02.05.2022–05.05.2022թ.

Join Zoom Meeting
https://us02web.zoom.us/j/83692293681?pwd=WHVNSzNRNlB3NG03NlUzdVRrb25QUT09

Meeting ID: 836 9229 3681
Passcode: 745706

	02.05.2022թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ՄՄՀ ռեկտորի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում պրոռեկտորի և դեկանների հետ	11:30	12:30	60 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ և ՈԻԳԸ ներկայացուցիչների հետ	12:40	13:30	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:50	15:50	60 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ	16:00	17:00	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	18:30	80 րոպե

	03.05.2022թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Դասալսումներ	09:00	09:30	30 րոպե
2.	Հանդիպում Հիմնադիրների խորհդի անդամների հետ	09:30	10:20	50 րոպե
3.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:30	11:30	60 րոպե
4.	Հանդիպում հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:40	12:40	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
6.	Դասալսումներ	14:00	14:50	50 րոպե
7.	Հանդիպում առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների հետ (10-12 հոգի)	15:00	16:00	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:10	18:00	110 րոպե

	04.05.2022թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում «Իրավագիտություն» ՄԿԾ պատասխանատուի/ների հետ	Հանդիպում «Կովկասագիտություն» ՄԿԾ պատասխանատուի/ների հետ	Հանդիպում «Անգլ. լեզու և գրականություն »ՄԿԾ պատասխանատուի/ների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում «Իրավագիտություն» ՄԿԾ դասախոսների հետ	Հանդիպում «Կովկասագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Անգլերեն լեզու և գրականություն » մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում «Իրավագիտություն» մասնագիտության ուսանողների հետ	Հանդիպում «Կովկասագիտություն» մասնագիտության ուսանողների	Հանդիպում « Անգլերեն լեզու և գրականություն » մասնագիտության ուսանողների	11:45	12:45	60 րոպե
4.	Հանդիպում տտորաբաժանումների ղեկավարների հետ (Ուսումնական մաս, Տնտեսական բաժին, Կադրերի բաժին, Կարիերայի կենտրոն, Տեղեկատվական բաժին, գրադարան)			13:00	14:00	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			14:15	15:15	60 րոպե
6.	Բաց հանդիպում			15:30	16:10	40 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:15	18:15	160 րոպե

	05.05.2022թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում Որակի ներքին ապահովման ներկայացուցիչների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:40	12:50	70 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	17:20	210 րոպե
6.	Հանդիպում ՄՄՀ ռեկտորի և ղեկավար անձնակազմի հետ, այցի ամփոփում	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Գործող իրավիճակի SWOT վերլուծություն:	1
2.	Հետադարձ կապը, ՊԻԳԲ-ը շրջափուլը հաստատող փաստաթղթեր:	1
3.	ԳԽ արձանագրություններ, Ֆակուլտետային խորհուրդների արձանագրություններ, Ուսխորհրդի նիստերի արձանագրություններ:	2
4.	Փաստաթղթավորված ընթացակարգ «Բարձրագույն կրթության ուսումնական գործընթացի նախաօատրաստում>>	2
5.	Ֆակուլտետի և ամբիոնների տարեկան պլաններ	2
6.	Աշխատաշուկայի վերլուծության օրինակ:	2
7.	Ամբիոնի հաշվետվություն ՄԿԾ-ի արդյունավետության վերլուծությամբ	2
8.	Նյութի շաբաթական ներկայացվածությամբ առարկայական նկարագրերի նմուշներ	3
9.	Բենչմարքինգի փաստաթուղթ, Բենչմարքինգի հիմքեր:	3
10.	Կուրսային և դիպլոմային աշխատաքներ /այդ թվում՝ անհատական և ազատ ունկնդիրների/:	3
11.	Ներկայացված կրթական ծրագրերի հին և նոր օրինակներ:	3
12.	Դասամատյաններ	3
13.	Ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրություններ	3
14.	Ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ	3
15.	Ուսանողների կատարած ինքնուրույն աշխատանքների նմուշներ	3
16.	ՈԻԳԸ գործունեության հաշվետվություն: ՈԻԽ հաշվետվություններ:	4,6
17.	ՈԻսանողների հարցումների արդյունքները վերլուծող փաստաթուղթ:	4
18.	ՈԻսանողների գիտական աշխատանքների ցանկ:	4,6
19.	ՈԻսանողների հետ համատեղ հոդվածների ցանկ	4,6
20.	Դասախոսների վարկանիշավորման տարեվերջյան տվյալները:	5
21.	Անհատական պլանի օրինակներ	5

22.	Լրացված հարցաթերթիկի օրինակներ	5
23.	Դասալսումների եզրակացությունների օրինակներ:	5
24.	Ամբիոնների տարեկան պլաններ, վերապատրաստման արդյունավետության գնահատումներ:	5
25.	Նմուշներ՝ «Դասախոսի ինքնավերլուծության», «Ամբիոնի վարիչի հաշվետվության» ձևաթղթերով ինչպես նաև ՆՈԱԿ-ի կողմից իրականացվող դասախոսի գնահատման անանուն-առցանց հարցումների տվյալներ:	5
26.	Դասախոսի պորտֆոլիո /CV, վերապատրաստման վկայականներ. ինքնավերլուծություն, առարկայական նկարագիր/	5
27.	Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ:	6
28.	Ռեսուրսների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների վերլուծություն:	7
29.	Փորձուսուցման արտադրական ծրագրերի ստեղծման և գնահատման գործավարություն	3,10
30.	<<Սոցիալական աշխատանք>> մագիստրոսական ծրագրի ստեղծման հիմքերը	10
31.	Դասախոսների գնահատման հարցաշար:	10
32.	ՆՈԱԿ տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	10
33.	Ներկայացնել հիմքեր իրականացված միջոցառումների ներքին գնահատման արդյունքում վերհանված խնդիրները ստացել են իրենց լուծումները:	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. ամբիոններ, ստորաբաժանումներ
2. համակարգչային լսարան,
3. կրիմինալիստիկայի կաբինետ,
4. օտար լեզվի լսարան,
5. գրագարան, ընթերցասրահ,
6. Կովկասագիտության կենտրոն,
7. Բուժկետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱրՀ- Արցախի Հանրապետություն
ՄՄՀ- Մեսրոպ Մաշտոց համալսարան
ԼՂՀ- Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ՌԴ- Ռուսաստանի դաշնություն
ՈԱԿ- ներքին որակի ապահովման կեհտրոն
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԾ- որակավորումների ազգային շրջանակ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՈՒՕ- ուսումնաօժանդակ
ՈՒԳԸ- ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ- ուսանողական խորհուրդ
ԿԽՄԿ-Կարմիր խաչի միջազգային կոմիտե
ԶԼՄ - զանգվածային լրատվա միջոցներ
ՊԻԳԲ – պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
ԻՎ- ինքնավերլուծություն